Ի. ՍՏԱԼԻՆ

ՀԱՄ. Կ. Կ. (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

XIV ԿՈՒՍ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐ...
ԵՐԵ...

Ի. ՍՏԱԼԻՆ

3КП2
И85
338.92(47)
3КП1-10
3972

ՀԱՄ. Կ. Կ. (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

XIV-Դ ԿՈՒՍ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1926

№ 391 [illegible] 738 թ. Տիրաժ 2000

Պետհրատի առաջին տպարան, Ալեքսանդրապոլ

Ընկերներ, վերջին յերկու շաբաթվա ընթացքում դուք հնարավորություն ունեցաք լսելու Կենտկոմի մի շարք անդամների և Պոլիտբյուրոյի անդամների ընդարձակ, հիմնականում անպայման ճիշտ զեկուցումները Կենտկոմի գործունեության մասին XIII-ից մինչև XIV համագումարը։ Յես կարծում եմ, հազիվ թե միտք կա կրկնել այդ զեկուցումները։ Ինձ թվում ե, վոր այդ հանգամանքը թեթևացնում ե իմ գործը տվյալ մոմենտում և, այդ նկատի ունենալով, յես նպատակահարմար կգտնեյի սահմանափակվել առաջադրելով մեր կուսակցության Կենտկոմի XIII համագումարից մինչև XIV համագումարն ունեցած գործունեության հարցերը։

Կենտկոմի զեկուցումը սովորաբար սկսվում ե արտաքին կացությունից։ Յես այդ սովորությունը չեմ խախտի։ Յես ել կսկսեմ արտաքին կացությունից։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ.

Այս ժամանակաշրջանի արտաքին հարաբերությունների բոլոր անցքերը թափանցող և նրանց լուծում տվող հիմնական ու նոր յերևույթն այն ե, վոր մեր, այսինքն կառուցվող սոցիալիզմի յերկրի և կապիտալիստական աշխարհին պատկանող յերկրների միջև հաստատվել ե ուժերի ժամանակավոր մի վորոշ հավասարակշռություն,—մի հավասարակշռություն, վորով վորոշվում ե «խաղաղ կենակցության» ընթացիկ շրջանը խորհրդային յերկրի և կապիտալիզմի յերկրների միջև։ Այն, ինչ վոր մենք մի ժամանակ պատերազմից հետո յեղած կարճատև շունչ առնելու միջոց եյինք համարում, վերածվեց շունչ առնելու մի ամբողջ շրջանի։

Այստեղից ծագեց ուժերի վորոշ հավասարակշռությունը և «խաղաղ կենակցության» մի վորոշ շրջան՝ բուրժուազիայի աշխարհի և պրոլետարիատի աշխարհի միջև։

Այս բոլորի հիմքում դրված ե ներքին թուլությունը, համաշխարհային կապիտալիզմի թուլությունն ու անզորությունը, մեկ կողմից և մյուս կողմից բանվորների հեղափոխական շարժման աճումն ընդհանրապես, մանավանդ ուժերի աճումը մեզ մոտ, Խորհուրդների յերկրում։ Վո՞րն ե կապիտալիստական աշխարհի այդ թուլության պատճառը։—Այդ թուլության պատճառը կապիտալիզմի համար անհաղթահարելի այն ներհակություններն են, վորոնց շրջանակներում ձևավորվում ե ամբողջ միջազգային կացությունը—ներհակություններ, վորոնք

անհաղթահարելի յեն կապիտալիստական յերկրների համար և վորոնք կարող են հաղթահարվել միայն Արևմուտքի պրոլետարական հեղափոխության զարգացման ընթացքում։

Վորո՞նք են այդ ներհակությունները։

Դրանց կարելի յե բաժանել հինգ խմբի։

Առաջին խմբի ներհակություններն—այդ կապիտալիստական յերկրների պրոլետարիատի և բուրժուազիայի միջի ներհակություններն են։

Յերկրորդ խմբի ներհակություններն—այդ իմպերիալիզմի ու գաղութների և կախումն ունեցող յերկրների ազատագրական շարժման միջի ներհակություններն են։

Յերրորդ խմբի ներհակություններն—այդ այն ներհակություններն են, վոր զարգանում են և չեն կարող չզարգանալ իմպերիալիստական պատերազմում հաղթանակած պետությունների և պարտված պետությունների միջև։

Չորրորդ խմբի ներհակություններն—այդ այն ներհակություններն են, վորոնք զարգանում են և չեն կարող չզարգանալ հենց իրենց հաղթանակած պետությունների միջև։

Յեվ հինգերորդ խմբի ներհակություններն—այդ այն ներհակություններն են, վոր զարգանում են Խորհուրդների յերկրի և ամբողջությամբ առած կապիտալիզմի յերկրների միջև։

Ահա ներհակությունների այն հինգ հիմնական խմբերը, վորոնց շրջանակների մեջ ընթանում է մեր միջազգային կացության զարգացումը։

Ընկերներ, յեթե համառոտակի չքննենք այդ ներհակությունների բնույթն ու աճումը, անկարող կլինենք ըմբռնել մեր յերկրի այժմյան միջազգային կացությունը։ Ուստի այդ ներհակությունների համառոտ տեսությունն անխուսափելիորեն պետք է կազմի իմ հաշվետվության մի մասը։

1. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՍՏԱԲԻԼԻԶԱՑԻԱՆ.

Այսպես սկսենք առաջին կարգի ներհակություններից՝ կապիտալիզմի յերկրների պրոլետարիատի և բուրժուազիայի միջի ներհակություններից։ Այս ասպարեզում հիմնական փաստերը կարելի յե վերածել հետևյալին.

Առաջին. Կապիտալիզմը դուրս է գալիս կամ արդեն իսկ դուրս է յեկել արդյունաբերության, առևտրի և ֆինանսների ասպարեզում տիրող այն քաոսից, վոր վրա հասավ պատերազմից հետո։ Այս բանին կուսակցությունը տվեց կապիտալիզմի մասնակի կամ ժամանակավոր ստաբիլիզացիա (կայունացում) անունը։ Այդ ինչ է նշանակում.—Այդ

նշանակում է, որ կապիտալիստական յերկրների արդյունաբերությունն ու առևտուրը, վորոնք մի ժամանակ խիստ անկման վիճակ եյին ապրում հետ-պատերազմյան կրիզիսի շրջանում (յես նկատի ունեմ 1919—20 թիվը), սկսել են առաջադիմել, իսկ բուրժուազիայի քաղաքական իշխանությունն սկսել է քիչ-շատ ամրանալ։ Այդ նշանակում է՝ կապիտալիզմը ժամանակավորապես դուրս է յեկել այն քաոսից, վորի մեջ նա ընկել եր պատերազմից հետո։

Ահա թվեր, յեթե առնենք Յեվրոպան։

Արդյունաբերությունը Յեվրոպայի բոլոր առաջավոր յերկրներում 1919 թվի համեմատությամբ կամ առաջադիմում է, աճում, տեղ-տեղ նախապատերազմյան չափերի 80—90 տոկոսին հասնելով, կամ կանգնած է միևնույն նորմայի վրա։ Միայն Անգլիայում է, վոր արդյունաբերության վորոշ ճյուղեր դեռևս չեն ուղղվել։

Հիմնականում, յեթե վերցնենք Յեվրոպան ամբողջապես, կտեսնենք, վոր արտադրությունն ու առևտուրն առաջ են շարժվում, սակայն դեռևս չեն հասնում մինչ-պատերազմյան նորմային։ Յեթե վերցնենք հացի արտադրությունը, կտեսնենք, վոր Անգլիայում արտադրվում է մինչ-պատերազմյան նորմայի 80—85 տոկոսը, Ֆրանսիայում՝ 83 տոկոսը, Գերմանիայում՝ 68 տոկ.։ Շատ դանդաղ է բարձրանում հացի արտադրությունը Գերմանիայում։ Ֆրանսիայում հացի արտադրությունը չի բարձրանում։ Անգլիայում ընկնում է։ Այս ամենի հետևանքով գոյացող բացը ծածկվում է Ամերիկայից ներմուծվող հացով։

Ածխի արդյունահանությունը 1925 թվին կազմում եր—Անգլիայում՝ մինչ-պատերազմյան նորմայի 90 տոկոսը, Ֆրանսիայում՝ մինչ-պատերազմյան նորմայի 107 տոկ., Գերմանիայում՝ 93 տոկոսը։

Պողպատի արտադրությունն Անգլիայում կազմում է մինչ-պատերազմյան նորմայի 98 տոկոսը, Ֆրանսիայում՝ 102 տոկ., Գերմանիայում՝ 78%-ը։

Բամբակի սպառումն Անգլիայում հավասար է մինչ-պատերազմյան նորմայի 82%-ին, Ֆրանսիայում՝ 83%-ին, Գերմանիայում՝ 81%-ին։ Արտաքին առևտուրն Անգլիայում ունի պասսիվ սալդո և հասնում է մինչ-պատերազմյանի վերաբերմամբ 94%, Գերմանիայում քիչ բարձրանում է 1919 թ. համեմատությամբ և նույնպես ունի պասսիվ սալդո, Ֆրանսիայում ներկայումս բարձր է մինչ-պատերազմյան նորմայից—102%։ Յեվրոպական առևտրի մակարդակն ամբողջապես, յեթե վերցնենք 1921 թիվը, կազմում եր մինչ-պատերազմյան նորմայի 63%-ը, իսկ ներկայումս, 1925 թվին, առևտուրը հասել է այդ նույն նորմայի 82 տոկոսին։

Այդ պետությունների բյուջեները մի կերպ հավասարակշռվում են, բայց հավասարակշռվում են բնակչությանը հարկերով ծանրաբեռնելու գնով։

Վալյուտայի տատանումներն առանձին յերկրներում շարունակվում են, բայց ընդհանրապես նախկին քաոսը չկա։

Ընդհանուր պատկերն այն է, որ Յեվրոպայի հետ-պատերազմյան տնտեսական կրիզիսն անցնում է, արտադրությունն ու առևտուրը մոտենում են մինչ-պատերազմյան նորմային։ Յեվրոպական պետություններից մեկը, Ֆրանսիան, առևտրի ասպարեզում և արտադրության ասպարեզում արդեն անցել է մինչ-պատերազմյան նորմայից, իսկ Յեվրոպայի մյուս յերկիրը—խոսքս Անգլիայի մասին է—դեռևս շարունակում է մնալ նույն կամ համարյա թե նույն մակարդակի վրա, չհասնելով մինչ-պատերազմյան նորմային։

Յերկրորդ. Հետ-պատերազմյան կրիզիսի տարիներին Յեվրոպայում մեր դիտած հեղափոխության ալիքի մակընթացության շրջանի փոխարեն ներկայումս մենք տեսնում ենք հեղափոխության ալիքի տեղատվության շրջանը։ Այս նշանակում է, որ պրոլետարիատի կողմից այսօրվանից մինչև վաղը իշխանությունը վերցնելու, իշխանությունը գրավելու հարցը ներկայումս Յեվրոպայում օրակարգի մեջ չի դրված։ Հեղափոխության ալիքի բարձրացման այն շրջանը, յերբ շարժումն առաջ է հորդում, վեր բարձրանում, իսկ կուսակցությունն իր լոզունգներով չի կարողանում հասնել շարժման յետևից, ինչպես պատահեց, օրինակ, մեր յերկրում 1905 կամ 1917 թվին—վերելքի այդ շրջանը դեռ առաջներումն է։ Բայց այդ դեռ չկա. այլ կա ժամանակավոր տեղատվության շրջան, պրոլետարիատի ուժերի կուտակման շրջան, որը հսկայական արդյունքներ է տալիս այն տեսակետից, որ նշվում են շարժման նոր ձևեր, որ ներկայումս ուժեղանում է պրոֆմիության միասնականության պայքարի դրոշի տակ ընթացող շարժումը, որն ունի հեղափոխական խորին նշանակություն,—որ Արևմուտքի և Խորհրդային Միության բանվորական շարժման միջև կապ է ստեղծվում ու ամրապնդվում, որ ձախացումն է տեղի ունենում, օրինակ, անգլիական բանվորական շարժման մեջ,—որ Ամստերդամն անկման շրջան է ապրում, նրանում խորը ճեղք է առաջանում և այլն, և այլն։ Կրկնում եմ, մենք ուժերի կուտակման շրջան ենք ապրում, որը հսկայական նշանակություն ունի ապագա հեղափոխական յելույթների համար։ Սա այն շրջանն է, յերբ կոմունիստական շարժման լոզունգն է դառնում՝ նվաճել պրոլետարիատի մասսայական կազմակերպությունները (արհմիությունները և այլն) ու հեռացնել դիրքերից ս.-դ. լիդերներին, ինչպես արեցինք մենք 1911-1912 թվերին։

Յերրորդ. Կապիտալիստական աշխարհի ֆինանսական հզորության կենտրոնը, ամբողջ աշխարհի ֆինանսական շահագործման կենտրոնը Յեվրոպայից փոխադրվել է Ամերիկա։ Առաջ յերկրագնդի ֆինանսական շահագործման կենտրոն եյին հանդիսանում Ֆրանսիան, Գերմա-

նիան և Անգլիան։ Այժմ այլևս առանց հատուկ վերապահումների այսպիսի բան չի կարելի ասել։ Ներկայումս յերկրագնդի ֆինանսական շահագործման կենտրոն են հանդիսանում գլխավորապես Հյուսիսա-Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Այս պետությունն աճում է բոլոր կողմերով՝ թե արտադրական, թե առևտրի և թե կուտակման տեսակետից։

Բերեմ միքանի թվեր։ Հացի արտադրությունը Հյուսիսային Ամերիկայում արդեն անցել է մինչ-պատերազմյան չափից. Նա այժմ հավասար է մինչ-պատերազմյանի 104 տոկոսին։ Ածխի արդյունահանումը հասել է մինչ-պատերազմյան նորմայի 90 տոկոսին, վորի պակասը փոխհատուցվում է նավթի արդյունահանության հսկայական աճումով։ Իսկ պետք է ասել, վոր Ամերիկայի նավթի արդյունահանությունը հավասար է նավթի համաշխարհային արդյունահանության 70 տոկոսին։ Պողպատի արտադրությունը հասել է 147 տոկոսի, մինչ-պատերազմյան նորմայից 47 տոկոսով բարձր։ Ժողովրդական յեկամուտը հավասար է մինչ-պատերազմյանի 130 տոկոսին, մինչ-պատերազմյան նորմայից գերազանցել է 30 տոկոսով։ Արտաքին առևտուրը հասել է մինչ-պատերազմյան նորմայի 143 տոկոսին, հսկայական ակտիվ սալդո տալով ի հաշիվ Յեվրոպական յերկրների։ Վոսկու 9 միլիարդի համաշխարհային պաշարից մոտ 5 միլիարդն Ամերիկայում է գտնվում։ Հյուս. Ամերիկայի Միացյալ Նահանգների վալյուտան ամենակայունն է բոլոր վալյուտաների մեջ։ Ինչ վերաբերում է կապիտալների արտահանությանը, պետք է ասել, վոր Ներկայումս Ամերիկան համարյա թե միակ հզորագույն յերկիրն է, վոր քանի գնում, այնքան ավելի աճող հարաբերությամբ կապիտալ է արտահանում։ Ֆրանսիան ու Գերմանիան խիստ քիչ են արտահանում, Անգլիան նույնպես նշանակալի չափերով կրճատել է իր կապիտալների արտահանումը։

Չորրորդ. Յեվրոպական կապիտալիզմի ժամանակավոր ստաբիլիզացիան, վորի մասին յես վերը խոսեցի, ձեռք է բերված գլխավորապես ամերիկյան կապիտալի ոգնությամբ և Յեվրոպան ֆինանսապես Ամերիկային յենթարկելու գնով։ Այս բանն ապացուցելու համար բավական է բերել այն թվերը, վորոնք վերաբերում են Յեվրոպայի պետական պարտքին՝ Ամերիկային։ Այդ պարտքի գումարը հավասար է վոչ պակաս քան 26 միլիարդ ռուբլու։ Յես էլ չեմ խոսում յեվրոպական յերկրների մասնավոր պարտքերի մասին, այսինքն այն գումարների մասին, վոր Ամերիկան դրել է Յեվրոպայի ձեռնարկությունների մեջ, և վորոնք միքանի միլիարդի յեն հավասար։

Այս բոլորն ինչ են ասում։—Այն են ասում, վոր Յեվրոպան քիչ թե շատ սկսել է վոտքի կանգնել ի հաշիվ Ամերիկայից (մասամբ էլ

Անգլիայից) հոսող կապիտալի։ Ի՞նչ գնով։—Յեվրոպան ֆինանսապես Ամերիկային յենթարկելու գնով։

Հինգերորդ. Վորպեսզի կարողանա իր պարտքերի տոկոսներն, ինչպես և այդ պարտքերը վճարելու հնարավորություն ունենալ, Յեվրոպան հարկադրված է ծանրացնել բնակչության հարկերի բեռը, վատացնել բանվորների դրությունը։ Հենց այդ է, վոր ներկայումս կատարվում է Յեվրոպայի յերկրներում։ Այժմ իսկ, յերբ պարտքերի ու նրանց տոկոսների վճարումը դեռևս ինչպես հարկն է սկսված չէ,—Անգլիայում հարկային բեռի ծանրությունն աճել է և ժողովրդական յեկամուտի 11 տոկոսից (1913 թ.) 23 տոկոսի յե հասել, Ֆրանսիայում ազգային յեկամուտի 13%-ից մինչև 21%, Իտալիայում—13-ից մինչև 19%-ի։

Ինչ ասել կուզի, վոր ամենամոտիկ ապագայում հարկային բեռի ծանրությունն ավելի ևս կաճի։ Այդ պատճառով Յեվրոպայի աշխատավորության և ամենից առաջ բանվոր դասակարգի նյութական դրությունն անպատճառ վատանալու յե, իսկ բանվոր դասակարգն էլ անխուսափելիորեն հեղափոխականանալու։ Այդ հեղափոխականացման նշաններն արդեն կան ինչպես Անգլիայում, այնպես էլ Յեվրոպայի մյուս յերկրներում։ Յես նկատի ունեմ Յեվրոպայի բանվոր դասակարգի վորոշ ձախացումը։

Սրանք են այն հիմնական փաստերը, վորոնք վկայում են, վոր այն ստաբիլիզացիան, վորին հասել է Յեվրոպան, փտած հողի վրա բուսած փտած ստաբիլիզացիա յե։ Շատ կարող է պատահել—յես այս բանը բացառելի չեմ համարում,—վոր արտադրությունն ու առևտուրը Յեվրոպայում կարողանան հասնել նաև մինչ-պատերազմյան աստիճանին։ Բայց այդ դեռևս չի նշանակի, թե կապիտալիզմը դրանով կհասնի կայունության, վոր նա ուներ պատերազմից առաջ։ Այդպիսի կայունության նա այլևս յերբեք չի հասնի։ Ինչու։—Նախ և առաջ այն պատճառով, վոր Յեվրոպան իր ժամանակավոր ստաբիլիզացիան գնել է ֆինանսապես Ամերիկային յենթարկվելու գնով, վորը տանում է դեպի հարկերի ծանրության հսկայական աճում, դեպի անխուսափելի վատացում բանվորների դրության և դեպի յեվրոպական յերկրների հեղափոխականացում։

Յերկրորդ, այն պատճառով, վոր կան մի ամբողջ շարք այլ պատճառներ, վորոնց մասին յես պիտի խոսեմ ներքևում, վորոնք այժմյան ստաբիլիզացիան դարձնում են անհաստատուն, անկայուն։

Ներհակությունների առաջին շարքի վերլուծության նկատմամբ իմ ասածի ընդհանուր յեզրակացությունն այն է, վոր աշխարհը ֆինանսապես շահագործող գլխավոր պետությունների թիվը նախապատերազմյան շրջանի համեմատությամբ ծայր աստիճան կրճատվել է։

Առաջ գլխավոր շահագործողներն էին Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, մասամբ Ամերիկան, այժմ դրանց թիվը ծայր աստիճան կրճատվել է։ Այժմ յերկրագնդի գլխավոր ֆինանսական շահագործողը և, հետևապես, գլխավոր պարտատերը Հյուսիսային Ամերիկան է և մասամբ էլ նրա ոգնական Անգլիան։ Այս դեռևս չի նշանակում, թե Յեվրոպան գաղութի դրության է հասել։ Յեվրոպական յերկրները, շարունակելով իրե՛նց գաղութների շահագործումը, այժմ իրենք են ընկել ֆինանսական կախման մեջ Ամերիկայի նկատմամբ, որի հետևանքով իրենց հերթին շահագործվում են և շահագործվելու յեն Ամերիկայի կողմից։ Այս տեսակետից ամբողջ աշխարհը ֆինանսապես շահագործող գլխավոր պետությունների թիվը կրճատվել, նվազագույնի յե հասել, մինչ շահագործվող պետությունների թիվը մեծացել է։ Յեվրոպական կապիտալիզմի այժմյան ստաբիլիզացիայի անկայունության և ներքին անդորրության պատճառներից մեկն էլ այս է։

2. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ, ԳԱՂՈՒԹՆԵՐ ՅԵՎ ԿԻՍԱԳԱՂՈՒԹՆԵՐ.

Անցնենք ներհակությունների յերկրորդ շարքին—իմպերիալիստական և գաղութային յերկրների միջի ներհակություններին։

Այս ասպարեզի հիմնական փաստերը սրանք են. արդյունաբերությունն ու պրոլետարիատը զարգացել ու աճել են գաղութներում, մանավանդ պատերազմի ժամանակ և պատերազմից հետո. ընդհանրապես բարձրացել է կուլտուրականությունն ու մասնավորապես աճել է ազգային ինտելլիգենցիան. գաղութներում աճել է ազգային հեղափոխական շարժումը և իմպերիալիզմի համաշխարհային տիրապետության կրիզիսը։ Ազատագրական պայքար է սկսվել Հնդկաստանում և Յեգիպտոսում ընդդեմ անգլիական իմպերիալիզմի. ազատագրական պատերազմ է բռնկել Սիրիայում և Մարոկկոյում ընդդեմ ֆրանսիական իմպերիալիզմի, ազատագրական պայքար Չինաստանում ընդդեմ անգլո-յապոնո-ամերիկյան իմպերիալիզմի և այլն. աճել է բանվորական շարժումը Հնդկաստանում, Չինաստանում, ինչպես և այդ յերկրների բանվոր դասակարգի դերն ազգային-հեղափոխական շարժման մեջ։

Այս ամենից հետևում է, որ մեծ պետությունները կանգնած են իրենց կարևորագույն թիկունքն, այսինքն գաղութները, կորցնելու վտանգի առաջ։ Կապիտալիզմի ստաբիլիզացիան այստեղ կաղում է յերկու ոտքով, որովհետև ճնշված յերկրների հեղափոխական շարժումը քայլ առ քայլ բարձրանալով, տեղ-տեղ սկսում է ընդունել իմպերիալիզմի դեմ մղվող բացարձակ պատերազմի բնույթ (Մարոկկո, Սիրիա, Չինաստան), իսկ իմպերիալիզմն, ակներև է, որ չի կարողանում սանձահարել «իր» գաղութներին։

Ասում են—մանավանդ բուրժուական գրողներն են ասում,— որ

գաղութների կրիզիսի ուժեղանալու պատճառը բալշևիկներն են։ Յես պետք է ասեմ, որ չափազանց մեծ պատիվ են անում մեզ, այդ բանով մեզ մեղադրելով։ Դժբախտաբար մենք դեռևս այնքան ուժեղ չենք, որ անմիջական կերպով օգնենք բոլոր գաղութային յերկրներին նրանց ազատագրության գործում։ Պատճառները պետք է փնտռել ավելի խոր։ Պատճառն, ի միջի այլոց, այն է, որ Յեվրոպայի պետությունները պարտավոր են Ամերիկային տոկոսներ վճարել, որի համար հարկադրված են ուժեղացնել հարստահարությունն ու շահագործումը գաղութներում ու կախում ունեցող յերկրներում, և այդ բանը չի կարող չառաջացնել այդ յերկրներում կրիզիսի ու հեղափոխական շարժման ուժեղացում։

Այս ամենը վկայում է, որ այս ասպարեզում համաշխարհային իմպերիալիզմի գործն ավելի քան վատ վիճակում է։ Յեթե ներհակությունների առաջին շարքի ասպարեզում Յեվրոպայի կապիտալիզմը մասնակի կերպով ստաբիլիզացիայի յե յենթարկվել, և պրոլետարիատի կողմից այսօրվանից մինչև վաղը իշխանությունը վերցնելու հարցն առայժմ չի դրված, ապա գաղութներում կրիզիսը հասել է բարձրագույն կետին, և իմպերիալիստներին մի շարք գաղութներից արտաքսելու հարցը հերթի յե դրված։

3. ՀԱՂԹՈՂՆԵՐՆ ՈՒ ՀԱՂԹՎԱԾՆԵՐԸ.

Անցնում եմ ներհակությունների յերրորդ շարքին, որոնք գոյություն ունեն հաղթող և հաղթված յերկրների միջև։

Այս ասպարեզի հիմնական փաստերը սրանք են։ Առաջին. Վերսալի հաշտությունից հետո Յեվրոպան յերկու բանակի բաժանվեց — հաղթվածների բանակի (Գերմանիա, Ավստրիա և այլ յերկրներ) և հաղթողների բանակի (Անտանտա, պլյուս Ամերիկա)։

Յերկրորդ, անհրաժեշտ է արձանագրել այն հանգամանքը, որ հաղթողները, որոնք առաջ ուզում եյին զորագրավման (օկկուպացիա) միջոցով խեղդել հաղթված յերկրներին (յես ձեզ հիշեցնում եմ Ռուրը), հրաժարվեցին այդ միջոցից և անցան այլ մեթոդի՝ ֆինանսական շահագործման մեթոդի, որին յենթարկեցին առաջին հերթին Գերմանիային և յերկրորդ հերթին Ավստրիային։ Այս նոր մեթոդի արտահայտությունն է Դաուեսի ծրագիրը, որի բացասական արդյունքները միայն այժմ են յերևան գալիս։

Յերրորդ, Լոկարնոյի կոնֆերենցիան, որն իբր թե վերացրեց հաղթողների և հաղթվածների միջև գոյություն ունեցող բոլոր ներհակությունները. բայց իսկապես, չնայած այդ հարցի շուրջը բարձրացրած աղմուկին, փաստորեն ոչինչ, ոչ մի ներհակություն չվերացրեց, այլ միայն ավելի սրեց։

Դաուեսի պլանի իմաստն այն է, որ Գերմանիան պետք է վճարի Անտանտային ոչ ավել, ոչ պակաս, քան 130 միլիարդ ոսկի մարկ տարբեր ժամկետներում։ Դաուեսի ծրագրի արդյունքներն արդեն յերևան են գալիս նրանով, որ Գերմանիայի տնտեսական դրությունը վատանում է, մի ամբողջ շարք ձեռնարկություններ սնանկանում են, գործազրկությունն աճում է և այլն։ Դաուեսի պլանը, որը կազմված է Ամերիկայում, այսպես է. Յեվրոպան վճարում է իր պետական պարտքերն Ամերիկային ի հաշիվ Գերմանիայի, որը պարտավոր է Յեվրոպային ռեպարացիաներ վճարել, բայց քանի որ Գերմանիան այդ ամբողջ գումարն անկարող է դատարկ տեղից ստանալ, ապա Գերմանիան պետք է ստանա մի շարք դեռևս ոչ մի կապիտալիստական յերկրի կողմից չգրավված ազատ շուկաներ, որտեղից նա պետք է ստանա նոր ուժեր և արյուն, որպեսզի կարողանա կատարել ռեպարացիոն վճարումները։ Մի շարք աննշան շուկաներից զատ, Ամերիկան նկատի ունի մեր ռուսական շուկաները։ Այդ շուկաներն ըստ Դաուեսի պլանի, պետք է տրվեն Գերմանիային, որպեսզի նա կարողանա որոշ հյութեր քամել այդտեղից և կատարել իր ռեպարացիոն վճարումները Յեվրոպային, որն, իր հերթին, պետք է վճարի Ամերիկային պետական պարտքերի գծով։ Այս ամբողջ ծրագիրը լավ է կառուցված, բայց նա կառուցվել է առանց տիրոջ մասնակցության, որովհետև գերման ժողովրդի համար այդ նշանակում է կրկնակի ճնշում — գերման բուրժուազիայի ճնշում՝ Գերմանիայի պրոլետարիատի նկատմամբ և ճնշում օտարերկրյա կապիտալի՝ ամբողջ գերման ժողովրդի նկատմամբ։ Ասել, թե այս կրկնակի ճնշումն ապարդյուն կանցնի գերման ժողովրդի համար, ոչ մի կերպ չի կարելի։ Այս պատճառով յես կարծում եմ, որ Դաուեսի ծրագրի այս մասը հղի յե անխուսափելի հեղափոխությամբ Գերմանիայում։ Դաուեսի պլանը կազմված է Գերմանիայի խաղաղության համար, բայց նա Գերմանիային անխուսափելիորեն հեղափոխության է հասցնելու։ Այդ պլանի յերկրորդ մասը, որտեղ ասված է, որ Գերմանիան դրամ պետք է ձեռք բերի Յեվրոպայի համար ի հաշիվ ռուսական շուկաների, նույնպես մի վճիռ է առանց տիրոջ գիտության։ Ինչու — Որովհետև մենք ամենևին չենք կամենում ագրար յերկիր դառնալ որևէ ուրիշ յերկրի, թեկուզ և Գերմանիայի համար։ Մենք ինքներս կարտադրենք մեքենաներ և արտադրության այլ միջոցներ։ Այս իսկ պատճառով հուսալ, թե մենք կհամաձայնվենք յերկիրը դարձնել ագրարային Գերմանիայի նկատմամբ — նշանակում է հույս դնել մի բանի վրա, առանց նրա տիրոջ կամքը հարցնելու։ Այս տեսակետից Դաուեսի պլանը կանգնած է կավե ոտների վրա։

Ահա թե ինչ է այդ պլանը։

Ինչ վերաբերում է Լոկարնոյին, պետք է ասել, որ այդ միայն

Վերսալի շարունակությունն է, և դրա նպատակը կարող է լինել այն, վոր պահպանի «ստատուս կվոն», ինչպես ասում են դիպլոմատիական լեզվով, այսինքն պահպանի գոյություն ունեցող դրությունը, ըստ վորի Գերմանիան պարտված յերկիր է, իսկ Անտանտան—հաղթող։ Լոկարնոյի կոնֆերենցիայով իրերի այդ դրությունն իրավաբանորեն հիմնավորվում է այն տեսակետից, վոր Գերմանիայի նոր սահմանները պահպանվում են հօգուտ Լեհաստանի, պահպանվում են հօգուտ Ֆրանսիայի, վոր Գերմանիան կորցնում է իր գաղութները և միաժամանակ վոտք ու ձեռքը կապած ու պրոկրուստյան մահիճ դրված լինելով հանդերձ, պետք է ձեռք առնի ամեն միջոց, վորպեսզի քամի այդ 130 միլիարդ վոսկի մարկը։ Կարծել, թե զարգացող և առաջ գնացող Գերմանիան կհաշտվի այս դրության հետ—նշանակում է հույսը դնել հրաշքի վրա։ Յեթե առաջ, ֆրանս-պրուսական պատերազմից հետո, Ելզաս-Լոթարինգիայի հարցը, այն ժամանակվա ներհակությունների հանգույցներից մեկը, իմպերիալիստական պատերազմի ամենալուրջ պատճառներից մեկը դարձավ, ինչո՞վ ենք յերաշխավորված, վոր Վերսալի հաշտությունը և նրա շարունակությունը՝ Լոկարնոն, վորոնք որինականացնում և իրավաբանորեն սրբագործում են Գերմանիայի զրկվելը Սիլեզիայից, Դանցիգի կորիդորից և Դանցիգից, Ուկրայնայի զրկվելը՝ Գալիցիայից և արևմտյան Վոլինից, Բելոռուսիայի զրկվելը—իր արևմտյան մասից, Լիտվայի զրկվելը—Վիլնայից և այլն—ինչ յերաշխիք կա, վոր այդ պայմանագիրը, վորը պատառ-պատառ է արել մի շարք պետություններ և ստեղծել ամբողջ շարք ներհակությունների հանգույցներ, չի արժանանա հին ֆրանս-պրուսական պայմանագրի բախտին, վորը ֆրանս-պրուսական պատերազմից հետո Ֆրանսիայից պոկեց Ելզաս-Լոթարինգիան։ Այդպիսի յերաշխիք չկա և չի կարող լինել։ Յեթե Դաուեսի ծրագիրը հղի յե հեղափոխությամբ Գերմանիայում, Լոկարնոն ել հղի յե նոր պատերազմով՝ Յեվրոպայում։

Անգլիական պահպանողականներն ուզում են թե «ստատուս կվո» պահպանել Գերմանիայի դեմ, թե ոգտագործել Գերմանիային ընդդեմ Խորհրդային Միության։ Արդյոք նրանց ցանկացածը շատ մեծ բան չե՞։

Խոսում են պացիֆիզմի մասին, խոսում են յեվրոպական պետությունների միջի խաղաղության մասին. Բրիանն ու Չեմբերլենը համբուրվում են, Շտրեզեմանը կոմպլիմենտներ է շռայլում Անգլիայի առաջ։ Այս բոլորը դատարկ բաներ են։ Յեվրոպայի պատմությունից մենք գիտենք, վոր ամեն անգամ, յերբ պայմանագրեր են կնքվել նոր պատերազմի համար ուժերն այս կամ այն կերպ դասավորելու մասին, այդ պայմանագրերին խաղաղության պայմանագիր անունն են տվել։ Ապագա պատերազմի տարրերը վորոշող պայմանագրեր են կնքվել, և

այդպիսի պայմանագրերի կնքմանը զուգորդել են հաշտության վերաբերյալ բարձրացրած կանչն ու աղաղակը։

Խաղաղության կեղծ յերգիչներ այդպիսի դեպքերում միշտ գտնըվել են։ Իմ հիշողության մեջ զարթնում են ֆրանս-պրուսական պատերազմին հաջորդող պատմաշրջանին վերաբերող փաստեր, յերբ Գերմանիան հաղթող եր դուրս յեկել, յերբ Ֆրանսիան պարտված եր, յերբ Բիսմարկն ամեն կերպ աշխատում եր պահպանել «ստատուս կվոն», այսինքն այն դրությունը, վոր ստեղծվել եր Ֆրանսիայի դեմ՝ Գերմանիայի վարած հաղթական պատերազմից հետո։ Այն ժամանակ Բիսմարկը խաղաղության կողմն եր, վորովհետև այդ խաղաղությունը Ֆրանսիայի նկատմամբ մի շարք արտոնություններ եր տալիս Գերմանիային։ Ֆրանսիան ել խաղաղության կողմնակից եր, գոնե սկզբում, քանի դեռ անհաջող պատերազմից հետո վոտքի չեր կանգնել։ Հենց այդ շրջանում, յերբ բոլորն ել խաղաղությունից եյին խոսում, իսկ կեղծ յերգիչները գովում եյին Բիսմարկի խաղաղ մտադրությունները, Գերմանիան և Ավստրիան կնքեցին մի պայմանագիր—ըստ ամենայնի խաղաղամիտ և միանգամայն խաղաղասիրական պայմանագիր,—վորը հետագայում գալիք իմպերիալիստական պատերազմի հիմքերից մեկը դարձավ։

Խոսքս վերաբերում ե 1879 թվին Ավստրիայի ու Գերմանիայի միջև կնքված պայմանագրին։ Ո՞ւմ դեմ եր ուղղված այդ պայմանագիրը։—Ռուսաստանի և Ֆրանսիայի դեմ։ Ի՞նչ եր գրված այդ պայմանագրում։—Լսեցեք... «Քանի վոր Գերմանիայի ու Ավստրիայի սերտ համագործակցությունը վոչ վոքի չի սպառնում և նպատակ ունի ամրապնդել խաղաղությունը Յեվրոպայում Բերլինի տրակտատով սահմանված հիմունքներով, ուստի և նորին մեծությունները, այսինքն յերկու թագավորներ, վորոշեցին կնքել դաշնակցային հաշտություն և փոխադարձ համաձայնություն» Դուք լսո՞ւմ եք։ Գերմանիայի և Ավստրիայի սերտ համագործակցություն **հանուն Յեվրոպայի խաղաղության**։ Այդ համաձայնությունը մեկնաբանվում եր վորպես խաղաղության միություն, մինչդեռ բոլոր պատմաբանները համակարծիք են, վոր այդ համաձայնությունն ուղղակի նախապատրաստումն եր 1914 թ. իմպերիալիստական պատերազմի։

Իբր թե Յեվրոպայում խաղաղություն հաստատելու, բայց փաստորեն Յեվրոպայում պատերազմ նախապատրաստելու նպատակով կնքված այդ համաձայնության հետևանք հանդիսացող մեկ ուրիշ համաձայնություն, 1891—1893 թ. Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև կընքած համաձայնագիրը—նույնպես խաղաղության եր վերաբերում—ուրիշ բան չեր։ Ի՞նչ եր գրված այս պայմանագրում։—Այն, վոր «Ֆրանսիան ու Ռուսաստանը խաղաղություն պահպանելու նույն ձգտումով տոգորված, յեկան հետևյալ համաձայնության»։

Իսկ թե ինչ եր այդ համաձայնությունը, մինչև վերջն ել բացե֊իբաց չասվեց այն ժամանակ։ Իսկ համաձայնագրի գաղտնի տեքստում ասված եր. պատերազմի դեպքում Ռուսաստանը պետք ե Գերմանիայի դեմ հանի 700,000 զինվոր, իսկ Ֆրանսիան (կարծեմ) 1.300,000 զինվոր։

Այս յերկու համաձայնություններն ել պաշտոնապես կոչվում եյին ամբողջ Յեվրոպայում խաղաղություն, բարեկամություն ու անդորրություն հաստատելու համար կնքվող պայմանագրեր։

Ի լրումն այդ ամենի, վեց տարի հետո, 1899 թվին, գումարվում ե Հաագայի խաղաղության կոնֆերենցիան, վորտեղ սպառազինման կրճատման հարց ե դրվում։ Յեվ այս այն ժամանակ, յերբ Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կնքված համաձայնության հիման վրա Ֆրանսիական գլխավոր շտաբի սպաները Ռուսաստան եյին գալիս, վորպեսզի մշակեն պատերազմի դեպքում զորքերի շարժման պլանը, իսկ ռուսական գլխավոր շտաբի սպաները Ֆրանսիա եյին մեկնում, վորպեսզի ֆրանսիական գեներալների հետ միասին կազմեն Գերմանիայի դեմ ապագայում սկսվելիք ռազմական գործողությունների ծրագիրը։ Յեվ այս կատարվում եր այն ժամանակ, յերբ Գերմանիայի ու Ավստրիայի գլխավոր շտաբները կազմում ու մշակում եյին պայմաններ, վորոնց հիման վրա Ավստրիան ու Գերմանիան փոխադարձաբար պետք ե արշավեյին իրենց հարևանների վրա Արևմուտքում և Արևելքում։ Հենց այս միջոցին (այս բոլորն, իհարկե, կատարվում եր լռելյայն, թիկունքում) գումարվում ե 1899 թ. Հաագայի կոնֆերենցիան, վորտեղ խաղաղություն ե հռչակվում, վորտեղ կեղծ աղմուկ են բարձրացնում սպառազինման կրճատման մասին։

Ահա բուրժուական դիպլոմատիայի անօրինակ կեղծավորության մի նմուշ, յերբ խաղաղության մասին բարձրացրած աղմուկով և յերգերով աշխատում են քողարկել նոր պատերազմի նախապատրաստության գործը։

Այս բոլորից հետո հիմք ունե՞նք մենք հավատալու Ազգերի Լիգայի ու Լոկարնոյի մասին յերգվող յերգերին։— Իհարկե, չունենք։ Ահա թե ինչու մենք չենք կարող հավատալ վոչ Չեմբերլենին, վոչ Բրիանին, յերբ նրանք համբուրվում են, վոչ ել Շտրեզեմանին, յերբ նա կոմպլիմենտներ ե շռայլում։ Ահա թե ինչու յենք կարծում, վոր Լոկարնոն նոր պատերազմի և վոչ թե խաղաղության համար կատարվող ուժերի վերադասավորման պլան ե։

Հետաքրքրական ե 2-րդ Ինտերնացիոնալի դերն այս հարցում։ Չե՞ վոր ամենից շատ 2-րդ Ինտերնացիոնալի պարագլուխներն են վեր-վեր թռչում, հավատացնելով բանվորներին, վոր Լոկարնոն խաղաղության գենք ե, իսկ Ազգերի Լիգան — խաղաղության տաճար, վոր բոլշևիկները

չեն ուզում Ազգերի Լիգան մտնել, վորովհետև նրանք խաղաղության դեմ են և այլն» Ինչի՞ յե հանգում 2-րդ Ինտերնացիոնալի բարձրացրած այդ ամբողջ աղմուկը, յեթե ուշադրության առնենք իմ ասածները և մանավորապես այն պատմական քաղվածքը, վոր յես բերեցի ֆրանս-պրուսական պատերազմից հետո կնքված մի շարք համաձայնություններից, վորոնք կոչվում են խաղաղության համաձայնություններ, բայց գործնականում դուրս յեկան պատերազմի համար կնքված համաձայնություններ: Ինչ է ասում Լոկարնոյի նկատմամբ 2-րդ Ինտերնացիոնալի բռնած ներկա դիրքը: Այն, վոր 2-րդ Ինտերնացիոնալը վոչ թե միայն բանվոր դասակարգի բուրժուական անբարոյականացման կազմակերպություն է, այլև վերսալյան հաշտության բոլոր անարդարությունները բարոյապես արդարացնող մի կազմակերպություն: Այն, վոր 2-րդ Ինտերնացիոնալն Անտանտային օժանդակող կազմակերպություն է, մի կազմակերպություն, վոր Լոկարնոյի և Ազգերի Լիգայի համար թափած իր աշխատանքով և իր բարձրացրած աղմուկով պարտավոր է բարոյապես արդարացնել այն բոլոր անարդարությունները ու այն ամբողջ հարստահարությունները, վորոնք ստեղծվել են Վերսալ-Լոկարնոյի ռեժիմի շնորհիվ:

4. ՀԱՂԹԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԻ ՆԵՐՀԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Անցնում եմ չորրորդ կարգի ներհակություններին — հաղթող յերկրների միջի ներհակություններին: Հիմնական փաստերն այստեղ այն են, վոր չնայած Անգլիայի ու Ամերիկայի միջև մի վորոշ բլոկի գոյության, մի բլոկ, վորի հիմքն Ամերիկայի և Անգլիայի՝ դաշնակցային պարտքերի ջնջման դեմ ուղղված համաձայնությունն է — յես ասում եմ չնայած այդ բլոկին, Անգլիայի ու Ամերիկայի շահերի պայքարը չի թուլանում, այլ, ընդհակառակը, ուժեղանում է:

Համաշխարհային պետությունների համար հիմնական խնդիրներից մեկն էլ այժմ նավթի հարցն է: Յեթե վերցնենք, օրինակ՝ Ամերիկան, ապա նա արտադրում է նավթի համաշխարհային ամբողջ արդյունահանության մոտ $70^0/_0$ և սպառում համաշխարհային ամբողջ սպառման $60^0/_0$-ից ավելի:

Ահա այս ասպարեզում, վորը համաշխարհային պետությունների ամբողջ տնտեսական և ռազմական գործողության հիմնական ներվն է, — Ամերիկան միշտ և ամենուրեք Անգլիայի հակամարտությանն է հանդիպում:

Յեթե վերցնենք յերկու համաշխարհային նավթային ընկերությունները — Ստանդարդ-Օյլը և Կոնինկլայկ-Շելլը, վորոնցից առաջինը ներկայացնում է Ամերիկան, իսկ յերկրորդը՝ — Անգլիան, կտեսնենք, վոր այս ընկերությունների միջև պայքարը տեղի յե ունենում յերկրա-

մասերում, որտեղ որ նավթ է յերևում։ Սա Ամե-
գնդի բոլոր այն մասերում, որտեղ որ նավթ է յերևում։ Սա Ամե-
րիկայի և Անգլիայի պայքարն է։ Որովհետև նավթի հարցը կենսական
հարց է, որովհետև ապագա պատերազմի ժամանակ հրամայող կլինի
նա, ով որ ավելի շատ նավթ կունենա։ Համաշխարհային արդյունա-
բերության և առևտրի ասպարեզում հրամայողի դեր ունենալն էլ կախ-
ված է այն բանից, թե ով ավելի շատ նավթ կունենա։
Առաջադեմ յերկրների նավատորմի մոտորային շարժման անցնե-
լուց հետո նավթը կենսական ներվ է դառնում համաշխարհային պետու-
թյունների գերիշխանության համար մղված պայքարում, ինչպես խա-
ղաղության, այնպես էլ պատերազմի ժամանակ։
Յեվ հատկապես այս ասպարեզում Անգլիայի ու Ամերիկայի նավ-
թային ընկերությունները մահացու պայքար են մղում, որը, ճիշտ
է, հաճախ բացահայտ չի լինում, բայց միշտ էլ կա և առկայծում է,
ինչպես տեսնում ենք Անգլիայի ու Ամերիկայի՝ այդ հողի վրա վարած
բանակցությունների և ունեցած ընդհարումների պատմությունից։ Բա-
վական է, որ զարթեցնեմ ձեր հիշողության մեջ Յուզի մի շարք նա-
մակները, որ ներկայացրեց նա Անգլիային նավթի հարցի առթիվ,
յերբ նա արտաքին գործերի մինիստր եր Ամերիկայում։ Պայքարը մղ-
վում է Հարավային Աֆրիկայում, Պարսկաստանում, Յեվրոպայում,
Ռումինիայի և Գալիցիայի նավթաբեր շրջաններում, յերկրագնդի բոլոր
մասերում—յերբեմն գաղտնի, յերբեմն էլ բացահայտ կերպով։
Ել չեմ խոսում այնպիսի մի ոչ-անկարևոր փաստի մասին, որ-
պիսին է Անգլիայի և Ամերիկայի շահերի պայքարը Չինաստանում։
Հարկավ դուք գիտեք, որ այստեղ պայքարը քողարկված ձևով է մղվում,
և Ամերիկային, որն ավելի ճկուն է գործում և ազատ է գործունեյու-
թյան այն կոպիտ-գաղութային մեթոդներից, որոնցից դեռևս չեն ազա-
տագրվել Անգլիայի լորդերը,—հաջողվում է գաղտնի դավեր լարել Ան-
գլիայի դեմ Չինաստանում, որպեսզի մի փոքր յետ մղի նրան և իր
համար ճանապարհ բացի դեպի Չինաստան։ Հասկանալի յե, որ Ան-
գլիան չի կարող անտարբեր լինել դեպի այս բանը։ Յես չեմ խոսի ու
չեմ ծանրանա Յեվրոպայի մայր-ցամաքում գերիշխելու համար մղվող
պայքարի հետևանքով Ֆրանսիայի ու Անգլիայի շահերի միջև առեղծ-
ված ներհակությունների վրա։ Դա—հանրածանոթ փաստ է։ Պարզ է
նաև այն, որ Անգլիայի ու Ֆրանսիայի շահերի պայքարը կատար-
վում է ոչ միայն Յեվրոպայի ցամաքում, այլև գաղութներում գերիշ-
խելու համար։ Մամուլում տեղեկություններ յերևացին այն մասին,
որ Սիրիայում ու Մարոկկոյում ֆրանսիական իմպերիալիզմի դեմ բար-
ձրացրած պատերազմը կազմակերպված է ոչ առանց Անգլիայի մասնակ-
նակցության։ Ձեռքիս տակ համապատասխան փաստաթղթեր չկան,
բայց կարծում եմ, որ այդ տեղեկությունները զուրկ չեն հիմքից։

Ես չեմ խոսի նաև Ամերիկայի ու Յապոնիայի շահերի միջև գոյություն ունեցող ներհակությունների մասին, վորովհետև դրանք ես հայտնի յեն։ Բավական ե հիշել ամերիկյան նավատորմի վերջին մանյովրները Խաղաղ ովկիանոսում և յապոնական նավատորմի մանյովրները, վորպեսզի հասկանանք, թե այդ ինչու յե կատարվում։

Վերջապես յես պետք ե նշեմ մի փաստ, վորը բոլորիդ կզարմացնի. դա հաղթանակած յերկրներում տեղի ունեցող սպառազինման հսկայական աճման փաստն ե։ Խոսքս վերաբերում ե հաղթողներին, հաղթական պետությունների միջի ներհակություններին։ Այդ հաղթողները դաշնակիցներ են կոչվում։ Ճիշտ ե, Ամերիկան Անտանտայի կազմի մեջ չի մտնում, բայց նա Անտանտայի հետ դաշնակցած եր պատերազմում Գերմանիայի դեմ։ Այժմ այդ դաշնակիցներն ուժգին թափով զինվում են։ Ո՞ւմ դեմ են զինվում։ Առաջներում Անտանտայի յերկրները զինվելիս սովորաբար Գերմանիային եյին պատճառ բռնում, ասելով թե Գերմանիան մինչև ատամները զինված ե և վտանգ ե սպառնում ամբողջ աշխարհի խաղաղությանը, և այդ պատճառով անհրաժեշտ ե զինվել՝ պաշտպանվելու համար։ Իսկ այժմ։—Այժմ Գերմանիան, վորպես զինված ուժ, գոյություն չունի։ Նա զինաթափված ե։ Մինչդեռ այժմ հաղթական յերկրներում սպառազինման աճումն այնպես ե, ինչպես յերբեք։

Ինչո՞վ բացատրել, օրինակ, ոդագնացության հրեշավոր աճումը Ֆրանսիայում։ Ինչո՞վ բացատրել սպառազինման ու նավատորմի, ինչպես և ոդագնացության հրեշավոր աճումն Անգլիայում։ Ինչո՞վ բացատրել նավատորմի հրեշավոր աճումն Ամերիկայում և Յապոնիայում։ Ինչի՞ց և ումի՞ց են վախենում պ. պ. «դաշնակիցները», վորոնք միասնաբար հաղթեցին Գերմանիային ու զինաթափեցին նրան։ Ինչի՞ց են վախենում և ինչո՞ւ յեն սպառազինվում։ Ցավ ո՞ւր ե մնացել 2-րդ Ինտերնացիոնալի խաղաղասիրությունը, վորը խաղաղությունից ե խոսում ու չի տեսնում—իբր թե չի տեսնում,—վոր «դաշնակիցները», վորոնք պաշտոնապես մեկ-մեկու բարեկամ են անվանել, կատաղի թափով զինվում են «գոյություն չունեցող» թշնամու դեմ։ Ի՞նչ են արել Ազգերի Լիգան և 2-րդ Ինտերնացիոնալն սպառազինման այդ կատաղի աճմանը վերջ տալու համար։ Մի՞թե նրանք չգիտեն, վոր սպառազինման աճման դեպքում «թնդանոթներն իրենք իրենց սկսում են կրակել»։ Մի սպասեք պատասխանի Ազգերի Լիգայից և 2-րդ Ինտերնացիոնալից։ Բանն այն ե, վոր շահերի պայքարը հաղթանակած յերկրների միջև աճում և ուժեղանում ե, նրանց ընդհարումն անխուսափելի յե դառնում, և նրանք, նոր պատերազմի սպասելով, զինվում են իրենց ամբողջ ուժով, բոլոր միջոցներով։ Չափազանցրած չեմ լինի, յեթե ասեմ, վոր այս մոքով հաղթանակած յերկրների միջև վոչ թե բարե-

ԳՐԱԴԱՐԱՆ

կամական խաղաղություն է թագավորում, այլ զինված խաղաղություն-դա—զինված խաղաղություն է, որ պատերազմով է հղի: Այն, ինչ որ կատարվում է ներկայումս հաղթանակած յերկրներում, շատ է հիշեցնում այն դրությունը, որ կար 1914 թվի պատերազմից առաջ—զինված խաղաղության դրություն: Յեվրոպայի կառավարիչները ներկայումս աշխատում են խաղաղության մասին բարձրացրած թմբկահարությամբ քողարկել այդ փաստը: Բայց յես արդեն ասացի, թե ինչ արժեք ունի այդ խաղաղությունը և ինչ արժեք պետք է տալ դրան: Ջենովայից իվեր բոլշևիկները զինաթափություն են պահանջում: Ինչու 2-րդ Ինտերնացիոնալն ու պացիֆիզմի այլ ճառամարտանները չեն պաշտպանում մեր առաջարկները: Այս հանգամանքը մի ավելորդ անգամ գալիս է ասելու, որ այն ստաբիլիզացիան—ժամանակավոր, մասնակի ստաբիլիզացիան, որին հասել է Յեվրոպան իր ստրկացման գնով, հաստատուն չէ, որովհետև աճում և ուժեղանում են հաղթական յերկըրների միջի ներհակությունները, էլ չխոսելով հաղթական յերկրների և հաղթված յերկրների միջի ներհակությունների մասին:

5. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ.

Անցնում եմ ներհակությունների հինգերորդ խմբին—Խորհրդային Միության և կապիտալիստական աշխարհի միջի ներհակություններին:

Հիմնականն այս ասպարեզում այն է, որ ամբողջ աշխարհն ընդգրկող համայնապարփակ կապիտալիզմ այլևս չկա: Այն օրից իվեր, յերբ աշխարհ յեկավ Խորհուրդների յերկիրը,—այն օրից իվեր, յերբ հին Ռուսաստանը վերածվեց Խորհրդային Միության—այդ օրից իվեր ամբողջ աշխարհն ընդգրկող համայնապարփակ կապիտալիզմ այլևս չկա: Ամբողջ աշխարհը յերկու բանակի յե բաժանվել—իմպերիալիզմի բանակի և իմպերիալիզմի դեմ պայքարի բանակի: Այդ առաջինն է, որ պետք է նշել:

Յերկրորդը, որ այս ասպարեզում յես պետք է նշեմ, այն է, որ կապիտալիստական յերկրների գլուխ են անցնում յերկու հիմնական յերկրներ—Անգլիան ու Ամերիկան, որպես անգլո-ամերիկյան դաշնակցություն: Իսկ դժգոհների, իմպերիալիզմի դեմ մահու մարտ մղողների գլուխ է անցնում մեր յերկիրը—Խորհրդային Միությունը: Իմ հիշատակելիք յերրորդ փաստն այն է, որ ստեղծվում են ձգողության յերկու հիմնական, բայց հակադիր կենտրոններ, և դրա համաձայն ամբողջ աշխարհում ստեղծվում է ձգողության յերկու ուղղություն. անգլո-ամերիկյան՝ բուրժուական կառավարությունների համար և Խորհրդային Միության՝ Արևմուտքի բանվորների ու Արևելքի հեղափոխականների համար:

Անգլո-Ամերիկան գրավում է իր հարստությամբ. նրանցից կարելի յե վարկեր ստանալ: Խորհրդային Միությունը գրավում է իր հե-

ղափոխական փորձով, բանվորներին կապիտալիզմի լծից և ճնշված ժողովուրդներին իմպերիալիզմի լծից ազատելու համար պայքարելու փորձով: Ես ասում եմ այն ձգտման մասին, որ ունեն Եվրոպայի բանվորները և Արևելքի հեղափոխականները դեպի մեր յերկիրը: Դուք գիտեք, թե ինչ նշանակություն ունի Եվրոպայի բանվորի կամ ճնշված յերկրների հեղափոխականների համար մեր յերկիր այցելելը. գիտեք, թե ինչպես են նրանք ուխտագնացություն կազմակերպում դեպի մեր յերկիրը, և ինչպես են դեպի մեր յերկիր ձգտում յերկրագնդի բոլոր ազնիվ ցանկություններով տոգորված ու հեղափոխական մարդիկ:

Յերկու բանակ կա ներկայումս, ձգողության յերկու կենտրոն:

Չորրորդ փաստն այն է, որ մյուս բանակում, կապիտալիզմի բանակում, շահերի նույնություն ու սերտ կապ չկա բոլորի մեջ, որ այնտեղ շահերի պայքար է, անկում.—պայքար հաղթողների ու հաղթվածների միջև, պայքար բոլոր իմպերիալիստական յերկրների միջև՝ գաղութների համար, շահույթների համար: Յեվ այս բոլորի պատճառով ստաբիլիզացիան այս բանակում հաստատուն լինել չի կարող: Մինչդեռ մեր յերկրում կատարվում է առողջ և ամրացող ստաբիլիզացիա, մեր տնտեսության աճումը, մեր սոցիալիստական շինարարության աճումը, իսկ մեր ամբողջ բանակում կատարվում է այն, որ աստիճանաբար, անշեղ կերպով մեր յերկրի պրոլետարիատի շուրջն են համախմբվում ինչպես Արևմուտքի, այնպես էլ Արևելքի բոլոր դժգոհ տարրերն ու շերտերը, նրանց համախմբումն է կատարվում Խորհրդային Միության շուրջը:

Այնտեղ, կապիտալիզմի բանակում—տարաձայնություն և քայքայում է. այստեղ, սոցիալիզմի բանակում,—համախմբվածություն և շահերի միասնականություն, որը գնալով ուժեղանում է ընդդեմ ընդհանուր թշնամու, ընդդեմ իմպերիալիզմի:

Ահա այն հիմնական փաստերը, որ յես ուզեցի նշել հինգերորդ կարգի ներհակություններից—կապիտալիզմի և Խորհուրդների աշխարհի միջև ներհակություններից:

Ընկերներ, յես կուզեյի առանձնապես կանգ առնել այն փաստի վրա, որը յես անվանեցի ամբողջ աշխարհի հեղափոխական և սոցիալիստական տարրերի ձգտում դեպի մեր յերկրի պրոլետարիատը: Խոսքս վերաբերում է մեր յերկիրն այցելող բանվորական պատգամավորություններին, որոնք ամենայն ուշադրությամբ դիտում են մեր շինարարության յուրաքանչյուր անկյունը, որպեսզի համոզվեն, որ մենք ընդունակ ենք ոչ թե կործանելու, այլև նորը կառուցելու:

Ի՞նչ է բանվորական պատգամավորությունների դեպի մեր յեր-

կիր կատարվող այդ ուխտագնացությունների իմաստը.— պատգամավորություններ, վորոնք այժմ Արևմուտքի բանվորական շարժման զարգացման մեջ մի ամբողջ շրջան են կազմում։ Դուք լսել եք, ընկերներ, թե ինչպիսի ընդունելություն են ցույց տվել խորհրդային պետության ղեկավարներն անգլիական բանվորական պատգամավորությանը, ինչպիսին՝ գերմանական բանվորական պատգամավորությանը։ Դուք ուշադրություն դարձրել եք այն բանի վրա, վոր պետական կառավարչության զանազան ասպարեզների ղեկավար մեր ընկերները վոչ թե միայն ինֆորմացիա յեն տվել բանվորական պատգամավորության ներկայացուցիչներին, այլև ուղղակի հաշիվ են տվել նրանց։ Այդ միջոցին յես Մոսկվայում չեյի, յես բացակայում եյի այստեղից, բայց լրագիր կարդում եյի և կարդացի, թե ինչպես ընկ. Ձերժինսկին, Ժողովրդական Տնտեսության Բարձրագույն Խորհրդի ղեկավարը, վոչ թե սոսկ ինֆորմացիա յե տվել գերմանական պատգամավորությանը, այլև իսկական հաշիվ ե տվել նրան։

Սա նոր և առանձնահատուկ յերևույթ ե մեր կյանքում, վորի վրա պետք ե ուշադրություն դարձնել, ընկերներ,— հատուկ ուշադրություն։ Սա նոր յերևույթ ե, վոր պետք ե հասկանալ։

Յես կարդացի, թե ինչպես մեր նավթարդյունաբերության ղեկավարները՝ Կոսիորը Գրոզնիում և Սերեբրովսկին Բագվում՝ վոչ թե լոկ ինֆորմացիա յեն տվել բանվոր պատգամավորներին, ինչպես եքսկուրսանտներին են ինֆորմացիա տալիս, այլ ուղղակի հաշիվ են տվել բանվորական պատգամավորներին, ինչպես հաշիվ կտան բարձրագույն վերահսկիչ իշխանությանը։ Յես կարդացի, թե ինչպես մեր բոլոր բարձրագույն հիմնարկները, Ժողկոմխորհն ու Կենտգործկոմը, մինչև տեղական գործկոմները, պատրաստ են յեղել հաշիվ տալ բանվորական պատգամավորներին, վորոնց մեջ նրանք տեսնում եյին Արևմուտքի բանվոր դասակարգի բարեկամական, յեղբայրական կոնտրոլը մեր շինարարության, մեր բանվորական պետության նկատմամբ։

Ի՞նչ են ասում այս բոլոր փաստերը, ընկերներ։

Սրանք յերկու բան են ասում. Նախ և առաջ այն, վոր Յեվրոպայի բանվոր դասակարգը, գոնե յեվրոպական բանվոր դասակարգի հեղափոխական մասը, մեր պետությունն իր զավակն ե համարում,— վոր բանվոր դասակարգն իր պատգամավորությունները մեր յերկիրն ե ուղարկում վոչ թե հետաքրքրությունից դրդված, այլ նրա համար, վորպեսզի նրանք տեսնեն, թե ինչ և ինչպես ե արվում մեզ մոտ, վորովհետև նրանք յերևի բարոյապես պատասխանատու յեն համարում իրենց այն բոլորի համար, վոր մենք մեր յերկրում կառուցում ենք։

Յերկրորդ, այդ նշանակում ե, վոր յեվրոպական պրոլետարիատի հեղափոխական մասը, վորդեգրելով մեր պետությունը և այն իր զա-

վակը համարելով, հանձն է առնում պաշտպանել նրան և անհրաժեշտության դեպքում կռվել նրա համար։ Ցույց տվեք մի ուրիշ պետություն, թեկուզ ամենադեմոկրատականը, որ վստահանար ուրիշ յերկրների բանվորական պատգամավորությունների յեղբայրական կոնտրոլին յենթարկել իրեն։ Այդպիսի պետություն դուք չեք գտնի, վորովհետև յերկրագնդի վրա այդպիսի պետություն չկա։ Միայն մեր պետությունը, բանվորների և գյուղացիների պետությունն է ընդունակ այդպիսի քայլ անելու։ Բայց մաքսիմում վստահություն ցույց տալով բանվորական պատվիրակություններին, մեր յերկիրը դրանով Յեվրոպայի բանվոր դասակարգի մաքսիմում վստահությունն է նվաճում։ Իսկ այդ վստահությունը դեպի մեզ՝ մեզ համար թանգ է ամեն տեսակի փոխառություններից, վորովհետև բանվորների այդ վստահությունը դեպի մեր պետությունը հիմնական հակաթույն է հանդիսանում ընդդեմ զինված միջամտության (ինտերվենցիայի)։

Ահավասիկ մեր պետության և Արևմուտքի պրոլետարիատի փոխհարաբերությունների մեջ տեղի ունեցած փոփոխության հիմքը—փոփոխություն, վորն առաջացել է կամ առաջանում է բանվորների դեպի մեր յերկիրն ուխտագնացություն կազմակերպելու հողի վրա։

Ահա այն նոր յերևույթը, վոր շատերը չեն նկատել, բայց վորը ներկայումս վճռական նշանակություն ունի, վորովհետև, յերբ մեզ գնահատում են իբրև Յեվրոպայի բանվոր դասակարգի մի մասը, իբրև նրա զավակը,—յերբ, այս յելակետ ընդունելով, Յեվրոպայի բանվոր դասակարգն իր վրա բարոյական պատասխանատվություն է վերցնում, մեր պետությունը պաշտպանելու խնդիրն է իր վրա վերցնում, առնենք ինտերվենցիայի դեպքում, կապիտալիզմից մեր շահերի պաշտպանության խնդիրն ընդդեմ կապիտալիզմի, ապա այս ինչ է նշանակում։—Այն, վոր մեր ուժերն աճելու յեն և աճելու յեն վոչ թե որերով, այլ ժամերով։ Այս նշանակում է, վոր կապիտալիզմի թուլությունը, անզորությունն աճելու յե վոչ թե որերով, այլ ժամերով։ Վորովհետև ներկայումս առանց բանվորների պատերազմել չի կարելի։ Յեթե բանվորները չկամենան պատերազմել մեր Հանրապետության դեմ, յեթե նրանք մեր Հանրապետությունը համարեն իրենց զավակը, վորի բախտըն իրենց սրտին մոտիկ է, ապա մեր յերկրի դեմ պատերազմելն անկարելի կդառնա։ Ահա թե վորտեղ է թաքնված գաղտնիքը, վորն է հիմքը, վորն է իմաստը այն ուխտագնացության դեպի մեր յերկիրը, վոր կատարվել է, վոր կատարվելու յե, և վորը մենք պարտավոր ենք ամեն կերպ խրախուսել, վորպես համերաշխության գրավական, վորպես մեր յերկրի բանվորների և Արևմուտքի յերկրների բանվորների բարեկամության կապերն ամրապնդելու գրավական։

Թերևս ավելորդ չի լինի մի յերկու խոսքով կանգ առնել մեր յեր-

կիրն այցի յեկած պատվիրակությունների թվի վրա։ Յես մոտ օրերս լսեցի, վոր Մոսկվայի կոնֆերենցիայում մի ընկեր այսպիսի հարց ե տվել ընկ. Ռիկովին. «Արդյոք այդ պատվիրակությունները մեր վրա շատ թանգ չե՞ն նստում»։

Ընկերներ, այսպիսի բան չի կարելի ասել։ Մեր յերկիր յեկող բանվորական պատվիրակությունների մասին այդ վոգով յերբեք չըխոսեք։ Այդպես խոսելն ամոթ ե։ Վո՛չ մի ծախսի, վո՛չ մի զոհաբերության առաջ մենք չենք կարող և չպետք ե կանգ առնենք, վորպեսզի օգնենք Արևմուտքի բանվոր դասակարգին, վոր իր պատգամավորներն ուղարկի մեզ մոտ, վորպեսզի օգնենք նրանց համոզվելու այն բանում, վոր բանվոր դասակարգն, իշխանությունն իր ձեռքն առնելով, կարող ե վոչ թե միայն կապիտալիզմը կործանել, այլև սոցիալիզմ կառուցել։

Նրանք, Արևմուտքի բանվորները, գոնե նրանցից շատերը դեռևս համոզված են, թե բանվոր դասակարգն առանց բուրժուազիայի չի կարող կառավարվել։ Այդ նախապաշարմունքն Արևմուտքի բանվոր դասակարգի հիմնական հիվանդությունն ե, վոր սոցիալ-դեմոկրատներն են պատվաստում նրան։ Վո՛չ մի զոհաբերության առաջ մենք կանգ չենք առնի, վորպեսզի Արևմուտքի բանվոր դասակարգին հնարավորություն տանք իրենց պատգամավորների միջոցով համոզվելու, վոր բանվոր դասակարգը, իշխանությունն իր ձեռքն առնելով, կարող ե վոչ թե միայն հինը խորտակել, այլև սոցիալիզմ կառուցել։

Վո՛չ մի զոհաբերության առաջ մենք կանգ չենք առնի, վորպեսզի Արևմուտքի բանվոր դասակարգին հնարավորություն տանք համոզվելու, վոր մենք այն միակ բանվորական պետությունն ենք, վորի համար արժե, վոր նա Արևմուտքում կռվի և պաշտպանի նրան ընդդեմ իր կապիտալիզմի։ Այստեղ մենք վոչ մի զոհաբերության առաջ կանգ չենք առնի (**Ծափահարություններ**)։

Մեզ մոտ յերեք տեսակի պատգամավորություններ են յեկել. ինտելիգենտական պատգամավորություններ, ուսուցիչների և այլն, բանվորների պատգամավորություններ, վորոնց թիվը, կոպիտ հաշվով, մոտ 10 ե, և բանվոր յերիտասարդության պատգամավորներ։ Ընդամենը մեր յերկիր են յեկել 550 պատգամավորներ ու եքսկուրսանտներ։ Սպասվում ե ևս 16 պատգամավորություն, վորոնք ցուցակագրված են Համ. Արհխորհում (ВЦСПС)։ Մենք այդ գործն առաջ ենք մղելու նաև այսուհետև, վորպեսզի ամրացնենք մեր յերկրի բանվոր դասակարգի կապն Արևմուտքի բանվոր դասակարգի հետ և դրանով պատնեշ կանգնեցնենք ամեն տեսակի ու բոլոր ինտերվենցիաների առաջ։

Ահա ներհակությունների այն ամբողջ գումարը, վորոնք կրծում են կապիտալիզմի արմատները։

Ի՞նչ ե բղխում այս բոլոր ներհակություններից։ Ի՞նչ են ասում այս ներհակությունները։

Դրանք այն են ասում, ինչ որ չեմ ասել իմ զեկուցման սկզբից, այսինքն այն, որ կապիտալիստական աշխարհի հիմքերը փտում են մի ամբողջ շարք ներքին ներհակությունների, որոնք կապիտալիզմը դարձնում են անկուռ, որ մյուս կողմից դրանք այն են ասում, որ մեր աշխարհը — սոցիալիզմի աշխարհը — հետզհետե ավելի ու ավելի յե կարգի ընկնում, համախմբվում, և հատկապես այդ հողի վրա յե ծնվել ուժերի այն ժամանակավոր հավասարակշռությունը, որը վերջ ե տվել մեր դեմ մղվող պատերազմին, որը դրել ե Խորհրդային պետության և կապիտալիստական պետությունների «խաղաղ կենակցության» շրջանի հիմքը։

Յես հիշատակելու չեմ ևս յերկու փաստ, որոնք նույնպես նպաստել են պատերազմի շրջանի փոխարեն «խաղաղ կենակցության» շրջան հաստատելուն։

Առաջին փաստն այն ե, որ Ամերիկան ներկա մոմենտում չի ուզում, որ Յեվրոպայում պատերազմ ծագի։ Ամերիկան կարծես թե ասում ե Յեվրոպային. «Յես քեզ միլիարդներ եմ փոխ տվել. դու սուս ու փուս մնա, յեթե կամենում ես այսուհետև ել փարա ստանալ, յեթե չես ուզում, որ վալյուտադ գլխիվայր թռչի — հանգիստ նստիր ու աշխատիր. փարա վաստակիր ու պարտքերիդ տոկոսները վճարիր»։ Չեմ կարծում, թե կարիք կա ապացուցելու, որ յեթե Ամերիկայի այս խորհուրդը Յեվրոպայի համար վճռական նշանակություն անգամ չունենա, այնուամենայնիվ չի կարող առանց ազդեցության մնալ։

Յերկրորդ փաստն այն ե, որ պրոլետարական հեղափոխության հաղթանակից հետո կապիտալիզմի սիստեմից դուրս ընկավ մի ամբողջ հսկայական յերկիր սպառման շուկաներով, հում նյութի հսկայական մի աղբյուր, և այս, իհարկե, չեր կարող չազդել Յեվրոպայի տնտեսական կացության վրա։ Կորցնել յերկրագնդի մի վեցերորդական մասը, կորցնել մեր յերկրի շուկաները և հում նյութերի աղբյուրները — կապիտալիստական Յեվրոպայի համար նշանակում ե՝ կրճատել իր արտադրությունը, խորապես սասանել նրա հիմքերը։ Յեվ ահա, որպեսզի վերջ տրվի Յեվրոպայի կապիտալի ոտարացմանը մեր յերկրից, մեր շուկաներից ու հում նյութերի աղբյուրներից, անհրաժեշտ համարվեց «խաղաղ կենակցության» մի շրջան ստեղծելու մեզ հետ, որպեսզի կարողանան ճանապարհ բանալ դեպի մեր շուկաներն ու հում նյութերի աղբյուրները, որովհետև պարզվում ե, որ Յեվրոպայում տնտեսական կայունություն ստեղծելու ուրիշ հնար չկա։

6. Խ. Ս. Հ. Մ. ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Ահա այն բոլոր գործոնները, որոնք ուժերի որոշ հավասարակշռություն են ստեղծել սոցիալիզմի բանակի և կապիտալիզմի բանակի

մինչև ամբողջ աշխարհում, վորոնք պատերազմի շրջանը փոխարինել են շունչ առնելու շրջանով, վորոնք կարճատև դադարը վերածել են դադարի մի ամբողջ շրջանի և վորոնք հնարավորություն են տվել մեզ, ըստ Իլյիչի արտահայտության, վորոշ «աշխատակցություն» կատարել կապիտալիստական աշխարհի հետ։

Այստեղից է սկսվում ճանաչումների այն շրջանը, վորն սկսվել է ու պետք է առաջ գնա։

Յես չեմ թվի, թե ինչ յերկրներ են մեզ ճանաչել։ Կարծեմ խոշոր մեզ չճանաչած յերկրներից մնացել է միայն Ամերիկան։ Չեմ ծանրանա նաև այն հարցի վրա, վոր ճանաչումներից հետո սկսվեց առևտրական պայմանագրերի կնքումը, ինչպես, որինակ, Գերմանիայի ու Իտալիայի հետ։ Յերկար կանգ չեմ առնի նաև այն հարցի վրա, վոր մեր արտաքին առևտուրը նշանակալի չափերով աճել է, վոր այդ առևտուրն առանձնապես շահագրգռում է Ամերիկային, վորպես մեր յերկրը բամբակ ներմուծող մի յերկրի, և Անգլիային ու Գերմանիային, վորպես մեր հացըն ու մեր գյուղատնտեսական մթերքները ներմուծող յերկրների։ Մի բան պետք է ասեմ, վոր ներկա տարին առաջինն է, յերբ «համակեցության» շրջան ստեղծվելուց հետո մենք փոքրիշատե լայն մասշտաբով մեծ և ընդարձակ առևտրական կապեր ենք հաստատում կապիտալիստական պետությունների հետ։ Լայն և հարուստ կապեր ենք ստեղծում առևտրական գծով կապիտալիստական աշխարհի հետ։ Իհարկե, այդ դեռևս չի նշանակում, թե մենք արդեն լիկվիդացիայի յենք յենթարկել բոլոր դեռ չասված խնդիրները և բոլոր այսպես կոչված պահանջների ու հակապահանջների խնդիրը, վորոնք գոյություն ունեյին և դեռևս գոյություն ունեն մեր պետության և Արևմուտքի պետությունների միջև

Մենք գիտենք, վոր մեզնից պարտքերի հատուցում են պահանջում։ Այս բանը Յեվրոպան տակավին չի մոռացել ու, յերևի, չի մոռանա. համենայն դեպս, այնքան էլ շուտ չի մոռանա։

Մեզ ասում են, թե մեր նախապատերազմյան պարտքերը Յեվրոպային հավասար են 6 միլիարդի, պատերազմական պարտքերը հաշվում են 7 միլիարդ ռուբլուց ավելի. այսպիսով բոլորը միասին—13 միլիարդ։ Յեթե նկատի ունենանք վալյուտայի անկումը և այդ գումարից հանենք լիմիտրոֆների բաժինը, ապա դուրս է գալիս, վոր մենք Արևմտյան Յեվրոպայի պետություններին պարտ ենք 7 միլիարդից վոչ պակաս։ Հայտնի յե, վոր մեր հակապահանջները, վորպես հատուցում քաղաքացիական պատերազմի ժամանակ Անգլիայի, Ֆրանսիայի,

* Նախկին Ռուսաստանի սահմաններում գոյացած. Միության մեջ չմտնող նոր պետությունները, որինակ՝ Լեհաստանը, Լիտվան, Լատվիան յև այլն։

Ամերիկայի զինվորական միջամտության հետևանքով մեզ պատճառած վնասների, հանգում են, կարծեմ, 50 միլիարդ ռուբլու հասնող մի գումարի (յեթե ընդունենք Լարինի արած հաշիվները)։ Այնպես վոր մեզ հինգ անգամով ավելի յեն պարտ, քան մենք ենք պարտ (Լարինը տեղից՝ «Յեվ մենք կստանանք այդ»)։ Ընկ. Լարինն ասում ե, թե իր ժամանակին մենք այդ բոլորը կստանանք (**ծիծաղ**)։ Բայց յեթե փոքր ինչ ժլատ կազմենք հաշիվը, ինչպես Ֆինժողկոմատն ե անում, կստացվի 20 միլիարդից վոչ պակաս մի գումար։ Այնուամենայնիվ մենք շահում ենք (**ծիծաղ**)։ Սակայն կապիտալիստական յերկրները չեն ուզում դրա հետ հաշտվել, և մենք տակավին շարունակում ենք հանդես գալ նրանց ցուցակներում, վորպես պարտապաններ։ Ահա այս հողի վրա յե, վոր մեր և կապիտալիստների վարած բանակցությունների ասպարիզում խոչընդոտներ ու արգելքներ են կանգնում մեր առաջ։ Այսպես ե յեղել մեր և Անգլիայի բանակցությունների ընթացքում, այսպես կլինի, հավանորեն, նաև Ֆրանսիայի հետ։

Ի՞նչ դիրք ե բռնում այս հարցում Կենտկոմը։

Նա նույնն ե մնացել, ինչ վոր կար Մակդոնալդի հետ պայմանագիր կնքելու ժամանակ։

Մենք չենք կարող փոխել մեր յերկրի այն հայտնի որենքը, վոր հրատարակված ե 1918 թվին ցարական պարտքերի ջնջման մասին։ Մենք շարունակում ենք մնալ այդ որենքի հողի վրա։ Մենք չենք կարող չեղած հայտարարել այն դեկրետները, վորոնք արդեն հրատարակված են և վորոնք որինականացրել են մեր յերկրում եքսպրոպրիատորներին եքսպրոպրիացիայի յենթարկելը։ Մենք այդ որենքների բազայի վրա յենք կանգնած և ապագայում ել կմնանք։

Բայց մենք պատրաստ ենք գործնական բանակցությունների կարգով վորոշ բացառություններ անել և Անգլիայի, և Ֆրանսիայի համար՝ նախկին ցարական պարտքերի խնդրում, պայմանով, վոր մի փոքրիկ գումար վճարենք և մի վորոշ գումար ստանանք դրա փոխարեն։ Մենք պատրաստ ենք բավարարել նախկին մասնավոր սեփականատերերին, նրանց վորոշ կոնցեսիաներ տալով, սակայն սրան ել համաձայնվում ենք այն պայմանով, վոր կոնցեսիաների պայմաններն ստրկական չլինեն մեզ համար։ Այս հողի վրա մեզ հաջողվեց համաձայնության գալ Մակդոնալդի հետ։ Այդ բանակցություններին հիմք եր ծառայում պատերազմական պարտքերի փաստական ջնջումը։ Յեվ հենց այդ եր պատճառը, վոր այդ պայմանագիրը քանդեցին։

Ո՞վքեր։—Անշուշտ Ամերիկան։ Թեև Ամերիկան Ռակովսկու և Մակդոնալդի բանակցություններին չեր մասնակցում, թեև Մակդոնալդն ու Ռակովսկին կանգ առան համաձայնության վորոշ նախագծի վրա, թեև համաձայնության այդ նախագիծը վորոշ չափ եր հանդիսանում թե մեկ

և թե մյուս կողմի համար, և յերկու կողմերի շահերն էլ փոքրիշատե բավարարվում եյին այդ նախագծով, այնուամենայնիվ, շնորհիվ այն բանի, վոր նախագիծը յելակետ եր ընդունում պատերազմական պարտքերի ջնջումը, իսկ Ամերիկան չեր ուզում այդպիսի նախադեպ ստեղծել, վորովհետև այդ դեպքում նա Յեվրոպային պարտք տված միլիարդները կկորցներ — այս իսկ պատճառով նա, այսինքն Ամերիկան, «խորհուրդ տվեց» — և պայմանագիրը վերացավ:

Սակայն, չնայած դրան, մենք այժմ էլ շարունակում ենք կանգնած մնալ հիշատակված նախագծի տեսակետի վրա: Մեր արտաքին քաղաքականության հարցերից, մեր կառավարության և Արևմտյան Յեվրոպայի յերկրների կառավարությունների փոխհարաբերություններին վերաբերող առանձնապես փափկանկատ և մարտական հարցերից, վորոնք ծագել են հաշվետու ժամանակվա շրջանում, յես կուզեյի հիշատակել յերկու հարց. նախ և առաջ այն հարցը, վոր քանիցս առաջ են քաշել — և դեռևս քաշելու յեն անգլիական պահպանողականները, այն է, — պրոպագանդի հարցը, և յերկրորդ, Կոմմունիստական Ինտերնացիոնալի հարցը:

Մեզ մեղադրում են նրանում, վոր մենք հատուկ պրոպագանդ ենք մղում ինչպես Յեվրոպայում, այնպես էլ գաղութներում ու կախում ունեցող յերկրներում ընդդեմ իմպերիալիզմի: Անգլիական պահպանողականները պնդում են, թե ռուս կոմմունիստներն այն մարդիկն են, վորոնք կործանելու յեն Բրիտանական կայսրության հզորությունը: Յես կուզեյի այստեղ հայտարարել, վոր այդ բոլորը — դատարկ բաներ են: Քանի վոր իրենք բանվորական պատգամավորությունները մեր յերկիրն են գալիս, ծանոթանում են մեր կարգերին և մեր նոր կարգերի լուրը տարածում են Արևմուտքի բոլոր յերկրներում — էլ վոչ մի կարիք չկա, վոր մենք հատուկ պրոպագանդ մղենք Արևմուտքում և Արևելքում: Այլևս վոչ մի պրոպագանդի կարիք մենք չունենք: Դա ամենալավ, ամենաուժեղ և ամենաներգործոն պրոպագանդն է ի պաշտպանություն Խորհուրդների կարգի, ընդդեմ կապիտալիզմի կարգի (**ծափեր**): Մեզ ասում են, թե մենք պրոպագանդ ենք մղում Արևելքում: Յես պնդում եմ, վոր այդ էլ կատարելապես դատարկ բան է. վոչ մի կարիք չկա, վոր մենք վորևե հատուկ պրոպագանդ մղենք Արևելքում, քանի վոր մենք գիտենք, վոր մեր ամբողջ պետական կարգը հիմնված է մեր յերկրի ամենատարբեր ազգությունների ժողովուրդների կենակցության ու յեղբայրական աշխատակցության վրա: Ուզածդ չինացին, ուզածդ յեգիպտացին, ուզածդ հնդկացին, մեր յերկիր գալով և մի կես տարի այստեղ ապրելով, հնար ունի համոզվելու, վոր մեր յերկիրը միակ յերկիրն է, վոր հասկանում է ճնշված ժողովուրդների հոգին և հարթել է նախկին տիրապետող ազգության պրոլետարների

ու նախկին ճնշված ազգությունների պրոլետարների աշխատակցությունը։ Ոչ մի ուրիշ պրոպագանդ, վոչ մի ուրիշ ագիտացիա Արևելքում մեզ պետք չի, բացառությամբ այն բանի, վոր Չինաստանից, Հնդկաստանից ու Յեգիպտոսից մեր յերկիր յեկող պատգամավորությունները, մեզ մոտ փոքր ինչ աշխատելով և մեր կարգերը գիտելով, մեր յերկրում տիրող կարգերի լուրն աշխարհով մեկ տարածեն։ Սա լավագույն պրոպագանդն է և պրոպագանդի բոլոր տեսակներից ու բոլոր ձևերից ամենաներգործոնը. բայց կա մի ուժ, վորը կարող է կործանել և անպատճառ կործանելու յե անգլիական կայսրությունը. այդ—անգլիական պահպանողականներն են։ Դա այն ուժն է, վորը պարտավորապես, անխուսափելիորեն դեպի կործանում է տանելու Բրիտանական կայսրությունը։ Բավական է հիշել պահպանողականների քաղաքականությունն այն ժամանակ, յերբ նրանք իշխանություն ձեռք բերին։ Ինչի՞ց սկսեցին նրանք։ Սկսեցին նրանից, վոր սանձահարեցին Յեգիպտոսը, ուժեղացրին ճնշումը Հնդկաստանում, ինտերվենցիայի յենթարկեցին Չինաստանը և այլն։ Ահա պահպանողականների քաղաքականությունը։ Ո՞վ է հանցավոր և ո՞ւմ կարելի յե մեղադրել, յերբ անգլիական լորդերն այլ քաղաքականություն վարելու անընդունակ են։ Մի՞թե դժվար է հասկանալ, վոր այդպիսի ճանապարհով գնալով, պահպանողականներն անգլիական կայսրությունն անխուսափելի կործանման են հասցնելու այնպես, ինչպես անհերքելի յե, վոր յերկու անգամ յերկու—չորս է։

Միքանի խոսք էլ Կոմինտերնի մասին։ Իմպերիալիստների վարձկաններն ու կեղծ նամակների հեղինակներն Արևմուտքում լուրեր են տարածում այն մասին, վոր իբր թե Կոմինտերնը դավադիրների ու տերրորիստների կազմակերպությունն է, վոր կոմմունիստները չափչփում են Յեվրոպայի յերկրները, վորպեսզի դավադրություններ կազմեն յեվրոպական կառավարությունների դեմ։ Իմիջի այլոց, Սոֆիայում տեղի ունեցած պայթումը (Բուլղարիայում) կապվում է կոմմունիստների անվան հետ։ Յես անելու յեմ մի հայտարարություն, վորը պետք է հայտնի լինի յուրաքանչյուր կուլտուրական մարդու, յեթե նա անհուսալի տգետ կամ կաշառված չէ։ Յես պետք է հայտարարեմ, վոր կոմմունիստները վոչ մի կապ չեն ունեցել, չունեն և չեն կարող ունենալ անհատական տերրորի թեորիայի և պրակտիկայի հետ, վոր կոմմունիստները վոչինչ ընդհանուր չեն ունեցել, չունեն և չեն կարող ունենալ առանձին անհատների դեմ դավադրությունների թեորիայի հետ։ Կոմինտերնի թեորիան և պրակտիկան կայանում է ընդդեմ կապիտալիզմի կազմակերպվող մասսայական հեղափոխական շարժման մեջ։ Այս ճիշտ է։ Սա կոմմունիստների խնդիրն է։ Միայն տգետներն ու ապուշներն են կարող դավադրություններն ու անհատական

տերըորը չփոթել Կոմինտերնի մասսայական հեղափոխական շարժման քաղաքականության հետ։

Յերկու խոսք Յապոնիայի մասին։ Արևմուտքում մեր թշնամիներից վոմանք հաճույքից շփում են իրենց ձեռքերը, թե՝ տեսեք, Չինաստանում հեղափոխական շարժում ե սկսվել. ինարկե բոլշևիկներն են կաշառել չին ժողովրդին,—նրանցից բացի ել ով կարող ե կաշառել 400 միլիոնանոց ժողովրդին,—իսկ այդ ել, իր հերթին, «ռուսների» ու յապոնացիների կռվելու պատճառ ե դառնալու։ Այդ բոլորը փուչ բան ե, ընկերներ։ Հեղափոխական շարժման ուժերը Չինաստանում անչափելի յեն։ Այդ ուժերը դեռևս պատշաճ չափերով ի հայտ չեն յեկել։ Նրանք դեռևս ապագայում են յերևան գալու։ Արևելքի և Արևմուտքի կառավարիչները, վորոնք չեն տեսնում այդ ուժերը և պատշաճ չափով նրանց հաշվի չեն առնում, դրանցից տուժելու յեն։ Մենք վորպես պետություն, այդ ուժը հաշվի չառնել չենք կարող։ Մենք գտնում ենք, վոր Չինաստանը կանգնած ե նույն հարցի առաջ, վորի առաջ կանգնած եր Հյուսիսային Ամերիկան, յերբ նա միավորվեց ու մի պետություն կազմեց, վորի առաջ կանգնած եր Գերմանիան, յերբ նա կազմավորվում եր իբրև պետություն և միանում, վորի առաջ կանգնած եր Իտալիան իր միավորման և արտաքին թշնամիներից ազատագրվելու ժամանակ։ Այստեղ ճշմարտությունն ու արդարությունն ամբողջ 100 տոկոսով չինական հեղափոխության կողմն ե։ Ահա թե ինչու մենք համակրում և պետք ե համակրենք չինական հեղափոխությանը այն պայքարում, վոր մղում ե նա չին ժողովուրդն իմպերիալիստների լծից ազատելու և Չինաստանը մի պետության մեջ միավորելու համար։ Ով այս ուժը հաշվի չի առնում և չի առնելու,—վստահությամբ կարող ենք ասել, վոր նա անպատճառ խաղը տանուլ կտա։ Յես կարծում եմ, Յապոնիան կհասկանա, վոր Չինաստանի ազգային շարժման այդ աճող, առաջադիմող և իր ճանապարհին ամեն ինչ սրբող ուժը Յապոնիան նույնպես պետք ե հաշվի առնի։ Այդ բանը չհասկանալու պատճառով ե հենց, վոր կործանվում ե Չժան-Ցզո-Լինը։ Բայց նա կործանվում ե նաև այն պատճառով, վոր իր ամբողջ քաղաքականությունը կառուցում ե յերկպառակությունների, մեր և Յապոնիայի հարաբերությունների վատացման վրա։ Յուրաքանչյուր գեներալ, Մանջուրիայի յուրաքանչյուր կառավարիչ, վորն իր քաղաքականությունը կկառուցի մեր և Յապոնիայի յերկպառակությունների, մեր և Յապոնիայի հարաբերությունները վատացնելու վրա — պարտավորապես կկործանվի։

Միայն նա կանգուն կմնա, ով իր քաղաքականությունը կկառուցի մեր և Յապոնիայի հարաբերությունները լավացնելու և մեր ու Յապոնիայի մերձեցման վրա. միայն այդպիսի գեներալն ու այդպիսի կառավարիչն ե կարող հաստատուն կերպով նստել Մանջուրիայում,

վորովհետև մենք չունենք այնպիսի շահեր, վորոնք կարողանային մեր յերկրի և Յապոնիայի հարաբերությունները սրելու պատճառ դառնալ։ Մեր շահերը տանում են մեր յերկիրը Յապոնիային մոտեցնելու գծով։

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ.

Անցնում եմ արտաքին կացության հետևանքով մեր կուսակցության անելիքներին։

Յես կարծում եմ, վոր այստեղ պետք է ուրվագծել կուսակցության անելիքները, այսինքն նրա կատարելիք աշխատանքը յերկու ասպարեզում,—**միջազգային** հեղափոխական շարժման բնագավառում և ապա Խորհրդային Միության **արտաքին** քաղաքականության բնագավառում։

Վորոնք են **միջազգային** հեղափոխական շարժման բնագավառում կուսակցության անելիքները։

Նախ և առաջ պետք է աշխատել ամրապնդել Արևմուտքում կոմմունիստական կուսակցությունները, նրանց կողմից բանվորական մասսաներում մեծամասնություն նվաճելու գծով։ Յերկրորդ պետք է աշխատել ուժեղացնել այն պայքարը, վոր մղում են Արևմուտքի բանվորները միությունների միասնականության, մեր Միության պրոլետարիատի ու կապիտալիստական յերկրների պրոլետարիատի բարեկամության ամրապնդման համար։ Այս խնդրի մեջ է մտնում նաև ուխտագնացության այն շրջանը, վորի մասին յես խոսեցի և վորի նշանակությունը վերն ուրվագծեցի։ Յերրորդ՝ պետք է աշխատել ամրապնդել մերձեցումը մեր յերկրի պրոլետարիատի և հարստահարված յերկրների ազատագրական շարժման միջև, վորովհետև նրանք—մեր դաշնակիցներն են համաշխարհային կապիտալիզմի դեմ մղվող պայքարում։ Յեվ չորրորդ՝ պետք է աշխատել ամրապնդել մեր յերկրի սոցիալիստական տարրերը, աշխատել, վոր այդ տարրերի և կապիտալիստական տարրերի պայքարում առաջինները հաղթող հանդիսանան,— մի հաղթանակ, վորը վճռական նշանակություն ունի բոլոր յերկրների բանվորների հեղափոխականացման համար։

Միջազգային հեղափոխական շարժման ասպարեզում մեր կուսակցության ունեցած խնդիրների մասին խոսելիս մեր ընկերները սովորաբար սահմանափակվում են առաջին յերեք խնդիրներով և մոռանում են չորրորդ խնդիրը—այն, վոր մեր յերկրում մղած մեր պայքարը— այն պայքարը, վոր մղում ենք մենք, վորպեսզի սոցիալիստական տարրերը հաղթեն կապիտալիստական տարրերին մեր յերկրում, ինչպես և մեր շինարարական պայքարը—նույնպես միջազգային են և ինտերնացիոնալիստական իրենց նշանակությամբ, վորովհետև մեր

յերկիրը համաշխարհային հեղափոխության բազան ե, վորովհետև մեր յերկիրը միջազգային հեղափոխական շարժման ծավալման հիմնական լծակն ե, և յեթե մեզ մոտ շինարարությունն ընթանում ե պատշաճ թափով, այդ նշանակում ե, վոր մենք մեր աշխատանքը միջազգային հեղափոխական շարժման մյուս բոլոր ճյուղերում ևս կատարում ենք ճիշտ այնպես, ինչպես պահանջում ե մեզնից մեր կուսակցությունը։ Բայց այդ մոռանալ չի կարելի։

Սրանք են կուսակցության անելիքները միջազգային հեղափոխական շարժման ասպարեզում։

Այժմ տեսնենք, թե վորոնք են կուսակցության անելիքները մեր Միության **արտաքին** քաղաքականության ասպարեզում։

Նախ և առաջ պետք ե աշխատել նոր պատերազմների դեմ պայքարելու գծով, ապա խաղաղության պահպանման գծով և կապիտալիստական յերկրների հետ այսպես կոչված նորմալ հարաբերություններ պահպանելու գծով։ Մեր կառավարության քաղաքականության, նրա արտաքին քաղաքականության հիմքը կազմում ե խաղաղության գաղափարը։ Պայքար հանուն խաղաղության, պայքար ընդդեմ նոր պատերազմների, մերկացումն այն բոլոր քայլերի, վորոնք արվում են նոր պատերազմների նախապատրաստման նպատակով, մերկացումն այն բոլոր քայլերի, վորոնք պացիֆիզմի դրոշակով են քողարկում պատերազմի նախապատրաստումը գործնականում (Լոկարնո),—սա յե մեր խնդիրը։

Հենց այս պատճառով ե, վոր մենք չենք կամենում Ազգերի Լիգա մտնել, վորովհետև Ազգերի Լիգան պատերազմի նախապատրաստական աշխատանքների քողարկման կազմակերպություն ե, վորովհետև Ազգերի Լիգա մտնելու համար պետք ե ասենք, ինչպես ճիշտ կերպով արտահայտվեց ընկ. Լիտվինովը, թե վո՞րն ենք գերադասում—մուրճը, թե սալը։ Իսկ մենք չենք կամենում վոչ մուրճ լինել թույլ ժողովուրդների համար, վոչ ել սալ՝ ուժեղների համար։ Մենք վոչ մեկն ենք ուզում, վոչ ել մյուսը։ Մենք խաղաղության կողմն ենք, մենք կողմնակից ենք այն բոլոր քայլերի մերկացման, վորոնք դեպի պատերազմ են տանում, ինչպիսի պացիֆիստական դրոշակների յետևել վոր թաքցված լինեն դրանք։ Ազգերի Լիգա կլինի այդ, թե Լոկարնո—դա միևնույնն ե, մեզ դրոշակը չի խաբի, մենք աղմուկից վախեցողը չենք։ Յերկրորդ՝ պետք ե աշխատել ընդարձակել մեր ապրանքաշրջանառությունն արտաքին աշխարհի հետ՝ արտաքին առևտրի մոնոպոլիայի ամրացման հիմունքներով։ Յերրորդ, պետք ե աշխատել մերձենալ իմպերիալիստական պատերազմում պարտված յերկրների հետ, այն յերկրների հետ, վորոնք բոլոր կապիտալիստական յերկրների մեջ ամենից շատ են զրկված ու վոտնահարված, վորոնք այդ պատճա-

ում գտնվում են մեծ պետությունների գերիշխող միության ընդդիմադիրների շարքում։ Չորրորդ՝ պետք է աշխատել մերձեցում ստեղծել կախում ունեցող և գաղութային յերկրների հետ։

Սրանք են այն անելիքները, վոր ներկայումս կանգնած են կուսակցության առաջ միջազգային հարաբերությունների և միջազգային բանվորական շարժման ասպարեզում։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Ընկերներ, յես անցնում եմ Կենտկոմի հաշվետվության վերաբերմամբ զեկուցումիս յերկրորդ մասին։ Այս մասը վերաբերում է մեր պետության ներքին դրությանը և Կենտկոմի քաղաքականության այն հարցերին, վորոնք կապ ունեն մեր ներքին դրության հետ։ Յես կուզեյի մեջ բերել միքանի թվեր։ Թեև վերջին ժամանակներս մամուլում քիչ թվեր չեն հրապարակված, բայց ելի պետք է դրանց օգնությանը դիմենք, վորովհետև առանց վորոշ քանակությամբ թվեր մեջ բերելու, դժբախտաբար, անկարելի յե կառավարվել։

1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԱՌԱԾ.

Բայց նախքան թվերին անցնելը, թույլ տվեք կանգ առնել մի քանի հիմունքների վրա, վորոնք վորոշում են սոցիալիստական տնտեսության (յես մտադիր եմ տնտեսությունից սկսել) շինարարության բնագավառում կատարելիք մեր աշխատանքները։

Առաջին **հիմունքը**. մենք աշխատում և կառուցում ենք կապիտալիստական շրջապատման պայմաններում։ Այս նշանակում է, վոր մեր տնտեսությունը և մեր շինարարությունը զարգանալու յեն մեր և կապիտալիստական տնտեսությունների ներհակման, ընդհարումների պայմաններում։ Այդ ներհակությունից մենք վոչ մի կերպ չենք կարող խուսափել։ Դա մի շրջանակ է, վորի սահմաններում տեղի յե ունենալու յերկու սիստեմների — սոցիալիստական սիստեմի և կապիտալիստական սիստեմի — պայքարը։ Բացի այս, այդ նշանակում է, վոր մեր տնտեսությունը պետք է կառուցվի վոչ թե միայն հակադրվելով արտաքին աշխարհի կապիտալիստական տնտեսությանը, այլև հակադրվելով մեր յերկրի ներսում գոյություն ունեցող զանազան տարրերին, հակադրելով սոցիալիստական տարրերը կապիտալիստական տարրերին։

Այստեղից յեզրակացություն. մեր տնտեսությունը մենք այնպես պետք է կառուցենք, վորպեսզի մեր յերկիրը համաշխարհային կապիտալիստական սիստեմի հավելված չդառնա, վորպեսզի նրան չմտցնեն

զարգացման կապիտալիստական ընդհանուր սիստեմի մեջ՝ վորպես նրա մի ոժանդակ ձեռնարկություն,—վորպեսզի մեր տնտեսությունը զարգանա վոչ թե վորպես համաշխարհային կապիտալիզմի մի ոժանդակ ձեռնարկություն, այլ վորպես մի ինքնուրույն տնտեսական միավոր, գլխավորապես հենված իր ներքին շուկայի վրա, հենված մեր արդյունագործության (ինդուստրիայի) ու մեր յերկրի գյուղացիական տնտեսության կապի վրա։

Կա յերկու գլխավոր գիծ. մեկը յելնում ե այն բանից, վոր մեր յերկիրը պետք ե դեռևս յերկար ժամանակ ագրարային (հողագործական) յերկիր մնա, պետք ե արտահանի գյուղատնտեսական մթերքներ և ներմուծի սարքավորում, վոր պետք ե այս տեսակետի վրա մնալ և այս ճանապարհով զարգանալ նաև հետագայում։ Այս գիծը փաստորեն մեր արդյունաբերության սեղմումն ե պահանջում։ Դա իր արտահայտությունը գտավ մոտ ժամանակներս ընկ. Շանինի թեզիսներում (գուցե կան այնպիսիներ, վորոնք կարդացել են այդ թեզիսները «Էկոնոմիչեսկայա ժիզնում»)։ Այդ գիծը հանգում ե այն մտքին, վոր մեր յերկիրը յերբեք, կամ համարյա թե յերբեք, չպիտի կարողանա պատշաճ կերպով ինդուստրիացման յենթարկվի. մեր յերկիրն իր սեփական շուկայի վրա հենվող ինքնուրույն տնտեսական միավոր լինելուց պետք ե վերածվի ընդհանուր կապիտալիստական սիստեմի հավելվածի։ Այդ գիծը մեր շինարարության խնդիրներից հեռանալ ե նշանակում. դա մեր գիծը չե։

Կա մեկ ուրիշ գլխավոր գիծ, վորը յելնում ե այն բանից, վոր մենք պետք ե գործադրենք մեր բոլոր ուժերը, վորպեսզի, քանի վոր կապիտալիստական շրջապատում կա, մեր յերկիրը դարձնենք տնտեսապես ինքնուրույն, իր ներքին շուկայի վրա հենված մի յերկիր, վորն աստիճանաբար պետք ե դառնա կապիտալիզմից անջատվող և սոցիալիստական տնտեսության հունի մեջ մտնող բոլոր մյուս յերկրներին դեպի ինքը ձգող մի կենտրոն։ Այս գիծը պահանջում ե առավելագույն չափերով ծավալել մեր արդյունաբերությունը, սակայն առանց չափից անցնելու և համաձայն այն ռեսուրսների, վոր մենք ունենք։ Այս գիծը կտրականապես ժխտում ե մեր յերկիրը համաշխարհային կապիտալիստական սիստեմի հավելված դարձնելու քաղաքականությունը։ Սա մեր շինարարության գիծն ե, վորով ընթանում ե կուսակցությունը և վորով ընթանալու յե նաև հետագայում։ Այս գիծը պարտադիր ե, քանի գոյություն ունի կապիտալիստական շրջապատում։

Այսպես ե իրերի դրությունը, քանի վոր գոյություն ունի կապիտալիստական շրջապատումը։ Այլ խնդիր ե, յերբ կհաղթանակի հեղափոխությունը Գերմանիայում կամ Ֆրանսիայում կամ յերկու յերկրում միասին, յերբ այնտեղ կսկսվի սոցիալիստական շինարարությունն

ավելի բարձր տեխնիկական բազայի վրա։ Այն ժամանակ մենք մեր յերկիրն ինքնուրույն տնտեսական միավոր դարձնելու քաղաքականությունից կանցնենք մեր յերկիրը սոցիալիստական զարգացման ընդհանուր հունի մեջ մտցնելու քաղաքականության։ Բայց քանի վոր առայժմ այդ բանը տեղի չի ունեցել, մեզ բացարձակապես անհրաժեշտ է ինքնուրույնության այն մինիմումը մեր ժողովրդական տնտեսության համար, առանց վորի անկարելի կլինի ազատ պահել մեր յերկիրը համաշխարհային կապիտալիզմի սիստեմին տնտեսապես յենթարկվելու վտանգից։

Այս է առաջին հիմունքը։

Յերկրորդ հիմունքը, վորով մենք նույնպես պետք է ղեկավարվենք մեր շինարարության ընթացքում, ինչպես և առաջինով, այն է, վոր մենք յուրաքանչյուր անգամ պետք է հաշվի առնենք մեր տնտեսական ղեկավարության առանձնահատկությունները, նկատի առնելով տարբերությունը մեր և կապիտալիստական յերկրների ղեկավարության միջև։ Այնտեղ, կապիտալիստական յերկրներում, իշխում է մասնավոր կապիտալը, այնտեղ առանձին կապիտալիստական տրեստների, սինդիկատների, կապիտալիստների այս կամ այն խմբերի սխալները շտկվում են շուկայի տարերքով։ Յեթե չափազանց շատ է արտադրված — առաջանում է կրիզիս. բայց կրիզիսն անցնելուց հետո՝ տնտեսությունն իր բնական չափն է առնում։ Յեթե չափից դուրս շատ տարվեն ներմուծումով, ու առևտրական պասսիվ բալանս ստացվի — մուրհակային կուրսը կտատանվի, ինֆլյացիա կառաջանա, ներմուծումը կկրճատվի, կաճի արտածումը։ Այս բոլորը հատուկ են կրիզիսներին։ Վոչ մի փոքրիշատե խոշոր սխալ ու փոքրիշատե խոշոր գերարտադրություն կամ արտադրության ու պահանջի ամբողջ գումարի լուրջ անհամաչափություն արտադրության կողմից կապիտալիստական յերկրներում չի անցնում առանց այն բանի, վոր վրիպումները, սխալները և անհամաչափությունները չշտկվեն այս կամ այն կրիզիսի կարգով։ Այսպես են ապրում կապիտալիզմի յերկրներում։ Բայց մենք այդպես ապրել չենք կարող։ Այնտեղ մենք տեսնում ենք կապիտալիստների առանձին խմբերի շահերը շոշափող տնտեսական, առևտրական, ֆինանսական կրիզիսներ։ Մեզ մոտ գործն այլ է։ Առևտրի, արտադրության ասպարեզում պատահած յուրաքանչյուր լուրջ հապաղում, յուրաքանչյուր լուրջ սխալմունք մեր տնտեսության մեջ վերջանում է վոչ թե այս կամ այն ճյուղին վերաբերող մասնակի կրիզիսով, այլ ամբողջ տնտեսությանն է հարվածում։ Յուրաքանչյուր կրիզիս, լինի դա առևտրական, ֆինանսական, արդյունաբերական — մեզ մոտ կարող է վերածվել ամբողջ պետությանը հարվածող ընդհանուր կրիզիսի։ Այս իսկ պատճառով շինարարության մեջ մեզնից պահանջվում է հատուկ

հեռատեսություն ու շրջանկատություն։ Այս իսկ պատճառով մենք այստեղ տնտեսությունը պետք է ղեկավարենք պլանային կարգով, այնպես, որպեսզի մեր տնտեսական ղեկավարությունը լինի գերթափանցկոտ, գերկանխատես, գերանսխալական։ Բայց, ընկերներ, որովհետև մենք աչքի չենք ընկնում ոչ մեր հատուկ թափանցկոտությամբ, ոչ հատուկ կանխատեսությամբ, ոչ տնտեսություն անսխալ ղեկավարելու առանձին շնորհքով,—որովհետև մենք դեռես միայն սովորում ենք կառուցել—այս իսկ պատճառով մեզ մոտ սխալներ պատահում են և հետագայում էլ դեռես պատահելու յեն։ Այս իսկ պատճառով կառուցելիս մենք պետք է ռեզերվներ ունենանք, մեզ անհրաժեշտ են ռեզերվներ, որպեսզի կարողանանք դրանով ծածկել մեր սխալները։ Վերջին յերկու տարվա մեր ամբողջ աշխատանքը ցույց է տալիս, որ մենք ապահովված չենք ոչ պատահականություններից, ոչ սխալներից։ Գյուղատնտեսության ասպարեզում մեզ մոտ խիստ շատ բան է կախված ոչ թե միայն մեր տնտեսավարությունից, այլև բնական ուժերից (անբերրիություն և այլն). արդյունաբերության բնագավառում խիստ շատ բան է կախված ոչ թե միայն մեր տնտեսավարությունից, այլև ներքին շուկայից, որին մենք տակավին չենք տիրել։ Արտաքին առևտրի ասպարեզում խիստ շատ բան է կախված ոչ թե միայն մեզանից, այլև Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստների վերաբերմունքից։ Ըստ որում ինչքան ավելի յենք աճում մեր արտածումն ու ներածումը, այնքան ավելի յենք ուժեղանում մեր կախումը կապիտալիստական Արևմուտքից, այնքան ավելի խոցելի յենք դառնում մեր թշնամիների հարվածների համար։ Այս բոլոր պատահականություններից ու անխուսափելի սխալներից ապահովվելու համար մենք պետք է յուրացնենք այն միտքը, որ անհրաժեշտ է պահեստի միջոցներ կուտակել։ Մենք ապահովված չենք անբերրիությունից գյուղատնտեսության ասպարեզում։ Ուրեմն մեզ պահեստի միջոցներ են պետք։ Մենք ապահովված չենք ներքին շուկայի պատահականություններից՝ մեր արդյունաբերության զարգացման գծով։ Յես էլ չեմ խոսում այն մասին, որ մեր կուտակած սեփական միջոցներով ապրելով, մենք պետք է հատկապես ժլատ ու զուսպ լինենք մեր կուտակած միջոցները ծախսելիս, աշխատելով յուրաքանչյուր կոպեկ գործադրել խելացիորեն, այսինքն դնել այնպիսի գործի մեջ, որի զարգացումն ամեն տվյալ մոմենտում բացարձակապես անհրաժեշտ է։ Այստեղից պարզ է ռեզերվների անհրաժեշտությունն արդյունաբերության համար։ Մենք ապահովված չենք պատահականություններից արտաքին առևտրի գծով (քողարկված բոյկոտ, քողարկված պաշարում և այլն)։ Այստեղից ծագում է ռեզերվների անհրաժեշտությունը։

Կարելի կլիներ յերկու անգամով ավելացնել գյուղատնտեսա-

կան վարկին հատկացվող գումարները, բայց այդ դեպքում արդյունաբերության ֆինանսավորման համար անհրաժեշտ ռեզերվ էլ չէր մնա, արդյունաբերության զարգացումը շատ յետ կմնար գյուղատնտեսության զարգացումից, ֆաբրիկաների արտադրությունը կկրճատվեր, ֆաբրիկատների գների փքումն կառաջանար՝ իրանից բղխող բոլոր հետևանքներով։

Կարելի կլիներ յերկու անգամով ավելի գումարներ հատկացնել արդյունաբերության ծավալման գործին, բայց այդ դեպքում արդյունաբերությունն այնպիսի արագ թափով կզարգանար, վորին մենք չեյինք դիմանա, վորովհետև ազատ կապիտալների մեծ կարիք ունենք և այդ հողի վրա անշուշտ անհաջողության կհանդիպեյինք. էլ չեմ խոսում այն մասին, վոր գյուղատնտեսությունը վարկավորելու համար ռեզերվները չեյին բավականացնի։

Կարելի կլիներ ներկայիս համեմատությամբ կրկնապատիկ ուժով առաջ շարժել մեր ներմուծման զարգացումը, գլխավորապես սարքավորման ներմուծումը՝ արդյունաբերությունը կատաղի թափով առաջ շարժելու համար. բայց դա կարող եր առաջացնել ներմուծման գերազանցումն՝ արտահանության համեմատությամբ, կառաջանար պասսիվ առևտրական բալանս, և կվտանգվեր մեր վալյուտան, այսինքն կվտանգվեր այն հիմքը, վորի վրա միայն հնարավոր է արդյունաբերության պլանավորումն ու զարգացումը։

Կարելի կլիներ վոչ մի հանգամանք նկատի չառնելով բոլոր ուժով առաջ շարժել արտահանությունը, կատաղի թափով, առանց ներքին շուկայի դրությունը հաշվի առնելու. բայց այս բանն անպատճառ մեծ բարդություններ կառաջացներ քաղաքներում նրանով, վոր կատաղի թափով կբարձրանային գյուղատնտեսական մթերքների գները, հետևապես կխախտվեյին աշխատավարձի հիմքերը, և վորոշ չափով արհեստական կազմակերպված սով կստեղծվեր՝ սրանից բղխող բոլոր հետևանքներով։

Կարելի կլիներ մեծ թափով բարձրացնել բանվորների աշխատավարձը վոչ թե մինչև նախապատերազմյան մակարդակը, այլև բարձր. բայց այս հանգամանքը կառաջացներ մեր արդյունաբերության զարգացման թափի նվազում, վորովհետև արդյունաբերության ծավալումը մեր պայմաններում, յերբ բացակայում են արտաքին փոխառությունները, բացակայում են վարկերը և այլն,—հնարավոր կլինի միայն այն դեպքում, յերբ կարողանանք արդյունաբերությունը ֆինանսավորելու և սնելու համար անհրաժեշտ վորոշ շահույթ կուտակել. բայց այդ անկարելի կլիներ, այսինքն անկարելի կլիներ փոքրիշատե լուրջ կուտակում, յեթե աշխատավարձի բարձրացումը կատարեյինք արտակարգ արագության հասցրած թափով և այլն, և այլն։

Սրանք են այն յերկու հիմնական ղեկավար հիմունքները, վորոնք մեր յերկրի շինարարությանը նվիրված մեր աշխատանքի ընթացքում մեր ջահն ու փարոսն են հանդիսանալու։

Այժմ թույլ տվեք անցնել թվերին։

Բայց նախքան այդ—ես մի շեղում։

Մեր տնտեսության սիստեմի մեջ կա վորոշ խայտաբղետություն, կա հինգ ձև։ Կա տնտեսության համարյա թե նատուրալ ձև. այդ կարգին են պատկանում այնպիսի գյուղացիական տնտեսությունները, վորոնց արտադրության ապրանքայնությունը խիստ աննշան ե։ Կա տնտեսության յերկրորդ ձև՝ ապրանքային արտադրության ձև, վորտեղ ապրանքայնությունը գյուղացիական տնտեսության մեջ վճռական դեր ե խաղում։ Կա տնտեսության յերրորդ ձև—մասնավոր կապիտալիզմը, վորին չենք սպանել, վորն աշխուժացել ե և մինչև վորոշ աստիճանի կաշխուժանա, քանի մեզանում Նեպ կա։ Տնտեսության չորրորդ ձևը պետական կապիտալիզմն ե, այսինքն այն կապիտալիզմը, վոր մենք թույլատրել ենք և վորին հնարավորություն ունենք վերահսկել ու սահմանափակել այնպես, ինչպես այդ կամենում ե պրոլետարական պետությունը։ Վերջապես հինգերորդ ձևը—սոցիալիստական արդյունաբերությունն ե, այսինքն մեր պետարդյունաբերությունը, վորտեղ արտադրության մեջ կա վոչ թե յերկու թշնամական դասակարգ—պրոլետարիատն ու բուրժուազիան,—այլ մի դասակարգ—պրոլետարիատը։

Այդ հինգ ձևերի մասին յես կուզեյի մի յերկու խոսք ասել, վորովհետև առանց այդ յերկու խոսքի դժվար կլինի հասկանալ թվերի այն խումբը, վոր յես հրապարակելու յեմ, այն տենդենցը, վոր նկատվում ե մեր արդյունաբերության զարգացման մեջ, մանավանդ վոր մեր կարգերի սիստեմում գոյություն ունեցող այդ հինգ տնտեսական ձևերի մասին Լենինն իր ժամանակ բավական մանրամասն ե խոսել, ուսուցանելով մեզ հաշվի առնել մեր շինարարական աշխատանքի ժամանակ այդ շահերի միջև տեղի ունեցող պայքարը։

Յես կուզեյի մի-յերկու խոսք ել ասել պետկապիտալիզմի և իր բնույթով սոցիալիստական պետարդյունաբերության մասին, վորպեսզի ցրեմ այն թյուրիմացությունները և այն շփոթը, վոր ստեղծվել են այս հարցի շուրջը մեր կուսակցության մեջ։ Կարելի՞ յե մեր պետական արդյունաբերությունն անվանել պետկապիտալիստական։—Չի կարելի։ Ինչու։—Վորովհետև պետկապիտալիզմը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում հանդիսանում ե արտադրության այնպիսի կազմակերպում, վորտեղ ներկայացված ե յերկու դասակարգ—շահագործողների դասակարգ, վորի ձեռքին են գտնվում արտադրության միջոցները, և շահագործվողների դասակարգ, վորը չի տիրում արտադրու-

թյան միջոցներին։ Ինչպիսի հատուկ ձև էլ որ ունենա պետկապիտալիզմը, նա, այնուամենայնիվ, պետք է կապիտալիստական լինի իր էությամբ։ Պետկապիտալիզմը վերլուծելիս Իլյիչն ամենից առաջ նկատի չի ունեցել կոնցեսիաները։ Վերցնենք կոնցեսիաներն ու տեսնենք՝ որտեղ այստեղ ներկայացված է յերկու դասակարգ։ Այո, ներկայացված է։ Կապիտալիստների դասակարգ, այսինքն կոնցեսիոներները, որոնք շահագործում են և ժամանակավորապես տիրում են արտադրության միջոցներին, և պրոլետարների դասակարգը, որը շահագործվում է կոնցեսիոների կողմից։ Որ այստեղ սոցիալիզմի տարրեր չկան, պարզ է թեկուզ հենց նրանից, որ ոչ ոք չի համարձակվի կոնցեսսիոն ձեռնարկության մեջ աշխատանքի արտադրականության բարձրացման կամպանիայի հարց բարձրացնել, որովհետև ամենքն էլ գիտեն, որ կոնցեսիոն ձեռնարկությունը ոչ սոցիալիստական, սոցիալիզմին խորթ ձեռնարկություն է։

Վերցնենք մյուս տիպի ձեռնարկությունները, պետական ձեռնարկությունները։ Արդյոք դրանք պետկապիտալիստակա՞ն են։—Ո՛չ, պետկապիտալիստական չեն։ Ինչու՞—Որովհետև այնտեղ չկա յերկու դասակարգ, այլ կա մի դասակարգ, բանվոր դասակարգը, որի ձեռքին են գտնվում արտադրության գործիքներն ու միջոցները, և որը չի շահագործվում, որովհետև ձեռնարկության մեջ աշխատավարձից ավելի ստացվածի առավելագույն մասը հատկացվում է արդյունաբերության հետագա ծավալմանը, այսինքն ամբողջ բանվոր դասակարգի դրության բարելավման գործին։

Կարող են ասել, որ այդ դեռևս լիակատար սոցիալիզմ չէ, յեթե նկատի ունենանք բյուրոկրատիզմի այն մնացորդները, որ պահպանվել են մեր ձեռնարկությունները կառավարող մարմիններում։ Այդ ճիշտ է։ Բայց սա չի հակասում այն մտքին, որ պետարդյունաբերությունն իր բնույթով սոցիալիստական արտադրություն է։ Կա յերկու տիպի արտադրություն. կապիտալիստական տիպ, սրանց թվում նաև պետկապիտալիստականը, որտեղ կա յերկու դասակարգ, որտեղ արտադրության նպատակն է շահույթ տալ կապիտալիստին,—և կա ուրիշ տիպ. արտադրության սոցիալիստական տիպ. որտեղ շահագործում չկա, որտեղ արտադրության միջոցները պատկանում են բանվոր դասակարգին, և որտեղ ձեռնարկությունները ոչ թե անհարազատ դասակարգին, շահույթ տալու համար են աշխատում, այլ արդյունաբերությունն ամբողջ բանվոր դասակարգի օգտին ընդարձակելու համար։ Լենինն այդպես էլ ասում էր, որ մեր պետական ձեռնարկությունները հաջորդական սոցիալիստական տիպի ձեռնարկություններ են։

Այստեղ կարելի յեր անալոգիա անցկացնել մեր պետության հետ։ Մեր պետությունը ևս բուրժուական չի կոչվում, որովհետև նա,

ըստ Լենինի, նոր տիպի պետություն է, պրոլետարական տիպի պետություն։ Ինչու.—Վորովհետև մեր պետական ապարատը վոչ թե բանվոր դասակարգի ճնշման համար է աշխատում, ինչպես այդ գոյություն ունի առանց բացառության բոլոր բուրժուական պետություններում, այլ բանվոր դասակարգը բուրժուազիայի ճնշումից ազատելու համար։ Ահա ինչու յենք ասում, թե մեր պետությունն ըստ իր տիպի պրոլետարական պետություն է, թեև այդ պետության մեջ վատ բաներ և անցյալի մնացորդներ ինչքան կամենաք կարող եք գտնել։ Լենինը, վոր մեր խորհրդային կարգերը պրոլետարական տիպի պետություն հռչակեց, ամենից շատ է խստորեն նրան հայհոյել բյուրոկրատական մնացորդների համար։ Բայց չնայած դրան, նա միշտ կրկնում եր, վոր մեր պետությունը պրոլետարական պետության նոր տիպ է։ Պետք է տարբերել պետության տիպն այն ժառանգությունից ու մնացորդներից, վորոնք դեռևս պահպանվել են պետության սիստեմում և ապարատում։ Ճիշտ այդ ձևով անպայման պետք է տարբերել պետձեռնարկություններում պահպանված բյուրոկրատական մնացորդները պետարդյունաբերության կառուցման տիպից, վորին մենք սոցիալիստական տիպ անունն ենք տալիս։ Չի կարելի ասել, թե քանի վոր մեր տնտեսական օրգաններում և տրեստներում դեռևս կան սխալներ, բյուրոկրատիզմ և այլն, ուրեմն մեր պետարդյունաբերությունը սոցիալիստական չէ։ Այդպես չի կարելի ասել։ Այդ դեպքում մեր պետությունը ևս, վոր ըստ իր տիպի պրոլետարական է, պրոլետարական չեր լինի։ Յես կարող եմ մի ամբողջ շարք բուրժուական ապարատներ թվել, վորոնք մեր պրոլետարական պետական ապարատից ավելի լավ և ավելի տնտեսաբար են աշխատում։ Բայց սրանից դեռևս չի բխում, թե մեր պետական ապարատը պրոլետարական չէ, վոր մեր պետապարատն ըստ տիպի բարձր չէ կանգնած բուրժուականից։ Ինչու.—Վորովհետև այդ բուրժուական ապարատը թեև ավելի լավ է աշխատում, բայց աշխատում է կապիտալիստի համար, իսկ մեր պրոլետարական պետական ապարատը, յեթե նույնիսկ յերբեմն ել կաղում է, բայց և այնպես աշխատում է պրոլետարիատի համար և բուրժուազիայի դեմ։

Այս սկզբունքային տարբերությունը չի կարելի մոռանալ։

Նույնը պետք է ասել նաև պետական արդյունաբերության մասին։ Քանի վոր մեր պետական ձեռնարկությունները կառավարող մարմիններում անհարթություն և բյուրոկրատական մնացորդներ կան, վորոնք դեռևս գոյություն են ունենալու, չի կարելի դրանք նկատի առնելով հանդերձ մոռանալ, վոր մեր ձեռնարկություններն իրենց եյությամբ սոցիալիստական ձեռնարկություններ են։

Օրինակ՝ կանոնավորապես աշխատող Ֆորդի ձեռնարկություն-

նիրում թերևս գողություն քիչ լինի, բայց, այնուամենայնիվ, նրանք աշխատում են Ֆորդի համար՝ կապիտալիստի համար, իսկ մեր ձեռնարկությունները, որտեղ յերբեմն գողություն է պատահում, և միշտ չի, որ գործերը կարգին են գնում, այնուամենայնիվ պրոլետարիատի համար են աշխատում։

Այս սկզբունքային տարբերությունը չի կարելի մոռանալ։

Այժմ անցնենք մեր ժողովրդական տնտեսության ամբողջությանը վերաբերող թվերին։

Յեթե համեմատենք գյուղատնտեսությունը, նրա 1924–25 թվի ընդհանուր արտադրությունը, նրա մակարդակը նախապատերազմյան մակարդակի հետ, 1913 թ. մակարդակի հետ, կտեսնենք, որ նա վերջինիս 71 տոկոսն է կազմում։ Այլ խոսքով ասած՝ 1913 թվին նախապատերազմյան գներով արտադրվել է ավելի քան 12 միլիարդ ռուբլու մթերք, իսկ 1924/25 թվին արտադրվել է ավելի քան 9 միլիարդ ռուբլու մթերք։ Մեր պլանավորող մարմինների ձեռքի տակ գտնվող տվյալներից յերևում է, որ առաջիկա 1925/26 թվին մեր արտադրությունը ավելի յէ բարձրանալու և յենթադրվում է, որ կհասնի 11 միլիարդ ռուբլու, այսինքն նախապատերազմյան չափերի 87 կամ 88 տոկոսին։ Ուրեմն գյուղատնտեսությունն աճում է—ահա ինքնաբերաբար արվող յեզրակացությունը։

Արդյունաբերություն։ Յեթե վերցնենք ամբողջ արդյունաբերությունը—և պետականը, և կոնցեսիոնը, և մասնավորը, կտեսնենք, որ 1913 թվին ամբողջ արդյունաբերությունը տվել է 7 միլիարդ ռուբլու ընդհանուր արտադրույթ, 1924—25 թվին տվել է 5 միլիարդ։ Սա նախապատերազմյանի 71 տոկոսն է։ Մեր պլանավորող օրգանները կարծում են, որ յեկող տարի մեր արտադրությունը կհասնի $6^1/_2$ միլիարդի, այսինքն կկազմի նախապատերազմյան չափերի մոտ 95 տոկոսը։ Ընդհանրապես արդյունաբերությունը բարձրանում է։ Այս տարի նա գյուղատնտեսությունից արագ է բարձրացել։

Առանձին նշանակություն է ստանում ելեկտրիֆիկացիայի հարցը։ Ըստ ГОЭЛРО-ի պլանի 1921 թվին ծրագրված էր 10—15 տարվա ընթացքում կառուցել 30 ելեկտրակայան 1.500.000 կիլոուատտ ուժով և 800 միլիոն ոսկի ռուբլու արժողությամբ։ Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը ելեկտրակայանների ուժը հավասար է յեղել 402.000 կիլոուատտի։ Մինչև ներկա ժամանակը մենք կառուցել ենք 152,350 կիլոուատտի կայան, և ծրագրված է 1926 թվին ավարտել 326,000 կիլոուատտ։ Յեթե զարգացումն ընթանա այս թափով, 10 տարվա ընթացքում, այսինքն մոտավորապես 1932 (նվազագույն չափերով առնված ժամկետ) ԽՍՀՄ ելեկտրիֆիկացիայի ծրագիրն իրագործված կլինի։ Ելեկտրաշինարարության աճմանը զուգընթաց աճում է ելեկտրա-տե-

դյունաբերությունը, վորի ծրագիրը 1925—26 թվին նախագծված է նախապատերազմյանի 165—170 տոկոսի չափերով։ Սակայն անհրաժեշտ է նկատել, վոր մեր ջրաէլեկտրակայանների կառուցումը միջոցների գերծախսման է հասցնում՝ նախագծված պլանի համեմատությամբ։ Օրինակ՝ Վոլխովշինի սկզբնական նախահաշիվը կազմված էր 24.300.000 ոսկենտիր ռուբլու սահմաններում, իսկ 1925 թվի սեպտեմբերին այդ գումարը հասավ 95.200.000 չերվոն ռուբլու, վորը կազմում է առաջին հերթի դրված կառուցվող կայանների վրա ծախսված գումարների 59 տոկոսը, մինչդեռ Վոլխովշինի ուժը կազմում է այդ կայանների ուժի 30 տոկոսը։ Զեմո-Ավչալյան կայանի կառուցման սկզբնական նախահաշիվը կազմված էր 2.600 900 վոսկի ռուբլու սահմաններում, մինչդեռ այդ կայանի վերջին պահանջները կազմում են մոտ 16 միլիոն չերվոն ռուբլի, վորից 12 միլիոնն արդեն ծախսված է։

Յեթե վերցնենք և համեմատենք այսպես թե այնպես միավորված պետական և կոոպերատիվ արդյունաբերության արտադրությունը մասնավոր արդյունաբերության արտադրության հետ, ապա թե ինչ կտեսնենք. 1923/24 թվին պետական և կոոպերատիվ արդյունաբերության արտադրությունը կազմել է ամբողջ արդյունաբերական արտադրության մեկ տարվա 76 տոկոսը, մասնավորը —23,7 տոկոսը։ Իսկ 1924/25 թվին պետական և կոոպերատիվ արդյունաբերության բաժինը կազմում է 79,3 տոկոսը, մասնավոր արդյունաբերության բաժինն արդեն վոչ թե 23,7 տոկոս է, այլ 20 7 տոկոս։

Մասնավոր արդյունաբերության տեսակարար կշիռն այս ժամանակամիջոցում ընկնում է։ Յենթադրվում է, վոր պետական և կոոպերատիվ արդյունաբերության բաժինն յեկող տարի կկազմի մոտ 80 տոկոսը, իսկ մասնավորինը կիջնի մինչև 20 տոկոսի։ Բացարձակ հաշվով մասնավոր արդյունաբերությունն աճում է, բայց վորովհետև պետական և կոոպերատիվ արդյունաբերությունն ավելի արագ է աճում, ապա մասնավոր արդյունաբերության տեսակարար կշիռը պրոգրեսսիվ ընթացքով ընկնում է։

Ահա մի փաստ, վոր չի կարելի նկատի չառնել, և վորը վկայում է, վոր սոցիալիստական արդյունաբերության գերակշռումը՝ մասնավոր արդյունաբերության համեմատությամբ՝ անվիճելի փաստ է։

Յեթե վերցնենք պետության ձեռքում կենտրոնացած գույքը և այն գույքը, վոր գտնվում է մասնավոր տնտեսարար անձերի ձեռքին, ապա կտեսնենք, վոր այս ասպարեզում ես—յես նկատի ունեմ պետպլանի կոնտրոլ-թվերը — գերակշռությունը պրոլետարական պետության կողմն է, վորովհետև հիմնական ֆոնդ պետության ձեռքին կա վոչ պակաս 11,7 միլիարդ ռուբլուց (չերվոն ռուբլով), իսկ մասնավոր մանրտնտեսներին, գլխավորապես գյուղացիական տնտեսություններ-

քին, պատկանում են $7^1/_2$ միլիարդ ռուբլուց վոչ ավելի ֆոնդեր, այսինքն անհամեմատ ավելի քիչ։

Սա մի փաստ է, վորը վկայում է, վոր հանրայնացրած ֆոնդերն անհամեմատ ավելի մեծ են, և վոր դրանց տոկոսը հանրայնացման չենթարկված գույքերի համեմատությամբ աճում է։

Բայց և այնպես մեր հասարակակարգը դեռևս չի կարելի անվանել վոչ կապիտալիստական, վոչ սոցիալիստական։ Մեր հասարակակարգն ընդհանրապես անցողական է՝ կապիտալիզմից դեպի սոցիալիզմ, և այստեղ մասնատիրական գյուղացիական արտադրությունը, արտադրության ծավալի տեսակետից, դեռևս գերակշռում է, բայց սոցիալիստական արդյունաբերության բաժինն աճում է վոչ թե որերով, այլ ժամերով։ Սոցիալիստական արդյունաբերության բաժինն այնպես է աճում, վոր այդ արդյունաբերությունը, ոգտվելով իր կոնցենտրացիայի յենթակվելու փաստից, ոգտվելով իր կազմակերպվածությունից, ոգտվելով նրանից, վոր մեզ մոտ պրոլետարիատի դիկտատուրա յե հաստատված, վոր տրանսպորտը պետության ձեռքին է, ոգտվելով նրանից, վոր վարկային սիստեմը մերն է, և բանկերը՝ նույնպես,—ոգտվելով այդ ամենից՝ մեր սոցիալիստական արդյունաբերությունը, վորի բաժինը մեր ամբողջ ժողովրդական արտադրության մեջ աճում է քայլ առ քայլ, ժամ առ ժամ—այդ արդյունաբերությունը, առաջ ընթանալով, սկսում է իրեն յենթարկել մասնավոր արդյունաբերությունը, իրեն հարմարեցնել և իր յետևից տանել տնտեսության բոլոր մյուս ձևերը։ Այդպես է արդեն գյուղի բախտը, վոր նա պետք է գնա քաղաքի յետևից, խոշոր արդյունաբերության յետևից։

Ահա այն հիմնական յեզրակացությունը, վորին հանգում ենք, յերբ հարց ենք հարուցում մեր կարգի բնույթի, այդ կարգում ընդհանուր ժողովրդական արտադրության մեջ սոցիալիստական արդյունաբերության ունեցած բաժնի, մասնավոր-կապիտալիստական արդյունաբերության բաժնի, վերջապես, մանր-ապրանքային արտադրության բաժնի մասին։

Յերկու խոսք պետբյուջեյի մասին։ Ձեզ պետք է հայտնի լինի, վոր նա հասել է մինչև 4 միլիարդ ռուբլու։ Յեթե հաշվենք նախապատերազմյան ռուբլիներով, կտեսնենք, վոր մեր պետական բյուջեն նախապատերազմյան պետական բյուջեյի համեմատությամբ կազմում է վոչ պակաս քան 71%։ Այնուհետև յեթե մեր ընդհանուր պետական բյուջեյի գումարին ավելացնենք տեղական բյուջեների գումարները, ինչ չափով վոր հնարավոր է հաշվել, կտեսնենք, վոր մեր պետական բյուջեն կկազմի վոչ պակաս 74,6 տոկոսը՝ 1913 թվի համեմատությամբ։ Բնորոշն այն է, վոր մեր պետական բյուջեյի սիստեմում վոչ հարկային յեկամուտների տեսակարար կշիռն ավելի բարձր է, քան հարկային

յեկամուտների տեսակարար կշիռը։ Այս բոլորը նույնպես վկայում է, վոր մեր տնտեսությունն աճում է և առաջ գնում։

Մեր պետական և կոոպերատիվ ձեռնարկություններից անցյալ տարվա մեր ստացած շահույթի հարցն ունի կարևորագույն նշանակություն, վորովհետև մենք կապիտալով աղքատ, դրսից խոշոր փոխառություն չստացած յերկիր ենք։ Մենք պետք է ամենայն ուշադրությամբ հետևենք ու ծանոթանանք մեր արդյունաբերական, առևտրական ձեռնարկությունների, բանկերի և կոոպերացիայի դրությանը, վորպեսզի իմանանք, թե ինչ միջոցներ կարող ենք ունենալ մեր տրամադրության տակ մեր արդյունաբերության հետագա ծավալման համար։

1923—24 թ. համամիութենական նշանակություն ունեցող պետարդյունաբերությունն ու Գոսբանկը տվել են, կարծեմ, մոտ 142 միլիոն չերվոն ռուբլի շահույթ։ Դրանից 71 միլիոն ռուբլին հատկացված է գանձարանին։ 1924—25 թվին մենք ստացել ենք արդեն 315 միլիոն։ Դրանից ըստ պլանի յենթադրվում է 173 միլիոն ռուբլի հատկացնել գանձարանին։ Դա կազմում է շահույթի 54 տոկոսը։ Համամիութենական նշանակություն ունեցող պետական առևտուրը 1923/24 թվին տվել է մոտ 37 միլիոն ռուբլի, վորից 14 միլիոն ռուբլի գանձարանի յեկամուտ է գրված։ 1925 թվին մենք պակաս ստացանք,—մոտ 22 միլիոն ռ., և այդ՝ շնորհիվ գների իջեցման քաղաքականության։ Այդ գումարից գանձարանի յեկամուտ է գրվելու մոտ 10 միլիոն ռուբլի։

Արտաքին առևտրից 1923—24 թվին մենք ստացել ենք ավելի քան 26 միլիոն ռուբլի շահույթ։ Դրանից մոտ 17 միլ. ռ. մտցվել է գանձարան։ 1925 թվին արտաքին առևտուրը տալիս է կամ, ավելի ճիշտ՝ արդեն տվել է 44 միլիոն ռուբլի։ Դրանից 29 միլիոն ռուբլի գրվում է գանձարանի յեկամուտ։ Ֆինժողկոմատի հաշիվներով 1923—24 թվին բանկերը շահույթ են տվել 46 միլիոն ռուբլի, վորից 18 միլիոն վերածվում է գանձարանի յեկամտի։ 1924—25 թվին շահույթն 97 միլիոն ռ. ավելի յե, և դրանից գանձարանի մասը է գրված 51 միլիոն ռ.։ Սպառողական կոոպերացիան 1923—24 թվին տվել է 57 միլիոն ռուբլի շահույթ, գյուղատնտեսականը՝ 4 մլ. ռուբլի։

Հենց նոր բերած իմ թվերն ավելի կամ պակաս չափով նվազեցրած են։ Դուք գիտեք թե ինչու։ Դուք գիտեք, թե մեզ մոտ տնտեսական մարմիններն ինչպես են հաշիվ անում, վորպեսզի իրենց գործերն ընդարձակելու համար կարելույն չափ մեծ գումար թողնեն։ Յեթե այդ թվերը ձեզ փոքր թվան, իսկ դրանք իրոք փոքր են, դուք նկատի ունեցեք, վոր դրանք միքիչ նվազեցրած են։

Միքանի խոսք էլ մեր արտաքին առևտրի շրջանառությունների մասին։

Յեթե մեր առևտրական ամբողջ շրջանառությունը 1913 թվի

համար ընդունենք վորպես 100, կտեսնենք, վոր 1923/24 թվին մենք մեր արտաքին առևտրի ասպարեզում հասել ենք նախապատերազմյան չափերի 21 տոկոսին, 1924/25 թվին՝ նախապատերազմյան սահմանի 26 տոկոսին։ Մեր արտահանությունը 1923/24 թվին հավասար էր 522 միլիոն ռուբլու, ներմուծումը—439 միլիոն ռուբլու, ընդհանուր շրջանառությունը—962 միլ. ռուբլու, ակտիվ սալդոն—83 միլիոն ռ.։ 1923/24 թվին մենք ունեցել ենք ակտիվ առևտրական բալանս։ 1924/25 թվին մեր արտահանությունը հավասար էր 564 միլ. ռուբլու, ներմուծումը—708 միլ. ռուբլու, ընդհանուր շրջանառությունը—1272 միլ. ռ., սալդոն—մինուս 144 միլ. ռ. այս տարին արտաքին առևտրի ասպարեզում մենք փակեցինք 144 միլ. ռ. պասսիվ բալանսով։

Թույլ տվեք ինձ փոքր ինչ կանգ առնել այս խնդրի վրա։

Անցած տնտեսական տարվա մեր այս պասսիվ սալդոն շատերը մեզ մոտ տրամադիր են բացատրել նրանով, վոր մենք այս տարի անբերրիության հետևանքով շատ հաց ներմուծեցինք։ Բայց հաց մենք ներմուծել ենք 83 միլիոն ռուբլու, իսկ այստեղ մինուս ստացվել է 144 միլիոն ռուբլի։ Ո՞ւր է տանում մինուսը։—Դեպ այն, վոր մենք, գնելով ավելի, քան մենք վաճառում ենք, ներմուծելով ավելի, քան արտահանում ենք-դրանով հարցականի տակ ենք դնում մեր հարգարման բալանսը և, հետևապես, նաև մեր վալյուտան։ Մենք ունենք մեր կուսակցության XII համագումարի հրահանգն այն մասին, վոր կուսակցությունն ամեն գնով պետք է աշխատի ակտիվ առևտրական բալանսի հասցնել մեզ։ Ես պետք է խոստովանեմ, վոր մենք բոլորս էլ, և՛ խորհրդային որգանները, և՛ Կենտրոնական Կոմիտեն այստեղ ամենակոպիտ սխալն ենք գործել նրանով, վոր չենք իրագործել մեզ տրված հրահանգը։ Դժվար էր այդ հրահանգն իրագործելը, բայց և այնպես կարելի յեր գոնե վորոշ ակտիվ սալդո ստանալ, յեթե անհրաժեշտ ճնշման դիմեյինք։ Մենք այդ կոպիտ սխալը գործեցինք, և համագումարը պետք է ուղղի այդ սխալը։ Բայց պետք է ասեմ, վոր Կենտրոնական Կոմիտեն ինքը ես աշխատեց ուղղել այդ սխալն այս տարվա նոյեմբերի իր հատուկ նիստում, վորտեղ, քննելով մեր ներմուծման և արտածման թվերը, վորոշում ընդունեց այն մասին, վոր յեկող տարի—այդ նիստում մենք ուրվագծում եյինք մեր արտաքին առևտրի շրջանառության հիմնական տարրերը՝ յեկող տարվա համար,—վոր յեկող տարի պետք է մեր արտաքին առևտուրն ավարտենք գոնե մի 100 միլիոն ռ. ակտիվ սալդոյով։ Այդ անհրաժեշտ է։ Դա բացարձակապես անհրաժեշտ է մի այնպիսի յերկրի համար, վորպիսին մերն է, վորտեղ կապիտալներ քիչ կան, վորտեղ արտասահմանից կապիտալներ չեն ներմուծվում կամ ներմուծվում են նվազագույն չափերով, և վորտեղ հարդարման բալանսը պետք է ապահովվի ի հաշիվ առևտրական բա-

լանսի, վորպեսզի չերվոնեցի մեր վալյուտան չտատանվի, ու վորպեսզի, վալյուտան պահպանելով, մենք դրանով իսկ կարողանանք պահպանել մեր արդյունաբերության և գյուղատնտեսության հետագա ընդարձակման հնարավորությունը: Դուք բոլորդ էլ անձնական փորձով գիտեք, թե ինչ է նշանակում տատանվող վալյուտա: Այս չարաբաստիկ կետին մենք պետք է վերադառնանք և պետք է ձեռք առնենք ամեն միջոց, վորպեսզի հիմքում վերացնենք այն ֆակտորները, վորոնք կարող են մեզ հետագայում ընդհուպ մոտեցնել այնպիսի պայմանների, վորոնք կարող են տատանել մեր վալյուտան:

Սրանք են այն թվերն ու դատողությունները, վորոնք վերաբերում են մեր ամբողջ ժողովրդական տնտեսությանը, արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը առանձին-առանձին. Նրանք վերաբերում են սոցիալիստական արդյունաբերության ունեցած տեսակարար կշռին տնտեսության այլ տեսակների նկատմամբ, ինչպես և սոցիալիզմի կառուցման այն ղեկավար գաղափարներին, վորոնց մասին յես խոսեցի, վորոնց տեսակետի վրա յե կանգնած Կենտրոնական Կոմիտեն:

2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.

Այնուհետև յեթե վերցնենք այն հարցերը, վորոնք անմիջականորեն վերաբերում են արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը հանձինս իրենց փոխհարաբերության ներկայումս և ամենամոտիկ ապագայում, կտեսնենք, վոր այդ հարցերը կարող եյին հանգել հետևյալ կետերին.—

Առաջին. մենք դեռևս ագրարային յերկիր ենք. գյուղատնտեսության արդյունքը գերակշռում է արդյունաբերության արդյունքին: Հիմնականն արդյունաբերության մեջ այն է, վոր նա արդեն մոտեցել է նախապատերազմյան չափերի սահմանին, վոր մեր հետագա քայլերն արդյունաբերության մեջ նշանակում են՝ արդյունաբերության ծավալումը նոր տեխնիկական պատվանդանի վրա, այսինքն՝ նոր վերասարքավորում, նոր գործարանների կառուցում: Սա շատ դժվար գործ է: Այս շեմքից, այսինքն՝ արդյունաբերության ասպարիզում մեր ունեցածն առավելագույն չափերով օգտագործելու քաղաքականությունից անցնել նոր արդյունաբերության կառուցման՝ տեխնիկական նոր պատվանդանի, գործարանային նոր շինարարության պատվանդանի վրա— այս շեմքից անցնելը մեծ կապիտալներ է պահանջում: Բայց վորովհետև կապիտալների պակասը մեզ մոտ նշանակալի չափերի յե հասնում, ուստի հետագայում մեր արդյունաբերության զարգացումն ամենայն հավանականությամբ ընթանալու յե վոչ այնպիսի արագ թափով, վորպիսի թափով մինչև այժմ եր ընթանում: Այլ է գյուղատնտեսության վիճակը: Չի կարելի ասել, թե գյուղատնտեսության մեջ պարունակվող բոլոր

կարելիություններն արդեն սպառված են։ Գյուղատնտեսությունն արդյունաբերությունից տարբերվում է և նրանով, որ նա դեռևս մի որոշ ժամանակ կարող է արագ թափով առաջ շարժվել նաև ներկա տեխնիկական պատվանդանի վրա։ Նույնիսկ գյուղացիների կուլտուրականության, նրանց գրագիտության աննշան բարձրացումը, նույնիսկ այնպիսի մի հասարակ բան, որպիսին սերմերի զտելն է,—անգամ դրանք կարող են 10—15 տոկոսով բարձրացնել գյուղատնտեսության ընդհանուր արդյունքը։ Ահա մի հաշվեցեք, թե այդ ինչ է նշանակում ամբողջ յերկրի համար։ Ահա թե ինչպիսի կարելիություններ են թաքնված հողագործության մեջ։ Ահա թե ինչու հողագործության հետագա զարգացումն առայժմ այնպիսի տեխնիկական դժվարությունների չի հանդիպում, որպիսի դժվարությունների հանդիպում է մեր արդյունաբերությունը։ Այս պատճառով արդյունաբերության բալանսի և գյուղատնտեսության բալանսի միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունը հ ե տ ա գ ա յ ու մ, առաջին մի քանի տարիների ընթացքում, դեռևս աճելու է շնորհիվ այն բանի, որ գյուղատնտեսության մեջ թաքնված են ներքին մի շարք պոտենցիալ կարելիություններ, որոնց մասին տակավին չի կարելի ասել, թե օգտագործված են, և որոնց պետք է օգտագործել մոտավոր տարիների ընթացքում։

Այս պայմանների հետևանքով ինչ խնդիրներ են կանգնած մեր առաջ։ Նախ այն խնդիրը, որ ինչ կուզի լինի՝ պետք է բարձրացնենք մեր խոշոր արդյունաբերությունը, հաղթահարելով մեր առաջ կանգնած դժվարությունները։ Յերկրորդ՝ մենք պետք է բարձրացնենք **տեղական** տիպի խորհրդային արդյունաբերությունը։ Ընկերներ, մենք չենք կարող մեր ուշադրությունը կենտրոնացնել միայն համամիութենական տիպի արդյունաբերության զարգացման վրա, որովհետև համամիութենական արդյունաբերությունը, մեր կենտրոնացված տրեստները ու սինդիկատները չեն կարող բավարարել մեր 140 միլիոնանոց բնակչության այնքան բազմազան ու բազմապիսի ճաշակն ու պահանջները։ Որպեսզի կարողանանք բավարարել բազմամիլիոն բնակչության բազմատեսակ ճաշակն ու պահանջները, պետք է աշխատենք ստեղծել այնպիսի դրություն, որ կյանքը, արդյունաբերական կյանքը յեռա յուրաքանչյուր ռայոնում, յուրաքանչյուր շրջանում, յուրաքանչյուր նահանգում, մարզում, ազգային հանրապետության մեջ։ Զկաշկանդելով տեղերում թաքնված ուժերը, տնտեսական շինարարության գծով տեղական արդյունաբերությունը, սկսած շրջաններից ու գավառներից, ամեն կերպ նպաստելով,—այդ բոլորը կատարելով միայն մենք կարող ենք հասնել մեր յերկրի տնտեսական շինարարության այն ընդհանուր բարձրացմանը, որի մասին խոսում էր Լենինը։ Առանց դրա, առանց

կենտրոնի շահերն ու օգուտները կապելու տեղերի շահերի ու օգուտների հետ, մենք չենք կարող լուծել տեղական շինարարական նախաձեռնությունը կաշկանդանքից ազատելու պրոբլեմը, յերկրի ընդհանուր տնտեսական բարձրացման պրոբլեմը յերկրի արագ ինդուստրիացման պրոբլեմը։

Յերկրորդ. Առաջ վառելիքի բա հարցնում գերարտադրության խնդիրն էր կանգնած։ Այժմ մենք մոտենում ենք վառելիքի կրիզիսի հարցին, վորովհետև մեր արդյունաբերությունն ավելի արագ է աճում, քան վառելիքը։ Մենք մոտենում ենք այն մակարդակին, վորի վրա կանգնած եր մեր յերկիրը բուրժուական կարգերում, յերբ վառելիքը պակասում եր. և մենք ստիպված եյինք լինում վառելիք ներմուծել, ուրիշ խոսքով ասած՝ դուրս է գալիս, վոր վառելիքի բալանսը չի համապատասխանում արդյունաբերության բալանսին, նրա կարիքներին։ Այստեղից ծագում է մեր վառելիքի տնտեսության ուժեղացրած զարգացման, նրա տեխնիկայի բարելավման խնդիրը, վոպեսզի վառելիքը հասնի, իր զարգացմամբ կարողանա հասնել արդյունաբերության զարգացմանը։

Յերրորդ Վորոշ անհամապատասխանություն կա մետաղի բալանսի և ամբողջ ժողովրդական տնտեսության բալանսի մեջ։ Յեթե հաշվենք մետաղի նվազագույն պահանջը և մետաղ արտադրելու առավելագույն հնարավորությունը, կտեսնենք, վոր մեզ մոտ մետաղն ամբողջ տասնյակ միլիոններով պակասում է։ Մեր տնտեսությունը, մանավանդ մեր արդյունաբերո թյունն, այսպես առաջ շարժվել չի կարող։ Ուստի այս հանգամանքի վրա պետք է դարձնել հատուկ ուշադրություն։ Մետաղը մեր արդյունաբերության հիմքերի հիմքն է, և նրա բալանսը պետք է համապատասխանի մեր արդյունաբերության և առհասարակ տրանսպորտի բալանսին։

Չորրորդ. Մեր վորակյալ բանվորական ուժի բալանսը չի համապատասխանում մեր արդյունաբերության բալանսին։ Մի շարք թվեր են հրապարակված մամուլում, յես այդ թվերը նորից չեմ հրապարակի, միայն կասեմ, վոր լրացուցիչ վորակյալ բանվորական ուժի կարիքը մեր արդյունաբերության մեջ 1925/26 թվին հավասար է 433 հազար մարդու, իսկ մենք կարող ենք տալ այդ կարիքի միայն մեկ քառորդ մասը։

Հինգերորդ. Այնուհետև յես կուզեյի հիշատակել ևս մի թերություն ու անհամապատասխանություն, վոր կայանում է նրանում, վոր յերկաթուղու շարժական կազմի օգտագործման չափն անցնում է ամեն չափից։ Շարժական կազմի աշխատանքի պահանջն այնքան մեծ է, վոր յեկող տարի մենք հարկադրված կլինենք օգտագործել մեր շոգեկառքերն ու վագոնները վոչ թե կարելիության 100 տոկոսով,

ալ 120—130 տոկոսով։ Այսպիսով Հաղորդակցության Ճանապարհների Ժողովրդական Կոմիսարիատի հիմնական կապիտալը չափից դուրս շատ է մաշվել, և մոտիկ ապագայում մենք կարող ենք կանգնել աղետի առաջ, յեթե կտրուկ միջոցներ ձեռք չառնենք։

Ահա այն բոլոր թերություններն ու անհամապատասխանությունները, որ գոյություն ունեն մեր ժողովրդական տնտեսության մեջ ընդհանրապես և արդյունաբերության մեջ՝ մասնավորապես, և որոնք պետք է հաղթահարել։

3. ԱՌԵՎՏՐԻ ԽՆԴԻՐԸ.

Թույլ տվեք այժմ անցնել առևտրի ասպարեզին։ Թվերը վկայում են, որ այս ասպարեզում ևս, ինչպես և արդյունաբերության ասպարեզում, պետական տարրերի տեսակարար կշռի աճումը մասնավոր կապիտալիստական տարրերի համեմատությամբ ավելի արագ է կատարվում։ Յեթե ընդունենք, որ ներքին առևտրի ընդհանուր շրջանառությունն ապրանքային ռուբլիներով հաշված պատերազմից առաջ հավասար եր 20 միլիարդի, կտեսնենք, որ 1923/24 թվին այդ շրջանառությունը հավասար եր 10 միլիարդի, այսինքն նախապատերազմյանի 50 տոկոսին, իսկ 1924/25 թվին նա հավասար եր 14 միլիարդի, այսինքն 71 տոկոսին։ Ներքին շրջանառության ընդհանուր աճումն անկասկածելի յե։ Յեթե խոսենք այն մասին, թե այս շրջանառության որ մասն է պատկանում պետությանը, կտեսնենք, որ 1923/24 թվին պետության բաժինը հավասար եր ներքին առևտրի ամբողջ շրջանառության 45 տոկոսին, կոոպերացիայի բաժինը՝ 19 տոկոսին, մասնավոր կապիտալի բաժինը՝ 35 տոկոսին։ Իսկ հետևյալ տարում, այսինքն 1924/25 թվին, պետության բաժինը հավասար եր 50 տոկոսի, կոոպերացիայի բաժինը՝ 19 տոկոսի փոխարեն՝ 24,7 տոկոսի, մինչդեռ մասնավոր կապիտալի բաժինը 35-ի փոխարեն իջել եր 24,9 տոկոսի։ Մասնավոր կապիտալի բաժինն ընդհանուր շրջանառության մեջ նվազում է, պետության և կոոպերացիայի բաժինները աճում են։ Յեթե շրջանառությունը բաժանենք յերկու մասի, մեծածախսի և մանրածախսի, այստեղ նույն տենդենցը կտեսնենք։ Մեծածախսի ասպարեզում 1923/24 թվին պետության բաժինը հավասար եր ամբողջ շրջանառության 62-ից փոքր ինչ ավելի տոկոսի, իսկ 1924/25 թվին՝ 68,9 տոկոսի։ Ավելացումն ակնհայտ է։ Կոոպերացիայի մեջ մենք տեսնում ենք ավելացում $15^{0}/_{0}$-ից մինչև 19-ը։ Մասնավոր առևտրի բաժինը հավասար եր $21^{0}/_{0}$-ի, ներկայումս իջել է $11^{0}/_{0}$-ի։ Մանրածախսի մեջ 1923/24 թվին պետության բաժինը հավասար եր 16 տոկոսի, իսկ 1924/25 թվին՝ համարյա թե 23 տոկոսի։ Կոոպերացիայի բաժինը մանրածախսի շրջանառության մեջ անցյալ տարի կազմում եր 25,9 տոկոս, իսկ 1924/25 թվին հավասար

է 32,9 տոկոսի։ Աճումն անկասկածելի յե։ Մասնավոր կապիտալի բաժինը մանրածախի շրջանառության մեջ 1923/24 թվին հավասար եր 57 տոկոսի, իսկ այժմ հավասար է 44,3 տոկոսի։ Մանրածախի ասպարեզում մենք ակնհայտ կերպով առաջադիմել ենք, շեմքից անցել ենք։ Անցյալ տարի մանրածախի ասպարեզում մասնավոր կապիտալն եր գերակշռում, այս տարի գերակշռում են պետությունն ու կոոպերացիան։

Հում նյութի և հացի մթերման ասպարեզում պետության և կոոպերացիայի դերի նշանակության աճումը հետևյալ պատկերն է ներկայացնում. պետության և կոոպերացիայի բաժինը ձիթաբեր սերմերի մթերման մեջ 1924/25 թվին կազմում եր 65 տոկոսը, վուշի մթերման մեջ՝ 94 տոկ., բամբակի մթերման մեջ՝ համարյա թե 100 տոկոսը, հացի մթերման մեջ 1923/24 թվին՝ 75 %-ը, 1924/25 թվին՝ 70 տոկոսը։ Վերջին ասպարեզում վորոշ նվազում է տեղի ունեցել։ Ընդհանրապես պետական և կոոպերատիվ տարրերի աճումը ներքին առևտրի ասպարեզում անկասկածելի յե ինչպես մեծածախի, այնպես էլ մանրածախի գծով։

Թեև հացի մթերման ասպարեզում պետության բաժնի տոկոսը գերակշռում է, բայց և այնպես նա ավելի պակաս է աճում, քան անցյալ տարի. սրա պատճառն այն սխալներն են, վոր արվել եյին հացամթերման գործում։ Բանն այն է, վոր մթերման ասպարեզում արված սխալները միայն խորհրդային մարմինների սխալներ չեն, այլև կենտկոմի սխալները, վորովհետև վերջինս պետք է հետևի խորհրդային որգաններին, նա պատասխանատու յե այն ամենի համար, ինչ վոր կատարվում է խորհրդային որգաններում։ Սխալն այն է, վոր պլանավորման ժամանակ մենք հաշվի չառանք այն, վոր շուկայի դրությունը և մթերման պայմաններն այս տարի յերևան են բերում մի նոր, անցյալ և նախանցյալ տարիներից տարբեր, հանգամանք։ Այս տարին առաջինն է, յերբ մենք հացի շուկայում հանդես ենք գալիս առանց ադմինիստրատիվ ճնշման միջոցներ ձեռք առնելու, յերբ մենք հարկի ծանրությունը, հարկային պրեսը նվազագույն չափերի յենք հասցրել, և յերբ գյուղացին ու կառավարության գործակալը յերես առ յերես են կանգնել շուկայում, վորպես հավասար մարդիկ։ Այս հանգամանքներն է ահա, վոր հաշվի չեն առել մեր պլանավորող մարմինները, վորոնք ծրագրել եյին առ 1-ն հունվարի 1926 թվի կատարել հացի բոլոր տարեկան մթերումների 70 տոկոսը։ Մենք հաշվի չառանք, վոր գեղջուկն էլ է կարողանում մանյովրներ անել, վոր նա պահում է իր վալյուտային ապրանքը, ցորենը—ապագայի համար, գների հետագա բարձրացման սպասելով, և գերադասում է առայժմ շուկա հանել այլ, պակաս արժեքավոր, հացամթերք։ Այդ բանը մենք հաշվի չառանք։ Դրա հետևանքով փոխեցինք մթերման պլանը և կրճատեցինք հացի ար-

տահանության պլանը նույնպես, ինչպես որ համապատասխան ձևով կրճատված է ներմուծման պլանը: Վերաքննվում է արտահանման և ներմուծման պլանը, որը պետք է կազմվի այնպես, որ տա առնվազն 100 միլիոն ռ. ակտիվ սալդո, սակայն այդ ծրագիրը դեռևս վերջնականապես մշակված չէ:

4. ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ, ՆՐԱՆՑ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆՑ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.

Ժողովրդական տնտեսության զարգացումը մեր յերկրում նյութական դրության բարվոքում բերեց ամենից առաջ ամբողջ բանվոր դասակարգին: Բանվոր դասակարգի ապադասակարգայնանալը մեր յետևն է մնացել: Բանվոր դասակարգի վերականգնումն ու աճումը կատարվում է արագ թափով: Ահա և թվերը. առ 1-ն ապրիլի 1924 թվի,—յեթե հաշվենք բոլոր բանվորներին,—արդյունաբերության բոլոր ճյուղերում, հաշված նաև մանրը, հաշված սեզոնային բանվորներին և գյուղատնտեսական բանվորներին՝ Աշխժողկոմատի տվյալներով—մենք ունեյինք 5,500.000 բանվոր. սրանցից՝ 1 միլիոն բատրակներ և 760.000 գործազուրկներ: Առ 1-ն հոկտեմբերի 1925 թվի վարձու բանվորների թիվը 7 միլիոնից ավելի յեր, որից 1.200.000 բատրակներ և 715.000 գործազուրկներ: Բանվոր դասակարգի աճումն անկասկածելի յե:

Բանվորների միջին ամսական աշխատավարձն ամբողջ արդյունաբերության մեջ, չերվոն ռուբլիներով հաշված, կազմում եր 1925 թվի ապրիլին՝ 35 ռ. մի բանվորին, այսինքն նախապատերազմյանի 62 տոկոսը,—1925 թվի սեպտեմբերին՝ 56 ռ. կամ նախապատերազմյանի 95 տոկոսը: Կան արդյունաբերության առանձին ճյուղեր, որոնք անցել են նախապատերազմյան չափերից: Մի բանվորի միջին օրական ռեալ աշխատավարձն ապրանքային ռուբլիներով հաշված կազմում եր. 1925 թվի ապրիլին՝ 0,88 ռուբլի, 1925 թվի սեպտեմբերին՝ 1 ռ. 21 կոպեկ: Մի բանվորի մի օրվա միջին արտադրությունը նախապատերազմյան ռուբլիներով հաշված ամբողջ արդյունաբերության մեջ կազմում եր. 1924 թվի ապրիլին՝ 4 ռ. 18 կ., իսկ 1925 թվին՝ 6 ռ. 14 կ., այսինքն հավասար եր նախապատերազմյանի 85 տոկոսին: Յեթե վերցնենք աշխատավարձի և աշխատանքի արտադրականության փոխհարաբերությունները ըստ ամիսների, կտեսնենք, որ նրանք զուգընթաց են բարձրանում. աճում է աշխատավարձը, բարձրանում է նաև աշխատանքի արտադրականությունը: Բայց հունիսին և հուլիսին աշխատավարձը բարձրանում է, իսկ աշխատանքի արտադրականությունն աշխատավարձի համեմատությամբ նվազ չափով է բարձրանում: Այս բացատրվում է արձակուրդներով և նրանով, որ բանվորների նոր շերտեր—կիսագյուղացիներ են գալիս ֆաբրիկաներն ու գործարանները:

Այժմ անցնենք աշխատավարձի ֆոնդերին։ Աշխատավարձի ֆոնդերն, ըստ Աշխժողկոմատի տվյալների (յես նկատի ունեմ արդյունաբերությունը և չեմ շոշափելու այլ հիմնարկները), 1923/24 թվին կազմում եյին 808 միլիոն ռուբլի, 1924/25 թվին՝ ավելի քան 1.200 միլիոն ռուբլի, 1925/26 թվին՝ յենթադրվում է 1.700 միլ. ռուբլի։ Ընկերներ, յես չեմ խոսի այն մասին, թե ինչի վրա յեն ծախսվում սոցիալական ապահովության ֆոնդերը. այդ ամենքը գիտեն։ Թույլ տվեք բերեմ միայն մի ընդհանուր թիվ, վորպեսզի հնարավորություն տամ ձեզ իմանալ, թե ինչքան է ծախսում պրոլետարական պետությունն ապահովության գործի վրա։ Ապահովագրվածների ընդհանուր թիվը 1924/25 թվին 6.700 հազար էր, իսկ 1925/26 թվին յենթադրվում է 7.000.000։ Ապահովագրական մուծանքի միջին տոկոսը 1924/25 թվին կազմում էր աշխատավարձի 14,6 $^0/_0$-ը, 1925/26 թվին յենթադրվում է աշխատավարձի 13,84 տոկոսը։ Յեթե այդ վերածենք ընդհանուր գումարի, կտեսնենք, վոր 1924/25 թվին այդ գործին հատկացվել է 442 միլիոն ռուբլի, իսկ 1925/26 թվին յենթադրվում է 588 միլիոն ռուբլի։ Գուցե ավելորդ չի լինի ասել, վոր անցյալ տարվա համար հատկացված ֆոնդից սոցիալական ապահովության գանձարկղում մնացել է մի վորոշ գումար, վորը հավասար է 71 միլիոնի։

Անցնելով գյուղացիությանը, պետք է ասենք, վոր գյուղատնտեսության արդյունքի բարձրացումը, բնականաբար, չեր կարող չանդրադառնալ գյուղացիական տնտեսության նյութական դրության բարելավման վրա։ Մեր պլանավորող մարմինների տվյալներից յերևում է, վոր գյուղի բնակչության սպառումը, անձնական սպառումը և այդ սպառման տոկոսի աճումը բարձր է քաղաքի բնակչության սպառման աճման տոկոսից։ Գեղջուկն սկսել է ավելի լավ ուտել և ավելի մեծ բաժինն է թողնում իր արտադրության մեջ և իր անձնական սպառման համար, քան անցյալ տարի. յեր անում։

Ինչ ոգնություն է ցույց տվել պրոլետարական պետությունը չքավորների տնտեսություններին, անբերրիությունից տուժածներին։ Ֆինժողկոմատը հաշվել է, վոր չքավորներին ցույց տված ֆինանսական ոգնությունը 1924—25 թվին նախնական, վոչ բոլորովին ճիշտ թվերով կազմում է 100—105 միլիոն ռուբլի, վորից հարկային և ապահովագրական արտոնությունները կազմում են մոտ 60 միլիոն ռուբլի, այնուհետև անբերրիության հետևանքների դեմ մաքառելու համար հատկացված ֆոնդից տրված է 24 միլ. ռուբ., վարկային գծով—12 միլիոն ռուբլի։ 1924 թվին անբերրիությունից տուժածներին տրված ոգնությունն ընդգրկում է ավելի քան 7 միլիոն բնակչություն ունեցող մի շրջան։ Ընդամենը ծախսված է այդ գծով 108—110 միլիոն ռ., վորից պետական բյուջեյով 71 միլիոն ռ. և 38 միլիոն հանրային կազմա-

կերպությունների ու բանկային հաստատությունների միջոցներից։

Բացի այդ, կազմված է 77 միլիոնանոց մի ֆոնդ յերաշտի դեմ պայքարելու համար։ Ահավասիկ պրոլետարական պետության տված ոգնությունը գյուղացիության սակավազոր շերտերին. այդ ոգնությունն, իհարկե, բավարար չէ, բայց և այնպես դա մի ոգնություն է, վորի մասին արժե մի յերկու խոսք ասել։

Բանվոր դասակարգի և գյուղացիության նյութական դրության բարելավման այն հիմնական նախադրյալն է, առանց վորի չենք կարող առաջ շարժվել մեր շինարարության բնագավառում։ Մենք տեսնում ենք, վոր այդ նախադրյալն արդեն կա։

Միքանի խոսք մասսաների ակտիվության բարձրացման մասին։ Հիմնական յերևույթը մեր ներքին դրության մեջ, վորն աչքի յե զարնում, և վորից անկարելի յե խուսափել, այն է, վոր բանվորների ու գյուղացիների նյութական դրության բարելավման հետևանքով բարձրացել է նրանց քաղաքական ակտիվությունը, նրանք սկսել են մեր պակասություններին ավելի քննադատորեն վերաբերվել, ավելի բարձրաձայն խոսել մեր գործնական աշխատանքների թերությունների մասին։ Մենք թևակոխել ենք բոլոր դասակարգերի և բոլոր սոցիալական խմբավորումների աշխուժացման շրջանը։ Աշխուժացել է բանվոր դասակարգը, աշխուժացել է գյուղացիությունն իր բոլոր խմբավորումներով, աշխուժացել է նաև նոր բուրժուազիան, նրա գործակալները գյուղում (կուլակները), նրա ներկայացուցիչներն ինտելլիգենցիայի մեջ։ Այս փաստը հիմք ծառայեց մեր քաղաքականության այն թեքման համար, վորի արտահայտությունն են 14 րդ կուսկոնֆերենցիայի վորոշումները։ Խորհուրդների աշխուժացման քաղաքականություն, կոոպերացիայի, արհմիությունների աշխուժացման քաղաքականություն, զիջումներ գյուղացիներին՝ արենդի և վարձու աշխատանքի հարցերի ճշտման մտքով նյութական ոգնություն չքավորներին, միջակի հետ հաստատուն դաշինք կնքելու քաղաքականություն, ռազմական կոմմունիզմի մնացորդների վերացում—ահա թե ինչումն է գլխավորապես արտահայտվել կուսակցության նոր կուրսը գյուղում։ Թե ինչ դրություն եր տիրում գյուղում անցյալ տարվա վերջին ու այս տարվա սկզբին, ձեզ լավ է հայտնի։ Ընդհանուր դժգոհությունը գյուղացիության մեջ աճում եր, իսկ տեղ-տեղ ել նույնիսկ ապստամբության փորձեր արվեցին։ Յես ձեզ կհիշեցնեմ վրացական ապստամբությունը և շրջգործկոմների նախագահների ու մեր բջիջների քարտուղարների նկատմամբ գործադրած բռնի միջոցների մի շարք փաստեր։ Ահավասիկ այն պարագաները, վորոնք վորոշեցին կուսակցության նոր ընթացքը գյուղում։

Սրանք են գյուղացիության նկատմամբ կուսակցության վարած քաղաքականության հիմքերը, մասսաների ակտիվության բարձրաց-

ման և նրանց կազմակերպությունների աշխուժացման շրջանում. մեր քաղաքականությունը, որի նպատակն եր կարգավորել հարաբերությունները գյուղում, բարձրացնել այնտեղ պրոլետարիատի և նրա կուսակցության հեղինակությունը և ապահովել պրոլետարիատի ու չքավորների ամուր դաշինքը միջակ գյուղացիության հետ։

Դուք գիտեք, որ այս քաղաքականությունն ամբողջապես արդարացրեց իրեն։

5. ԼԵՆԻՆԻ ՅԵՐԵՔ ԼՈԶՈՒՆԳՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ.

Ճիշտ վարվեցինք արդյոք կուրս վերցնելով դեպի միջակը։

Ի՞նչ վիճակում է նոր կուրսի սկզբունքային կողմը։ Այս առթիվ Լենինի որևէ ցուցմունքներ չկա՞ն արդյոք։

Ասում են, թե Կոմինտերնի 2-րդ կոնգրեսսում գյուղացիական հարցի առթիվ ընդունված է մի բանաձև, որտեղ ասված է, թե իշխանության համար մղվող պայքարի շրջանում պրոլետարիատին դաշնակից կարող է լինել միայն չքավոր գյուղացիությունը, թե միջակ գյուղացուն միայն կարելի յե չեզոքացնել։

Արդյոք ճիշտ է այդ։—Ճիշտ է։ Լենինը գրել է այդ բանաձևը, նկատի ունենալով այն կուսակցություններին, որոնք դեպի իշխանության նվաճում են գնում։ Իսկ մենք մի կուսակցություն ենք, որն արդեն իշխանության է հասել։ Ահա թե ինչումն է տարբերությունը։ Գյուղացիության հարցի, գյուղացիության կամ նրա առանձին շերտերի հետ բանվորների դաշնակցելու հարցի վերաբերյալ յերեք հիմնական լոզունգ ունի լենինիզմը, որոնք համապատասխանում են հեղափոխության յերեք շրջաններին։ Ամենաեյականն այն է, որ կարողանանք որսալ ճիշտ անցումը մեկ լոզունգից դեպի մյուս լոզունգ և մյուսից դեպի յերրորդը։

Առաջ, յերբ մենք դեպի բուրժուական հեղափոխություն եյինք գնում, յերբ մենք, բոլշևիկներս, առաջին անգամ ուրվագծեցինք մեր տակտիկան գյուղացիության նկատմամբ, Լենինն ասում եր. պետք է դաշնակցել **ամբողջ գյուղացիության հետ** թագավորի և կալվածատերերի դեմ, չեզոքացնելով կադետական բուրժուազիան։ Այս լոզունգով այն ժամանակ մենք դեպի բուրժուական հեղափոխություն եյինք գնում ու մենք հաղթեցինք։ Սա մեր հեղափոխության առաջին փուլն եր։

Այնուհետև, յերբ մենք մոտեցանք յերկրորդ փուլին, Հոկտեմբերին, Լենինը տվեց նոր լոզունգ, որ համապատասխանում եր նոր պայմաններին—պրոլետարիատը պետք է դաշնակցի **չքավոր գյուղացիության** հետ ընդդեմ բոլոր բուրժուաների, **չեզոքացնելով** միջակ գյուղացիությունը։ Սա մի լոզունգ է, որն անհրաժեշտ է այն կոմունիստական կուսակցություններին, որոնք դեպի իշխանություն

են գնում։ Բայց նույնիսկ այն ժամանակ, երբ նրանք իշխանությունը նվաճել են, բայց դեռևս չեն ամրապնդել այդ իշխանությունը, նրանք չեն կարող հույս դնել միջակի հետ դաշինք կնքելու վրա։ Միջակը մի մարդ է, որ տատանվում է. նա սպասում և դիտում է, որտեղ է ուժը, թե ով է հաղթում, և միայն այն ժամանակ, երբ դու հաղթանակում ես, վռնդելով կալվածատերերին ու բուրժուաներին, նա համաձայնվում է քեզ հետ դաշինք կնքել։ Եվ ինչ միջակ, որ այդպես չվարվի։ Ուրեմն մեր հեղափոխության երկրորդ փուլի ընթացքում մենք արդեն առաջ էինք գնում ոչ թե՝ բանվորների դաշինք **ամբողջ** գյուղացիության հետ լոզունգով, այլ՝ պրոլետարիատի դաշինք **ամենաչքավոր** գյուղացիության հետ լոզունգով։ Իսկ հետագայում։— Հետագայում, երբ մենք իշխանությունը բավականաչափ ամրապնդեցինք, իմպերիալիստների գրոհները ետ մղելով, և լայն սոցիալիստական շինարարության շրջան թևակոխեցինք, Լենինն առաջ քաշեց երրորդ լոզունգը—պրոլետարիատը և չքավոր գյուղացիությունը պետք է **ամուր դաշինք** կնքեն միջակ գյուղացիության հետ։ Սա միակ ճիշտ լոզունգն է, որ համապատասխանում է մեր հեղափոխության նոր շրջանին, լայն շինարարության շրջանին։ Այս լոզունգը ճիշտ է ոչ միայն նրա համար, որ դաշինք հիմա կարելի յե կնքել, այլև նրա համար, որ, սոցիալիզմ կառուցելով, մենք պետք է գործի քաշենք ո՛չ միայն միլիոններ, այլև գյուղի մարդկանց տասնյակ-միլիոններ։ Այլ կերպ անկարելի յե սոցիալիզմ կառուցել։ Սոցիալիզմը միայն քաղաքով չի սահմանափակվում։ Սոցիալիզմը տնտեսության այնպիսի կազմակերպություն է, որ միավորում է արդյունաբերությունն ու երկրագործությունը՝ արտադրության միջոցների ու գործիքների համայնացման հիմունքներով։ Առանց տնտեսության այս երկու ճյուղերի միավորման սոցիալիզմն անհնար է։

Ահա ձեզ լենինիզմի լոզունգները գյուղացիության հետ դաշինք կնքելու մասին։

Այն, ինչ որ ասել է ընկ. Լենինը Կոմինտեռնի 2-րդ կոնգրեսում, բացարձակապես ճիշտ է, որովհետև երբ դեպի իշխանություն ես ընթանում կամ դեռևս չես ամրապնդել քո նվաճած իշխանությունը, կարող ես հույս դնել միայն չքավորների հետ դաշինք կնքելու վրա, չեզոքացնելով միջակին։ Բայց երբ դու ամրացել ես, խլել ես իշխանությունը, սկսել ես կառուցել և երբ որ դու արդեն պետք է քաշես տասնյակ-միլիոնավոր մարդկանց—պրոլետարիատի ու չքավորների դաշինքը միջակների հետ՝ միակ ճիշտ լոզունգն է։ Այս անցումը—«պրոլետարիատի դաշինք չքավորների հետ» հին լոզունգից, անցումը՝ միջակ գյուղացիությունը չեզոքացնելու հին լոզունգից դեպի՝ ամուր դաշինք միջակի հետ լոզունգը—տեղի ունեցավ դեռևս մեր կուսա-

կցության VIII համագումարում։ Թույլ տվեք մեջ բերել մի կտոր այն ճառից, որ արտասանել է Իլյիչն այդ համագումարի բացման ժամանակ։ Ահա այդ կտորը.

«Հին ժամանակվա սոցիալիզմի լավագույն ներկայացուցիչները,—յերբ նրանք դեռևս հավատում եյին հեղափոխությանը և թեորիապես ծառայում եյին նրան, խոսում եյին գյուղացիության **չեզոքացման** *մասին, այսինքն այն մասին, որպեսզի այդ միջակ գյուղացուն դարձնեն այնպիսի մի հանրային շերտ, որը յեթե ակտիվ կերպով չօգնի պրոլետարիատի հեղափոխությանը, գոնե և չխանգարի մեր աշխատանքին։ Խնդրի այս վերացական ձևակերպումը մեզ համար միանգամայն պարզ է։ Բայց նա բավական չէ։* **Մենք մտել ենք սոցիալիստական շինարարության այնպիսի շրջան**, *յերբ հարկավոր է կոնկրետ կերպով, մանրամասնաբար, գյուղի աշխատանքի փորձի հիման վրա մշակել հիմնական կանոններ ու ցուցմունքներ, որոնցով մենք պետք է ղեկավարվենք, որպեսզի* **միջակ գյուղացու նկատմամբ կանգնենք ամուր դաշինքի հողի վրա»:**

Այս է կուսակցության քաղաքականության թեորիական հիմունքը. մի քաղաքականություն, որի նպատակն է տվյալ պատմաշրջանում ամուր դաշինք ստեղծել միջակի հետ։

Ով որ ուզում է Կոմինտերնի 2-րդ կոնգրեսի՝ Լենինի գրած բանաձևով հերքել Լենինի այս խոսքերը, թող բացեիբաց ասի։

Այսպես է դրված հարցը թեորիապես։ Մենք ոչ թե Լենինի գրածների առանձին մասերն ենք վերցնում, այլ ամբողջը. գյուղացիության վերաբերյալ յերեք լոզունգ ուներ Լենինը. մեկը դրված եր բուրժուական հեղափոխության ժամանակ, մյուսը—Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ և յերրորդը—Խորհրդային իշխանության ամրապնդվելուց հետո։ Ով որ ուզում է այս յերեք լոզունգը փոխարինել մի որևէ ընդհանուր լոզունգով—նա սխալվում է։

Այսպես է դրված հարցը թեորիապես։ Իսկ գործնականապես հարցը դրված է այնպես, որ յերբ Հոկտեմբերյան հեղափոխությունն անելուց հետո կալվածատերերին մենք վռնդեցինք և հողը բաժանեցինք գյուղացիների միջև, պարզ է, որ մենք Ռուսաստանը փոքր-իշատե միջակացրինք, ինչպես Լենինն է ասում, և այժմ, չնայած շերտավորման պրոցեսին, միջակը գյուղում մեծամասնություն է կազմում։

Շերտավորումն, իհարկե, շարունակվում է։ Նեպի պայմաններում, նրա այժմյան շրջանում, այլ կերպ չէր էլ կարող լինել։ Բայց նա գնում է դանդաղ քայլով։

Յես մոտ ժամանակներս մի ձեռնարկ կարդացի, որ հրատարակել է համարյա թե կենտկոմի ագիտպրոպը, և մեկ ուրիշ ձեռնարկ,

վորը, յեթե չեմ սխալվում, Լենինգրադի կազմակերպության ագիտպրոպն ե հրատարակել։ Յեթե հավատանք այդ ձեռնարկներին, պետք ե ասենք, վոր Թագավորի ժամանակ չքավորները միշտ յերկրում կազմում եյին մոտ 60 տոկոս, իսկ այժմ 75 տոկոս են կազմում. Թագավորի ժամանակ կուլակները կազմում եյին, կարծեմ, մոտ 5 տոկոս, իսկ այժմ մենք ունենք 8 կամ 12 տոկոս. Թագավորի ժամանակ միջակներն այնքան տոկոս եյին կազմում, իսկ այժմ պակաս։ Յես չեմ ուզում խիստ բառեր գործածել, բայց այս թվերը հակահեղափոխությունից վատ են։ Մարքսիստորեն մտածող մարդն ինչպես կարող ե այսպիսի հանաք անել և այն էլ՝ տպագրել. այն էլ վորտեղ—ձեռնարկում։ Վորպես Կենտկոմի անդամ, իհարկե, յես էլ եմ պատասխանատու այս անօրինակ թերացման համար։ Յեթե Թագավորի ժամանակ կուլակ առաջացնելու քաղաքականություն եր տարվում, գոյություն ուներ հողի մասնավոր սեփականություն, հողի կուտակում (վոր ամենից ավելի յե սրում շերտավորումը), յեթե կառավարությունն այնպիսին եր, վոր ամբողջ ուժով խթանում եր շերտավորումը և, այնուամենայնիվ, չքավորները 60 տոկոս եյին կազմում, հապա էլ ինչպես կարող եր պատահել, վոր մեր, պրոլետարական կառավարության որով, յերբ այլևս չկա հողի մասնավոր սեփականություն, այսինքն յերբ հողը շրջանառությունից դուրս ե հանված և, հետևապես, գոյություն ունի շերտավորման խանգարող այս արգելքը,—յերբ մենք կուլակությունը վերացնելով մոտ յերկու տարի յենք զբաղվել,—յերբ մենք կուլակության վերացման բոլոր մեթոդներից մինչև այսօր էլ դեռևս չենք՝ ազատվել,—յերբ մենք վարում ենք հատուկ վարկային ու կոոպերատիվ քաղաքականություն, վորը նպաստավոր չի շերտավորման համար,—ինչպես կարող եր պատահել, վոր չնայած այսպիսի արգելքներին, մեզ մոտ շերտավորումն իբր թե ավելի ուժեղ ե, քան Թագավորի ժամանակ, և կուլակներն ու չքավորներն ավելի շատ են, քան անցյալում։ Ինչպես կարող են այսպիսի անսովոր անհեթեթություն դուրս տալ մարդիկ, վորոնք իրենց մարքսիստ են անվանում։ Չե՞ վոր այս միանգամայն ծիծաղելի յե. այս դժբախտություն ե, պատուհաս (ծիծաղ)։

Նույնը կարելի յե ասել նաև հացի և կերի այն չարաբաստիկ բալանսի մասին, վոր կազմել եր Կենտվիճվարը հունիսին, և ըստ վորի դուրս եր գալիս, իբր թե ունևորների ձեռքին ե գտնվում ապրանքային ավելցուկների $61^{0}/_{0}$-ը, չքավորների ձեռքին—վոչինչ, իսկ միջակների ձեռքին—ավելցուկների մնացած մասը։ Այստեղ ծիծաղելին այն ե, վոր միքանի ամսից հետո Կենտվիճվարը հրապարակ յեկավ այլ թվով. վոչ թե $61^{0}/_{0}$, այլ $52^{0}/_{0}$։ Իսկ մոտ ժամանակներս Կենտվիճվարը տվեց արդեն վոչ թե $52^{0}/_{0}$, այլ $42^{0}/_{0}$։ Միթե կարելի յե այսպիսի հա-

շիվ անել։ Մենք հավատում ենք, վոր Կենտվիճվարը գիտության միջնաբերդ է։ Մենք ընդունում ենք, վոր վոչ մի կառավարող մարմին առանց Կենտվիճվարի թվերի չի կարող հաշիվ տեսնել ու պլանավորել։ Մենք գտնում ենք, վոր Կենտվիճվարը պետք է տա օբյեկտիվ, ամեն մի կանխակարծությունից ազատ տվյալներ, վորովհետև թվերն այս կամ այն կանխակալ կարծիքին հարմարեցնելը քրեական բնույթի հանցագործություն է։ Բայց այդ բոլորից հետո էլ ինչպես կարելի յե հավատալ Կենտվիճվարի թվերին, յերբ նա ինքն է դադարում իր թվերին հավատալ։

Կարճ կապենք։ Վորովհետև ագրարային հեղափոխության հետևանքով մենք միջակացրինք գյուղը, վորովհետև միջակը գյուղում մեծամասնություն է կազմում, չնայած շերտավորման պրոցեսսին, իսկ մեր շինարարական աշխատանքը և լենինյան կոոպերատիվ պլանը պահանջում են այդ գործին լծել գյուղացիության հիմնական մասսան, ուստի և միջակի հետ դաշինք կնքելու քաղաքականությունը նեպի պայմաններում միակ ճիշտ քաղաքականությունն է։

Այս է հարցի գործնական կողմը։

Տեսեք, ահա, ինչպես եր ձևակերպում Լենինը մեր խնդիրները, յերբ նա հիմնավորում եր նոր տնտեսական քաղաքականությունը։ Իմ առջև դրված է Լենինի գրած բրոշյուրի նախագիծը պարենհարկի մասին, վորտեղ նա պարզ և հստակ կերպով տալիս է հիմնական ղեկավար գծերը։

«Այժմ կենտրոնական խնդիր, փորձաքար դառնում է (դարձել է) մթերքների ավելացումը, հետևապես միջակին կարևորագույն նշանակություն տալը հողագործության մեջ։ Ժրաջան գյուղացին — վորպես մեր տնտեսական վերելքի կենտրոնական դեմքը»։

Յեվ այսպես, ուրեմն — միջակին կարևորագույն նշանակություն տալը հողագործության մեջ, ժրաջան գյուղացին — վորպես մեր տնտեսական վերելքի կենտրոնական դեմք։ — Այսպես եր գրում ընկ. Լենինը 1921 թվին։

Ահա այս գաղափարն է, ընկերներ, վոր հիմք է ծառայել այն վորոշումներին ու գյուղացու նկատմամբ այն զիջումներին, վոր ընդունեցինք մենք մեր կուսակցության XIV ապրիլյան կոնֆերենցիայում։

Ինչ փոխհարաբերության մեջ են գտնվում ապրիլի XIV կուսկոնֆերենցիայի բանաձևերը և չքավորների մեջ կատարելիք աշխատանքին վերաբերող այն բանաձևը, վորը Կենտկոմը միաձայն ընդունեց հոկտեմբերյան պլենումում այնպես, ինչպես վոր միաձայն եր ընդունել նաև XIV կոնֆերենցիայի բանաձևերը։ — Կենտրոնական Կոմիտեի հոկտեմբերյան պլենումում մեր առաջ կանգնած հիմնական խնդիրն այն եր, վորպեսզի թույլ չտանք կորցնել այն քա-

ղաքականությունը,—միջակի հետ ամուր դաշինք կնքելու քաղաքականությունը,—որը մենք մշակել էինք ապրիլի կոնֆերենցիայում, չթողնենք խորտակել այդ քաղաքականությունը, որովհետև մեր կուսակցության մեջ ուրվագծվում էին տրամադրություններ, որոնք գտնում էին, որ միջակի հետ ամուր դաշինք կնքելու քաղաքականությունն սխալ է կամ անընդունելի։ Ուրվագծվում էին նաև այնպիսի տրամադրություններ, որ միջակի հետ ամուր դաշինք կնքելն իբր թե նշանակում է չքավորներին մոռանալ, որ իբր թե կան այնպիսիներ, որոնք աշխատում են չքավորների գլխի վրայով միջակի հետ ամուր դաշինք կնքել։ Այդ հիմարություն է, ընկերներ, բայց այդ փաստ է, որովհետև այդպիսի տրամադրություններ կային։ Չքավորների հարցը մեզ համար որևէ նոր բան ներկայացնում էր արդյոք, երբ մենք նոյեմբերյան պլենումի էինք հավաքվում։—Իհարկե ոչ։ Քանի չքավորները կան—մենք պետք է դաշնակցենք նրանց հետ։ Այս բանը մեզ հայտնի է դեռևս 1903 թվից, երբ առաջին անգամ լույս տեսավ Լենինի «К деревенской бедноте» բրոշյուրը։ Հենց դրա համար էլ մենք մարքսիստ ենք, դրա համար էլ հենց մենք կոմմունիստներ ենք, որպեսզի հենվենք չքավորների վրա գյուղում։ Հապա էլ ում վրա հենվենք։—Այս հարցը նոր չէ. ոչ ապրիլին, ոչ նոյեմբերին ոչ կոնֆերենցիայում, ոչ էլ Կենտկոմի պլենումում նա մեզ համար ոչ մի առանձին նորություն չէր ներկայացնում և չէր կարող ներկայացնել։ Յեվ յեթե, այնուամենայնիվ, չքավորների հարցը ծագեց, նա ծագեց այն փորձառության հետևանքով, որ կուտակվել էր մեզ մոտ Խորհուրդների վերընտրությունների ժամանակ։ Յեվ ինչ դուրս յեկավ։—Այն, որ Խորհուրդներն աշխուժացան։ Սկսեցինք մտցնել խորհրդային դեմոկրատիա։ Բայց ինչի՞ համար։ Չէ՞ որ խորհրդային դեմոկրատիան նշանակում է բանվոր դասակարգի ղեկավարությունը։ Չէ՞ որ ոչ մի խորհրդային դեմոկրատիա չի կարող կոչվել իսկական խորհրդային և իսկական պրոլետարական, յեթե այնտեղ չկա պրոլետարիատի և նրա կուսակցության ղեկավարությունը։ Բայց ինչ է նշանակում խորհրդային դեմոկրատիա՝ պրոլետարիատի ղեկավարության պայմաններում։—Այդ նշանակում է, որ պրոլետարիատը պետք է իր գործակալներն ունենա գյուղում։ Իսկ ումի՞ց պետք է բաղկացած լինեն այդ գործակալները։—Չքավորների ներկայացուցիչներից։ Իսկ ինչ դրության մեջ էին չքավորները, երբ մենք աշխուժացրինք խորհուրդները։—Ծայր աստիճան բաժան-բաժան, ծայր աստիճան փոշիացած դրության մեջ։ Ոչ թե միայն չքավորների որոշ տարրերին, այլև կոմմունիստներից ոմանց թվաց, թե կուլակությունը վերացնելու և վարչական ճնշում գործադրելու քաղաքականությունից հրաժարվելը նշանակում է չքավորներից հրաժարվել, նրանց շահերը մո-

ռանալ։ Յեվ կուլակության դեմ կազմակերպված պայքար մղելու փոխարեն սկսեցին անարժան կերպով ծամծմություն անել։

Այդ տրամադրությունները կոտրելու համար ի՞նչ պետք եր անել.— Պետք եր, նախ և առաջ, իրականացնել այն խնդիրը, վոր կուսակցության XIV կոնֆերենցիան եր դրել կուսակցության առաջ, այսինքն պետք եր վորոշել չքավորներին նյութական ոգնություն ցույց տալու յեղանակներն ու չափերը։ Յերկրորդ, պետք եր տալ մի լոզունգ այն մասին, վոր անհրաժեշտ ե կազմակերպել հատուկ չքավորական խմբակներ կամ ֆրակցիաներ՝ միջակին գրավելու և խորհուրդների, կոոպերացիայի ու այլ ընտրությունների ժամանակ կուլակին մեկուսացնելու նպատակով բաց քաղաքական պայքար մղելու համար։

Հենց այդ ել արեց ընկ. Մոլոտովը չքավորների մեջ կատարվող աշխատանքին վերաբերող իր թեզիսներում, վորն արդյունք եր իր յերեք ամսվա աշխատանքի կենտկոմի գյուղական հանձնաժողովում։ Թեզիսները միաձայն հավանություն գտան կենտկոմի հոկտեմբերի պլենումում։

Ինչպես տեսնում եք, կենտկոմի հոկտեմբերյան պլենումի բանաձևն անմիջական շարունակությունն ե XIV կոնֆերենցիայի վորոշումների։

Անհրաժեշտ եր, նախ և առաջ, չքավորների նյութական դրությունը բարելավելու համար նյութական ոգնություն ցույց տալու հարցը դնել կոնկրետ կերպով և, յերկրորդ, պետք եր չքավորների կազմակերպության լոզունգ տալ։ Սա այն նոր միտքն ե, վոր ամբողջապես պատկանում ե ընկ. Մոլոտովին. չքավորների խմբակներ կազմակերպելու լոզունգը—նրա իդեան ե։

Ինչու՞ անհրաժեշտ համարվեց չքավորական խմբակներ կազմակերպելու լոզունգը.—դա անհրաժեշտ համարվեց, վորպեսզի վերացնենք չքավորների փոշիացած դրությունը և հնարավորություն տանք նրանց, վոր կոմմունիստների աջակցությամբ կազմակերպվեն, վորպես մի ինքնուրույն քաղաքական ուժ, վորը կարող ե պրոլետարիատի կազմակերպված հենարանը հանդիսանալ գյուղում ինչպես կուլակի դեմ, այնպես ել միջա՛կ գյուղացիության համար մղվող պայքարում։ Չքավորը դեռևս տոգորված ե խնամակալվելու հոգեբանությամբ, նա հույսը դրել ե գլխավոր քաղաքական վարչության (ГПУ) վրա, իշխանության վրա, ամեն ինչի վրա, միայն թե վոչ իր և իր ուժերի վրա։ Այս կրավորականությունն ու խնամակալվելու հոգեբանությունը պետք ե վերջնականապես վտարել չքավորների գիտակցությունից։ Պետք ե չքավորությանը տալ մի լոզունգ, վորպեսզի նա վերջապես իր սեփական վոտքերի վրա կանգնի, վորպեսզի կոմմունիստական կուսակցության և պետության աջակցությամբ նա կազմակերպվի, խմբակներ

կազմի և խորհուրդների գործունեության ասպարեզում, կոոպերացիայի ասպարեզում, գյուղփոխօգկոմների գործունեության ասպարեզում և գյուղական հանրայնության բոլոր ասպարեզներում սովորել կռվել կուլակի դեմ, բայց կռվել վոչ թե Գ. Պ. Վ. դիմելու միջոցով, այլ քաղաքական պայքարի միջոցով, կազմակերպված պայքարի միջոցով։ Այսպիսով միայն կարելի յե կոփել չքավորներին, միայն այս ճանապարհով կարելի յե կազմակերպել չքավորությունը, և միայն այսպիսով է, վոր չքավոր գյուղացիությունից՝ խնամակալության կարոտ խմբակի փոխարեն՝ կարելի յե պրոլետարիատի հենարան ստեղծել գյուղում։ Ահա թե ինչու հոկտեմբերին առաջ քաշվեց չքավորության հարցը։

6. ՅԵՐԿՈՒ ՎՏԱՆԳՆԵՐ ՅԵՎ ՅԵՐԿՈՒ ԹԵՔՈՒՄՆԵՐ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ.

Գյուղացիության հարցի շուրջը մեր կուսակցության մեջ յերկու թեքում ուրվագծվեց. Թեքում կուլակային վտանգը նվազեցնելու կողմը և թեքում այդ վտանգը չափազանցնելու ու միջակի դերը նվազեցնելու և թերագնահատելու կողմը։ Յես այն կարծիքին չեմ, վոր իբր թե այս թեքումները մեզ համար մահաբեր են։ Թեքումը միայն թեքում է, թեքումը մի տակավին չձևավորված բան է։ Թեքումը սխալի սկիզբն է, և կամ մենք թույլ կտանք, վոր այդ սխալը զարգանա, և այն ժամանակ հետևանքը վատ կլինի, կամ մենք այդ սխալն իր սաղմի մեջ կվոչնչացնենք, և այն ժամանակ վտանգը վերացված կլինի։ Թեքումը սխալ քայլ է, վորն իր արդյունքները հետո յե տալու, յեթե ժամանակին նրա առաջը չառնես։ Յերկու խոսք կուլակային վտանգի թերագնահատման մասին։ Կուլակային թեքումից են խոսում։ Դա հիմարություն է։ Կուսակցության մեջ կուլակային թեքում չի կարող լինել։ Խոսքը վոչ թե կուլակային թեքման մասին է, այլ կուլակային վտանգի թերագնահատման կողմը հակված թեքման մասին։

Յեթե նույնիսկ չլինեյին այն մարդիկ, վոր այդ թեքման զոհ դարձան, վոր այդ թեքման տեսակետի վրա կանգնեցին — այդպիսիները, այնուամենայնիվ, պետք է յերևան գային, վորովհետև մեր յերկրում զարգացումն ընթանում է դեպի կապիտալիզմի վորոշ չափի աշխուժացում, իսկ կապիտալիզմի աշխուժացումը չի կարող մեր կուսակցության շուրջը վորոշ շփոթ չստեղծել։ Մյուս կողմից մեզ մոտ զարգանում է սոցիալիստական արդյունաբերությունը, և պայքար է տեղի ունենում նրա ու մասնավոր կապիտալի միջև։ Ո՞վ ում առաջը կկտրի։ Ներկայումս գերակշռությունը սոցիալիստական տարրերի կողմն է։ Թե կուլակին և թե մասնավոր կապիտալիստին քաղաքում՝ մենք մեզ կենթարկենք, բայց առայժմ փաստը մնում է փաստ. կուլակն աճում

է, և մենք դեռևս հեռու յենք նրան տնտեսապես ջախջախած լինելուց։ Կուլակն ուժեր է հավաքում—սա անվիճելի յե. և ով վոր այս չի նկատում, ով վոր ասում է, թե այս դատարկ բան է, թե կուլակը խրտվիլակ է, նա կանգնեցնում է կուսակցությունն իր աչալրջությունը կորցնելու և կուլակի դեմ, կապիտալիզմի դեմ մղվող պայքարում զինաթափ վիճակում գտնվելու վտանգի առաջ,—վորովհետև կուլակը կապիտալիզմի գործակալն է գյուղում։

Բոգուշևսկու մասին են խոսում։ Պարզ է, վոր նրա թեքումը կուլակային թեքում չէ, նրա թեքումը կուլակային վտանգի թերագնահատության կողմն է։ Յեթե նա կուլակային թեքում ունենար, նրան պետք էր վռնդել կուսակցությունից։ Բայց մինչև այժմ, վորքան յես գիտեմ, վոչ վոք կարծեմ չի պահանջել, վոր կուսակցությունից վտարենք նրան։ Այդ թեքումը—գյուղում կուլակի վտանգի թերագնահատության թեքումն է—մի թեքում, վորը խանգարում է կուսակցությունը միշտ պայքարի պատրաստ վիճակում պահել, վորը զինաթափ է անում կուսակցությունն այն պայքարում, վոր մղում է նա կապիտալիստական տարրերի դեմ,—այդ թեքումն, ինչպես հայտնի յե, կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի վորոշմամբ դատապարտված է։

Բայց կա մեկ ուրիշ թեքում—կուլակային վտանգը գերագնահատելու, կուլակային վտանգի հանդեպ գլուխ կորցնելու, «կուլակը գալիս է, ոգնեցեք» խուճապային տրամադրության կողմն ուղղված թեքում։ Տարորինակ բան է։ Մարդիկ նեպ եյին մտցնում, իմանալով, վոր նեպը—կապիտալիզմի աշխուժացումն է, կուլակի աշխուժացումը, վոր կուլակն անպատճառ գլուխ է բարձրացնելու։ Յեվ ինչ. բավական էր, վոր կուլակը հրապարակ գար, նրանք սկսեցին «կարաուլ» կանչել, գլուխները կորցրին։ Յեվ գլուխ կորցնելն այն տեղը հասավ, վոր միջակին մոռացան։ Մինչդեռ ներկայումս հիմնականը գյուղում այն է, վոր պետք է պայքարել միջակին նվաճելու համար, պայքարել միջակին կուլակից պոկելու համար, պայքարել միջակի հետ ամուր դաշինք կնքելու միջոցով կուլակին մեկուսացնելու համար։ Այս մասին մոռանում են այն ընկերները, վորոնք խուճապի յեն մատնվել կուլակային վտանգի հանդեպ։

Յես կարծում եմ, վոր յեթե աշխատենք այս յերկու թեքումների արմատները փնտրել, կարող կլինենք հանգեցնել դրանց հետևյալ մեկնակետերին։

Առաջին թեքման եյությունն այն է, վոր նվազեցնում են կուլակի և ընդհանրապես կապիտալիստական տարրերի դերը գյուղում, քողարկում են կուլակային վտանգը։ Այս թեքման մեկնակետն այն է, վոր նեպի զարգացումը չի տանում մեզ դեպի կապիտալիստական տարրերի աշխուժացումն գյուղում, վոր կուլակը և առհասարակ կապիտալիստական տարրերը մեր յերկրում անցնում են կամ, ավելի ճիշտ կլինի ասել՝

արդեն անցել են պատմության գիրկը, վոր գյուղում շերտավորում չի կատարվում, վոր կուլակն անցյալի արձագանգ ե, խրտվիլակ, և ուրիշ վոչինչ։

Ի՞նչ հետևանքի յե հասցնում այս թեքումը։

Գործնականում այս թեքումը հասցնում ե դասակարգային պայքարի ժխտման գյուղում։

Յերկրորդ թեքման եյությունն այն ե, վոր ուռցնում են կուլակի և ընդհանրապես կապիտալիստական տարրերի դերը գյուղում, խուճապի մեջ են ընկնում այդ տարրերի առաջ, ժխտում են այն, վոր պրոլետարիատի և չքավորության դաշինքը միջակի հետ հնարավոր ե և նպատակահարմար։

Այս թեքման մեկնակետն այն ե, վոր մեր գյուղում իբր թե կատարվում ե կապիտալիզմի պարզ վերականգնում, վոր կապիտալիզմի վերականգնման այդ պրոցեսը համայնապարփակ պրոցես ե, վորն ամբողջապես կամ մեծագույն մասով ընդգրկում ե նաև մեր կոոպերացիան, վոր այդպիսի զարգացման հետևանքով պետք ե անընդհատ աճի մեծ մասշտաբով շերտավորումը, վոր ծայրահեղ խմբակները, այսինքն կուլակներն ու չքավորները, պետք ե տարեցտարի ուժեղանան ու աճեն, վոր միջին խմբակները, այսինքն միջակները, պետք ե թուլանան ու նվազեն նույնպես տարեցտարի։

Գործնականում այս թեքումը տանում ե դեպի դասակարգային պայքարի բորբոքումը գյուղում, դեպի չքավորական կոմիտեների կուլակությունը վերացնելու քաղաքականություն, հետևապես քաղաքացիական պատերազմի հայտարարումն մեր յերկրում և այսպիսով դեպի մեր վողջ շինարարական աշխատանքի խորտակում, վերջապես դեպի Լենինի կոոպերատիվ պլանի ժխտում, մի պլան, վորի իմաստն այն եր, վոր միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները պետք ե մտցնել սոցիալիստական շինարարության սիստեմի մեջ։

Դուք կհարցնեք. վո՞ր թեքումն ե ավելի վատ։ Հարցն այդպես չի կարելի դնել։ Յերկու թեքումն ել վատթար են, և՛ առաջինը, և՛ յերկրորդ թեքումը։ Յեվ յեթե այդ թեքումները զարգանան, նրանք կարող են կուսակցությունը կազմալուծել և կորստի մատնել։ Բարեբախտաբար մեր կուսակցության մեջ կան այնպիսի ուժեր, վորոնք կարող են կտրել թե՛ առաջին և թե՛ յերկրորդ թեքումը (**Ծափեր**)։ Թեև յերկու թեքումներն ել վատթար են, և հիմարություն ե հարց դնել այն մասին, թե դրանցից վորն ե ավելի վտանգավոր, բայց կա նաև մեկ ուրիշ տեսակետ, և այդ տեսակետով ե, վոր պետք ե մոտենալ այդ յերկու թեքումներին։ Վո՞ր թեքման դեմ պայքարելու ավելի շատ ե պատրաստված կուսակցությունը—առաջին թեքման դեմ, թե՞ յերկրորդի դեմ. ահա թե ինչպես պետք ե դնել հարցը գործնականապես։ Յերկու թե-

քումներն էլ վտանգավոր են, յերկուսն էլ վատթար են, չի կարելի ասել, թե նրանցից վորն ե ավելի վտանգավոր, բայց խոսել այն մասին, թե վոր թեքման դեմ պայքարելուն ավելի յե պատրաստված կուսակցությունը—կարելի յե և պետք ե։ Յեթե հարց տանք կոմմունիստներին, թե ինչին ե ավելի շատ պատրաստ կուսակցությունը—կուլակին մերկացնելուն, թե փոխանակ այդ բանն անելու՝ միջակի հետ դաշնակցելուն, յես կարծում եմ, վոր 100 կոմմունիստից 99-ը կասի, թե կուսակցությունն ավելի շատ ե պատրաստված՝ խփիր կուլակին լոզունգը կիրառելուն։ Բավական ե, վոր թույլ տաս—կուլակին մի ակընթարթում կմերկացնեն։ Իսկ ինչ վերաբերում ե այն բանին, վոր վոչ թե կուլակությունը վերացնենք, այլ միջակի հետ դաշնակցելու միջոցով կուլակին մեկուսացնելու բարդ քաղաքականությունը բանեցնենք, այս բանն արդեն այնպես հեշտ չի մարսվում։ Ահա թե ինչու յեմ յես կարծում, վոր այդ յերկու թեքումների դեմ պայքարելիս կուսակցությունն իր կրակը պետք ե կենտրոնացնի յերկրորդ թեքման վրա (ծափեր)։ Վոչ մի մարքսիզմով կամ լենինիզմով չի կարելի քողարկել այն բանը, վոր կուլակը վտանգավոր ե։ Կուլակը կուլակ ե։ Բոգուշևսկին ինչքան էլ վոր կրկնի, թե նա խրտվիլակ ե, կուլակն, այնուամենայնիվ, վտանգավոր ե։ Յեվ այս միտքը չես կարող հանել կոմմունիստի գլխից վոչ մի ցիտատով։ Մինչդեռ այն պնդումը, վոր միջակի հետ ամուր դաշինք պետք ե կնքել, չնայած այն բանին, վոր Իլյիչը 2-րդ կոնգրեսի բանաձևում գրում ե միջակի չեզոքացման մասին—այդ միտքն արդեն միշտ կարելի յե քողարկել, մթագնել լենինիզմին կամ մարքսիզմին վերաբերող ֆրազներով։ Այստեղ ցիտատներ բերելու լայն ասպարեզ կա, այստեղ լայն ասպարեզ կա բոլոր նրանց համար, ովքեր կամենում են մոլորեցնել կուսակցությունը, ովքեր կամենում են թագցընել կուսակցությունից ճշմարտությունը, ճշմարտությունն այն մասին, վոր Լենինը գյուղացիության վերաբերյալ ուներ վոչ թե մեկ, այլ յերեք լոզունգ։ Այստեղ մարքսիզմի գլխին կարելի յե ամեն տեսակ խաղ խաղալ։ Յեվ հենց այդ պատճառով թեքումների դեմ մղվող պայքարում կրակը պետք ե կենտրոնացնել յերկրորդ թեքման վրա։

Այս վիճակում ե գտնվում Խորհրդային Միության ներքին դրության, նրա տնտեսության, արդյունաբերության, գյուղատնտեսության, դասակարգերի, դասակարգերի ակտիվության, Խորհուրդների աշխուժացման ու գյուղացիության հարցը և այլն։ Յես կանգ չեմ առնում միքանի հարցերի վրա, վորոնք վերաբերում են պետական ապարատին, վորն աճում ե և աշխատում ե թոթափել կուսակցության ղեկավարությունը,—մի բան, վոր նրան չի հաջողվում։ Յես չեմ խոսում մեր պետապարատի բյուրոկրատիզմի մասին, չեմ խոսում այն պատճառով, վոր շատ յերկարեց իմ զեկուցումը։ Յես չեմ խոսում այն

պատճառով, վորովհետև դա նորություն չի կուսակցության համար։

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Անցնում եմ կուսակցության խնդիրներին՝ ներքին քաղաքականության ասպարեզում։

Ժողովրդական վողջ տնտեսության զարգացման ասպարեզում մենք պետք է աշխատանք կատարենք

ա. յերկրի արտադրանքի հետագա ավելացման գծով.

բ. մեր յերկիրն ագրարայինից ինդուստրիալ դարձնելու գծով.

գ. ժողովրդական տնտեսության մեջ կապիտալիստականի համեմատությամբ սոցիալիստական տարրերի վճռական գերակշռություն ապահովելու գծով.

դ. կապիտալիստական շրջապատման պայմաններում Խորհրդային Միության ժողովրդական տնտեսությանն անհրաժեշտ ինքնուրույնություն ապահովելու գծով.

ե. պետական բյուջեյի ընդհանուր սիստեմի մեջ վոչ-հարկային յեկամուտների տեսակարար կշիռն ավելացնելու գծով։

Արդյունաբերության և գյուղատնտեսության ասպարեզում մենք պետք է աշխատենք

ա. ծավալել մեր սոցիալիստական արդյունաբերությունը, նախապես բարձրացնելով տեխնիկական մակարդակը և աշխատանքի արտադրողականությունը, իջեցնելով ինքնարժեքը, ավելացնելով կապիտալի շրջանառության արագությունը.

բ. վառելիքի, մետաղի, ինչպես և յերկաթուղային տրանսպորտի հիմնական կապիտալի բալանսը համաձայնեցնել արտադրության և յերկրի աճող պահանջների հետ.

գ. տեղական նշանակություն ունեցող խորհրդային արդյունաբերությունն ուժգին թափով զարգացնելու գծով.

դ. հողի բերքատվությունը, յերկրագործության տեխնիկական մակարդակը բարձրացնելու, տեխնիկական կուլտուրաները զարգացնելու, գյուղատնտեսության ինդուստրիալացման գծով.

ե. գյուղատնտեսության կուլտուրական մակարդակի բարձրացման և մասսայական կոոպերացման միջոցով գյուղացիական փոշիացած տնտեսությունները սոցիալիստական շինարարության հունի մեջ մտցնելու գծով։

Առևտրի ասպարեզում աշխատանք պետք է կատարել

ա. ապրանքատար ցանցի (կոոպերացիայի բոլոր տեսակները, պետառևտուրը) հետագա ընդարձակման և վորակի բարելավման գծով.

բ. ապրանքաշրջանառության արագությունն առավելագույն չափով ուժեղացնելու գծով.

գ. մանրածախսի գների իջեցման և մասնավոր առևտրի համեմատությամբ խորհրդային կոոպերատիվ առևտրի հետագա գերակշռության բարձրացման գծով.

դ. բոլոր մթերող մարմինների միասնական ֆրոնտի և մթերման խիստ դիսցիպլինա հաստատելու գծով.

ե. ապրանքաշրջանառությունը դրսի աշխարհի հետ ուժեղացնելու գծով, բայց պայմանով, վոր ապահովվի ակտիվ առևտրական բալանսը հետևապես և հարգարման ակտիվ բալանսը, վորը հաստատուն վալյուտա պահպանելու անհրաժեշտագույն պայմանն է և ինֆլյացիայից ապահով լինելու անհրաժեշտ յերաշխիքը:

Պլանավորման ասպարեզում պետք է աշխատել անպայման անհրաժեշտ պահեստի միջոցներ ապահովելու ուղղությամբ: Իդեպ, յերկու խոսք պահեստի միջոցների ապահովման աղբյուրներից մեկի՝ ողու մասին: Կան մարդիկ, վորոնք կարծում են, թե կարելի յե սպիտակ ձեռնոցներով սոցիալիզմ կառուցել: Դա կոպտագույն սխալ է, ընկերներ: Քանի վոր մենք փոխառություններ չենք կնքել, քանի վոր մենք կապիտալներով աղքատ ենք, և քանի վոր, բացի այդ, մենք չենք կարող ստրկանալ Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստներին, չենք կարող ընդունել այն ստրկական կոնցեսսիաները, վոր նրանք մեզ առաջարկում են, և վոր մենք մերժեցինք ընդունել—մեզ մի բան է մնում անել. աղբյուրներ փնտրել այլ ասպարեզներում: Դա ստրկանալուց, այնուամենայնիվ, լավ է: Այստեղ մնում է ընտրել կամ ստրկական պայմանները կամ ողին, և նրանք, ովքեր կարծում են, թե սպիտակ ձեռնոցներով կարելի յե սոցիալիզմ կառուցել—չարաչար սխալվում են:

Դասակարգերի փոխհարաբերությունների ասպարեզում պետք է աշխատել

ա. պրոլետարիատի և չքավոր գյուղացիության դաշինքը միջակ գյուղացիության հետ ապահովելու գծով.

բ. այդ դաշինքի ասպարեզում պրոլետարիատի ղեկավարությունն ապահովելու գծով:

գ. կուլակին և քաղաքի կապիտալիստին քաղաքականապես մեկուսացնելու և տնտեսապես յետ մղելու գծով:

Խորհրդային շինարարության ասպարեզում աշխատել բյուրոկրատիզմի դեմ վճռական պայքար մղելու գծով, բանվոր դասակարգի լայն մասսաներին դեպի այդ պայքարը գրավելու ուղղությամբ:

Յես կուզեյի մի յերկու խոսք ել ասել Նոր բուրժուազիայի և նրա գաղափարախոս սմենո-վեխովցիների մասին: Սմենո-վեխովությու. դա Նոր բուրժուազիայի գաղափարախոսությունն է, վորն աճում է կամաց-կամաց շաղկապվում է կուլակի և ծառայող ինտելլիգենցիայի հետ: Նոր բուրժուազիան առաջ է քաշում իր գաղափարախոսությ

սմենովեխովյան գաղափարախոսությունը, որի էությունն այն է, որ կոմմունիստական կուսակցությունը պետք է վերասերվի, իսկ նոր բուրժուազիան պետք է յենթարկվի կոնսոլիդացիայի, ընդսմին մենք, բոլշևիկներս, բանից դուրս է գալիս, որ մեզ համար աննկատելի կերպով, պետք է շարժվենք դեպի դեմոկրատական հանրապետության շեմքը, այնուհետև պետք է անցնենք այդ շեմքից և մի որևէ կեսարի օգնությամբ, որն առաջ է գալու զինվորական կամ քաղաքացիական աստիճանավորների շարքերից, պետք է հասնենք սովորական բուրժուական հանրապետության դրությանը։ Այս է այդ նոր գաղափարախոսությունը, որն աշխատում է մոլորեցնել մեր ծառայող ինտելլիգենցիային և ոչ թե միայն նրան, այլև ոմանց մեզ մոտիկ կանգնած շրջաններից։ Յես չեմ աշխատի հերքել մեր կուսակցության վերասերմանը վերաբերող պնդումները։ Հիմարությունը չարժե հերքել։ Մեր կուսակցությունը չի վերասերվում և չի վերասերվի (**ծափեր**)։ Այնպիսի նյութից չէ նա ծեփված, և այնպիսի մարդ չէ նրան կոփել, որպեսզի նա վերասերվեր (**ծափահարություններ**)։ Մեր կադրերը, թե յերիտասարդները և թե հները, գաղափարապես աճում են։ Մենք յերջանիկ ենք, որ մեզ հաջողվեց միքանի տպագրությամբ լույս ընծայել Լենինի յերկերը։ Հիմա մարդիկ կարդում են, սովորում են և սկըսում են հասկանալ։ Ոչ միայն ղեկավարները, այլև միջակները կուսակցության մեջ սկսում են բան հասկանալ, հիմա նրանց էլ չեն խաբի։ Վերասերման մասին բարձրացրած աղմուկով հիմա ոչ ոքի չես խաբի։ Մարդիկ իրենք իրենց գլխով հասկանում են։ Դուք կարող եք ղչավել, ինչքան կամենաք, դուք կարող եք յերկյուղ ազդել նրանց անվերջ ցիտատներով, իսկ միջակ կուսակցականը կլսի ձեզ ու կքննի, կհասկանա, որովհետև հիմա նրա ձեռքին Լենին կա (**ծափեր**)։ Այս փաստը մեկն է այն հիմնական յերաշխիքներից, որոնք ապահովցնում են մեզ, որ մեր կուսակցությունը լենինիզմի ճանապարհից դուրս չի գա (**փոթորկալի ծափեր**)։ Յեթե յես, այնուամենայնիվ, խոսեցի սմենովեխովցիների մասին, այդ էլ նրա համար էր, որպեսզի մի յերկու խոսքով պատասխանեմ բոլոր նրանց, ովքեր մեր կուսակցության և մեր Կենտկոմի վերասերման են սպասում։ Ուստրյալովն — այդ գաղափարախոսության հեղինակն է։ Նա մեր տրանսպորտում է ծառայում։ Ասում են, որ նա լավ է ծառայում. յես կարծում եմ, որ յեթե նա լավ է ծառայում, ապա թող յերազի մեր կուսակցության վերասերման մասին։ Յերազելը մեզ մոտ արգելված չէ, ընկերներ։ Թող յերազի ինչքան քեֆը կտա։ Բայց թող նա իմանա, որ վերասերման մասին յերազելով նա միևնույն ժամանակ ջուր պետք է կրի մեր բոլշևիկյան աղացի համար։ Այլապես նրա բանը վատ կլինի (**ծափեր**)։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ·

Անցնում եմ կուսակցությանը։ Կուսակցության հարցը յես վոչ թե նրա համար եմ դնում իմ հաշվետվության վերջում, վոր սա իր տեսակարար կշռով վերջին տեղն ե բռնում մեր զարգացման ֆակտորների շարքում. վոչ. յես դրա համար չեմ այսպես դնում, այլ նրա համար, վոր կուսակցությունը մեզ մոտ պսակում ե ամբողջ գործը։

Յես խոսեցի պրոլետարիատի դիկտատուրայի հաջողությունների մասին ներքին և արտաքին քաղաքականության ասպարեզում,— դուրսը, կապիտալիստական շրջապատման պայմաններում մանյովրներ անելու ասպարեզում և սոցիալիստական շինարարության բնագավառում՝ մեր յերկրի ներսում։ Բայց այդ հաջողություններն անկարելի կլինեյին, յեթե մեր կուսակցությունը կանգնած չլիներ իր խնդիրների բարձրության վրա, յեթե նա չաճեր և չամրանար։ Կուսակցության, վորպես ղեկավար ուժի, նշանակությունն այս տեսակետից անչափելի յե։ Պրոլետարիատի դիկտատուրան ինքն իրեն չե կենսագործվում, այլ, ամենից առաջ, կենսագործվում ե կուսակցության ուժերով, նրա ղեկավարությամբ։ Առանց կուսակցության ղեկավարության կապիտալիստական շրջապատման ներկա պայմաններում պրոլետարիատի դիկտատուրան անկարելի բան կլիներ։ Բավական ե տատանել կուսակցությունը, թուլացնել նրան, վորպեսզի վայրկենապես տատանվի ու թուլանա նաև պրոլետարիատի դիկտատուրան։ Հենց սրանով ե բացատրվում այն հանգամանքը, վոր բոլոր յերկրների բուրժուաները կատաղությամբ են խոսում մեր կուսակցության մասին։

Սրանով յես բնավ չեմ ուզում ասել, թե մեր կուսակցությունը և մեր պետությունը միևնույն բանն են։

Ամենևին վոչ։ Կուսակցությունը մեր պետության ղեկավար ուժն ե։ Բայց անմտություն կլիներ այս հիման վրա ասել, ինչպես մեր միքանի ընկերներն են ասում, թե Պոլիտբյուրոն բարձրագույն մարմինն ե մեր պետության մեջ։ Այս ճիշտ չե։ Սա շփոթություն ե, վոր ջուր ե լցնում մեր թշնամիների ջրաղացին։ Պոլիտբյուրոն բարձրագույն մարմին ե վոչ թե պետության, այլ կուսակցության, իսկ կուսակցությունն ել պետության բարձրագույն ղեկավար ուժն ե։ Կենտկոմն ու Պոլիտբյուրոն կուսակցության որգաններն են։ Յես չեմ ուզում նույնացնել պետական հաստատություններն ու կուսակցությունը։ Յես միայն ուզում եմ ասել, վոր մեր ներքին և արտաքին քաղաքականության բոլոր հարցերում հիմնական ղեկավար դերը կուսակցությանն ե պատկանել։ Յեվ միայն այս պատճառով ե, վոր մենք հաջողություններ ենք ունեցել մեր ներքին և արտաքին քաղաքականության մեջ։ Այս պատճառով կուսակցության կազմի, նրա գաղափարա-

կան մակարդակի, կուսակցության կադրերի, տնտեսական և խորհըր-դային շինարարության հարցերի դրվածքը հմտությամբ ղեկավարելու, բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ նրա ունեցած տեսակա-րար կշռի և, վերջապես, նրա ներքին կացության հարցը—մեր քաղա-քականության հիմնական հարցն է։

Ամենից առաջ խոսենք կուսակցության կազմի մասին։ Կուսա-կցության կազմի ընդհանուր թիվը առ 1-ն ապրիլի 1924 թվի առանց լենինյան կոչի հավասար էր 446.000 կուսակցության անդամի և թեկնածուի։ Դրանից բանվոր՝ 196.000, այսինքն 44 տոկոս, գյուղացի 128.000, այսինքն 28 տոկոս, ծառայողներ և այլք՝ 121.000, այսինքն 27,6 տոկոս։ Առ 1-ն հուլիսի 1925 թվի կուսակցության մեջ արդեն կար 446.000-ի փոխարեն 911.000 անդամ և թեկնածու, վորից բանվոր-ներ՝ 534.000, այսինքն 58,6 տոկոս, գյուղացիներ՝ 216.000, այսինքն 23,8 տոկոս, ծառայողներ և այլք՝ 160.000, այսինքն 17,6 տոկոս։ Առ 1-ն նոյեմբերի 1925 թվի մենք ունենք 1.025.000 կոմունիստ։

Բանվոր դասակարգի (յեթե վերցնենք ամբողջ բանվոր դասա-կարգը) վ՞ր տոկոսն է կազմակերպված մեր կուսակցության մեջ։ XIII համագումարում իմ կազմակերպչական հաշվետվության մեջ յես ասել եմ, վոր մեր յերկրում բոլոր բանվորների թիվը 4.100.000 է (դրանց թվում նաև գյուղատնտեսական բանվորները)։ Այն ժամա-նակ յես նկատի չէյի առնում մանր արդյունաբերության բանվորնե-րին, վորոնց հաշվառումը դժվար էր, վորովհետև սոցիալական ապա-հովագրությունը դեռ չէր տարածված, իսկ վիճակագրությունն էլ այդ գործով չէր զբաղվում։ Այն ժամանակ յես բերում էյի 1924 թվի հուն-վարի թվերը։ Հետագայում, յերբ հնարավորություն ստեղծվեց հաշվի առնել մանր արդյունաբերության մեջ զբաղված բանվորներին, պարզ-վեց, վոր բանվորների թիվն առ 1-ն հուլիսի 1924 թվի 5.500.000 էր, հաշված նաև գյուղատնտեսական բանվորներին։ Դրանից կուսակցու-թյան մեջ կար 390.000 հոգի, այսինքն ամբողջ բանվոր դասակարգի 7 տոկոսը։ Առ 1-ն հուլիսի 1925 թվի բանվորների թիվն էր 6.500.000, վորից կուսակցության մեջ կար 534.000 հոգի, այսինքն բանվոր դա-սակարգի ամբողջ կազմի 8 տոկոսը։ Առ 1-ն հոկտեմբերի 1925 թվի մենք ունեյինք 7.000.000 բանվոր—գյուղատնտեսական և արդյունա-բերական—մանր, միջին և խոշոր արդյունաբերության մեջ՝ անխտիր։ Դրանից կուսակցության մեջ կար 570.000 հոգի, այսինքն 8 տոկոսը։

Այս բոլորը յես նրա համար եմ ասում, վորպեսզի ցույց տամ, թե ինչ աստիճան անբանական բան է մեկ կամ յերկու տարվա ընթաց-քում մեր յերկրի բանվոր դասակարգի ամբողջ կազմի 90 տոկոս կու-սակցական կազմակերպվածության հասնելու մասին խոսելը։

Այժմ քննենք Համ. ԿԿ բանվորական մասի տեսակարար կշիռը

ցենզային արդյունաբերության բանվորների նկատմամբ։ Վոչ-սեզոնային, մնայուն բանվորների թիվը խոշոր ցենզային արդյունաբերության մեջ՝ թե պետական, թե վոչ-պետական, հաշված ռազմական արդյունաբերությունը, յերկաթուղային գլխավոր արհեստանոցները և հիմնական գծային—բանվորների թիվը արդյունաբերության այս բոլոր ճյուղերում առ 1-ն հունվարի 1924 թվի հավասար եր 1.605.000-ի։ Այդ ժամանակ կուսակցության մեջ մենք ունեյինք 196.000 բանվոր։ Սա կազմում է բանվոր դասակարգի ամբողջ կազմի 12 տոկոսը։ 12 տոկոս առ 1-ն հունվարի 1924 թվի։ Իսկ յեթե վերցնենք մեր կուսակցության անդամ դազգյահի բանվորներին և վորոշենք նրանց և խոշոր արդյունաբերության մեջ զբաղված բանվոր դասակարգի ամբողջ կազմի տոկոսային հարաբերությունը, կտեսնենք, վոր առ 1 ն հունվարի կուսակցության մեջ կար 83.000 դազգյահի բանվոր և նրանք կազմում եյին խոշոր արդյունաբերության մեջ զբաղված բանվորության ամբողջ կազմի 5 տոկոսը։ Այս բոլորն առ 1-ն հունվարի 1924 թվի։

Առ 1-ն հունիսի 1924 թվի խոշոր արդյունաբերության մեջ կար 1.780.000 բանվոր. իսկ կուսակցության մեջ այդ ժամանակ կար 389.000 բանվոր, այսինքն խոշոր արդյունաբերության մեջ գտնվող բանվորության ամբողջ կազմի 21,8 տոկոսը։

Դազգյահի բանվոր կուսակցության մեջ կար 267.000, այսինքն խոշոր արդյունաբերության մեջ գտնվող բանվոր դասակարգի ամբողջ կազմի 15 տոկոսը։ Առ 1-ն հունվարի 1925 թվի խոշոր ցենզային արդյունաբերության մեջ կար 1.845.000 բանվոր, իսկ բանվորների թիվը կուսակցության մեջ ընդհանրապես,—և դազգյահի բանվորներ, և վոչ-դազգյահի բանվորներ—կազմում եր 429.000, այսինքն խոշոր արդյունաբերության բանվոր դասակարգի ամբողջ կազմի 23.7 տոկոսը. դազգյահի բանվոր կուսակցության մեջ այն ժամանակ կար 302.000, այսինքն խոշոր արդյունաբերության բանվոր դասակարգի ամբողջ կազմի 16 5 տոկոսը։ Առ 1-ն հուլիսի 1925 թվի խոշոր արդյունաբերության մեջ կար 2.094.000 բանվոր. կուսակցության մեջ բանվորների թիվն եր 534.000, այսինքն 25,5 տոկոսը, և դազգյահի բանվորների թիվն եր 383.000, այսինքն խոշոր արդյունաբերության բանվոր դասակարգի ամբողջ կազմի 18,2 տոկոսը։

Դուք տեսնում եք, վոր յեթե այնտեղ, ամբողջ բանվոր դասակարգի նկատմամբ, կուսակցության մեջ կազմակերպված բանվորների աճումն ամբողջ բանվոր դասակարգի աճման համեմատությամբ ավելի դանդաղ է ընթանում, ապա այստեղ, խոշոր արդյունաբերության մեջ, հակառակը, բանվորների տոկոսի աճումը կուսակցության մեջ ավելի արագ է կատարվում, քան բանվոր դասակարգի աճումն իրեն

խոշոր արդյունաբերության մեջ։ Այս բանը պետք է նշենք, որպեսզի տեսնենք, թե ինչ դեմք ունի մեր կուսակցությունը, յերբ մենք խոսում ենք նրա բանվորական միջուկի մասին. նա բաղկացած է գլխավորապես խոշոր արդյունաբերության բանվորներից։

Կարո՞ղ ենք արդյոք այժմ, այս բոլորը տեսնելուց հետո, խոսել այն մասին, թե մի տարվա ընթացքում դազգյահի բանվորների թիվը մեր կուսակցության մեջ պետք է հասցնենք մինչև 90 տոկոսի։—Ո՛չ, չենք կարող. որովհետև մենք չենք կարող, որովհետև մենք չենք ուզում ֆանտաստիկայով տարվել։ Ինչո՞ւ։—Այն պատճառով, որ մեր կուսակցության մեջ դազգյահի բանվորների թիվը 380.000 է, իսկ որպեսզի բոլոր միացածները – ասել է թե մոտ 700.000 ոչ-դազգյահի բանվորները — կազմում են 10 տոկոս, անհրաժեշտ է կուսակցության անդամների թիվը մի տարվա ընթացքում հասցնել 5,000,000-ի։ 90 տոկոսի խնդրում ընկերները պարզապես սխալ հաշիվներ են արել և անպատեհ դրության մեջ են դրել իրենց։

Աճում է արդյոք կուսակցության տեսակարար կշիռը բանվոր դասակարգի մեջ։ Դժվար թե կարիք զգացվի ապացուցելու այս ինքնին ակնհայտ ճշմարտությունը։ Դուք գիտեք, որ մեր կուսակցությունն իր էությամբ ընտրական կուսակցություն է։ Այս տեսակետից մենք այնպիսի նվաճումներ ենք արել, որպիսին չի արել և ոչ մի կուսակցություն յերկրագնդի վրա։ Այս մեկ փաստն արդեն վկայում է, որ մեր կուսակցության տեսակարար կշիռը բանվոր դասակարգի շարքերում անչափելի յե, և որ մեր կուսակցությունը մոնոպոլ է բանվոր դասակարգի ներսում։

Ինչ վերաբերում է մեր կուսակցության տեսակարար կշռին գյուղում, պետք է ասել, որ այստեղ գործը բավական աննախանձելի վիճակում է։ XIII համագումարի նախորյակին 18-ից 60 տարեկան հասակի գյուղական բնակչությունը մեր յերկրում կազմում էր 53.000.000, XIV համագումարի նախորյակին՝ ավելի քան 54.000.000։

Իսկ կոմունիստներ գյուղական բջիջներում XIII համագումարի նախորյակին կային 136.000 հոգի, այսինքն ամբողջ չափահաս գյուղական բնակչության վերաբերմամբ 0,26 տոկոսը, իսկ XIV համագումարի նախորյակին մենք ունենք 202.000 գյուղացի մեր կուսակցության մեջ, այսինքն չափահաս գյուղացիության 0,37 տոկոսը։

Չափազանց դանդաղ է աճում մեր կուսակցությունը գյուղում։ Յես չեմ ուզում ասել, թե նա պետք է յոթ մղոնանոց քայլերով աճի, բայց գյուղացիության այդ տոկոսը մեր կուսակցության մեջ, այնուամենայնիվ, խիստ աննշան է։ Մեր կուսակցությունը բանվորական կուսակցություն է։ Նրա մեջ բանվորները միշտ գերակշռելու յեն։ Դա արտահայտությունն է այն բանի, որ մեր յերկրում պրոլետա-

րիատի դիկտատուրա յե։ Սակայն պարզ ե և այն, վոր առանց գյու-
ղացիության հետ դաշինք կնքելու՝ պրոլետարիատի դիկտատուրան
անկարելի յե, վոր լավագույն գյուղացի մարդկանց վորոշ տոկոսի մեր
կուսակցության մեջ գտնվելը մեր կուսակցության խարիսխն ե գյու-
ղում։ Այս տեսակետից, գոնե առայժմ, դրությունն այնքան ել լավ չե։

Այնուհետև յես պետք ե նշեմ մեր կուսակցության գաղափարա-
կան մակարդակի ընդհանուր աճումը։

Կազմակերպչական կողմերի մասին ձեզ կզեկուցի ընկ. Մոլոտո-
վը. այս պատճառով յես կանգ չեմ առնի այդ հարցի վրա, բայց չեմ
կարող չասել մի բան. այն, վոր բոլոր տվյալների համաձայն մեր ղե-
կավար կադրերի, յերիտասարդ թե ծեր, գաղափարական մակարդակը
նշանակալի չափով բարձրացել ե։ Իբրև որինակ կարող ենք վերցնել
այն դիսկուսիան, վոր մենք ունեցանք անցյալ տարի տրոցկիզմի դեմ։
Խոսքն, ինչպես ձեզ հայտնի յե, վերաբերում եր լենինիզմի ռեվի-
զիային, կուսակցության ղեկավարության, այսպես ասած, տեղն ու
տեղը փոխելուն։ Թե ինչպիսի միաբանությամբ անդրադարձավ կու-
սակցությունն այդ հակակուսակցական բնույթ ունեցող ալիքին—բո-
լորին ե հայտնի։ Ի՞նչ ե ասում այդ։—Այն, վոր կուսակցությունն ա-
ճել ե։ Նրա կադրերն ամրապնդվել են, դիսկուսիան սարսափ չի ազ-
դում նրան։ Ներկայումս մենք, դժբախտաբար, դիսկուսիայի նոր շըր-
ջան ենք թևակոխել։ Բայց յես համոզված եմ, վոր կուսակցությունն ա-
րագորեն կհաղթահարի նաև այս դիսկուսիան, ու առանձնապես վոչինչ
չի կարող պատահել։ (**Ձայներ. «Ճիշտ ե»։ Ծափեր**)։ Անցքերը չկանխելու
և մարդկանց տրամադրությունը չթունավորելու համար յես տվյալ մո-
մենտին չեմ շոշափի եյությունն այն բանի, թե ինչպես եյին պահում
իրենց կոնֆերենցիայում ը. ը. լենինգրադցիները, և ինչպես եյին
անդրադառնում այդ խնդրին Մոսկվայի ընկերները։ Յես կարծում եմ,
վոր համագումարի անդամներն իրենք կասեն այդ, իսկ յես յեզրակա-
ցություններ կանեմ յեզրափակման խոսքում։

Ընկերներ, յես վերջացնում եմ։

Յես խոսեցի մեր արտաքին քաղաքականության և այն ներհա-
կությունների մասին, վորոնք կրծում են կապիտալիստական աշխար-
հը։ Յես ասացի, վոր այդ ներհակությունները կարող են հաղթահար-
վել միայն բանվորական հեղափոխությամբ Արևմուտքում։ Այնուհետև
յես խոսեցի այն ներհակությունների մասին, վորոնց շրջանակներում
ընթանում են մեր փոխհարաբերությունները, Խորհրդային Միու-
թյան փոխհարաբերությունները կապիտալիստական պետությունների
հետ։ Յես խոսեցի այն մասին, վոր նրանք, այդ պետությունները,
կաշխատեն վերածել մեր յերկիրը կապիտալիստական սիստեմի հա-
վելվածի, նրանք կաշխատեն փոքր ինչ միջամտել մեր գործերին, իսկ

մենք կպաշտպանվենք, ընդսմին մենք հուսով ենք, վոր Արևմուտքի բանվոր դասակարգն ամեն կերպ կոգնի մեզ, մանավանդ այժմ, յերբ Արևմուտքի բանվորները հաճախացրել են մեր յերկիր այցելելը և մեզ հետ յեղբայրանալը․ ընդսմին մենք ասում ենք, վոր այդ յեղբայրացումը կապիտալիստներին եժան չի նստի։ Այդ ներհակությունները մենք ել ենք հաղթահարում։ Բայց վերջին հաշվով կապիտալիզմի աշխարհի և սոցիալիզմի աշխարհի միջև արտաքնապես գոյություն ունեցող ներհակությունները մենք միայն մեր ուժերով հաղթահարել անկարող ենք. դրա համար անհրաժեշտ ե պրոլետարական հաղթական հեղափոխության օժանդակությունը մի շարք յերկրներում։

Այնուհետև յես խոսեցի մեր յերկրի ներսը կապիտալիստական տարրերի և սոցիալիստական տարրերի միջև գոյություն ունեցող ներհակությունների մասին։ Յես ասացի, վոր այդ ներհակությունները մեր ուժերով մենք կարող ենք հաղթահարել։ Ով չի հավատում այդ գործին, նա լիկվիդատոր ե, նա չի հավատում սոցիալիստական շինարարությանը։

Այդ ներհակությունները մենք կհաղթահարենք։ Մենք արդեն հաղթահարում ենք նրանց։ Իհարկե, վորքան շուտ հասնի Արևմուտքի օգնությունը, այնքան լավ, այնքան շուտ կհաղթահարենք մենք այդ ներհակությունները, վորպեսզի վերջնականապես ջախջախենք մասնավոր կապիտալը և ձեռք բերենք մեր յերկրում սոցիալիզմի լիակատար հաղթանակ, կառուցենք լիակատար սոցիալիստական հասարակություն։ Բայց առանց կողմնակի օգնության եւ մենք չենք հուսահատվի, կարաուլ չենք աղաղակի․ մեր աշխատանքը չենք թողնի (**Ծափեր**) ու դժվարություններից չենք վախենա։ Ով հոգնել ե, ում յերկյուղ են ազդում դժվարությունները, ով կորցնում ե իր գլուխը—թող ճանապարհ տա նրանց, ով պահպանել ե արիություն ու ամրություն (**Ծափեր**)։ Մենք այնպիսիներից չենք, վորոնց վախեցնում են դժվարությունները։ Հենց դրա համար ել մենք բոլշևիկներ ենք։ Հենց դրա համար ել մենք լենինյան կոփվածություն ենք ձեռք բերել, վորպեսզի վոչ թե խուսափենք, այլ դեմ գնանք դժվարություններին ու հաղթահարենք նրանց։ (**Ձայներ՝** «Ճիշտ ե»։ **Ծափեր**)։

Ընկերներ, յես խոսեցի մեր կուսակցության հաջողությունների ու նրա սխալների մասին։ Այդ սխալները քիչ չեն յեղել։ Յեվ արտաքին ապրանքաշրջանառության գործում, մթերման գործում, և՛ աշխատանքի միքանի այլ բնագավառներում մենք քիչ սխալ չենք գործել։ Իլյիչը խրատում եր մեզ չգոռոզանալ, ու մենք չենք գոռոզանա։ Սխալներ քիչ չեն յեղել, բայց կան նաև հաջողություններ։ Այսպես թե այնպես, բայց մենք մի բանի հասել ենք. մենք ձեռք ենք բերել այնպիսի մի բան, վոր մեզանից վոչ մի կերպ չի կարելի խլել։ Այդ այն ե, վոր

մեր լայն շինարարական աշխատանքով, մեր կատաղի բոլշևիկյան գրոհով տնտեսական ֆրոնտում, այն հաջողություններով, վոր մենք այդտեղ ձեռք ենք բերել—մենք ցույց ենք տվել ամբողջ աշխարհին, վոր բանվորները, իշխանությունը վերցնելով կարող են վոչ միայն հարվածել կապիտալիզմին, վոչ միայն քանդել, այլև կառուցել նոր հասարակություն, սոցիալիզմ կառուցել: Այս նվաճումը, այսինքն այն, վոր մենք այդ ճշմարտությունն ակնհայտ դարձրինք—այս բանը մեզնից չեն կարող խլել:

Սա ամենամեծն ու ամենադժվարն է այն բոլոր նվաճումներից, վոր արել ենք մենք մինչ այժմ: Վորովհետև դրանով մենք ցույց տվինք Արևմուտքի բանվոր դասակարգին և Արևելքի ճնշված ժողովուրդներին, վոր բանվորները, վորոնք պատմության ընթացքում կարողանում եյին միայն քանդել, իսկ կառավարում եյին տերերը—մենք ցույց տվինք, վոր այդ բանվորները, իշխանությունն իրենց ձեռքն առնելով, ապացուցեցին, վոր ընդունակ են կառավարելու մեր մեծ յերկիրը, կառուցելու սոցիալիզմ դժվարագույն պայմաններում: Ի՞նչ է պահանջվում, վորպեսզի Արևմուտքի բանվորները հաղթանակեն:—Ամենից առաջ հավատ դեպի իրենց ուժերը, գիտակցություն այն բանի, վոր բանվոր դասակարգը կարող է կառավարվել առանց բուրժուազիայի, վոր բանվոր դասակարգն ընդունակ է վոչ միայն հինը կործանել, այլ կառուցել նորը, կառուցել սոցիալիզմը: Սոցիալ-դեմոկրատիայի ամբողջ աշխատանքն այն էր, վոր բանվորներին ներշնչի սկեպտիցիզմ, ներշնչի չհավատալ իր ուժերին, չհավատալ բուրժուազիային ուժով հաղթելու հնարավորությանը: Մեր ամբողջ աշխատանքի, մեր ամբողջ շինարարության իմաստն այն է, վոր այդ աշխատանքն ու այդ շինարարությունը համոզում են կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգին, վոր բանվոր դասակարգն ընդունակ է կառավարելու առանց բուրժուազիայի և կառուցելու նոր հասարակություն իր սեփական ուժերով:

Բանվորների ուխտագնացությունը դեպի մեր յերկիրը, այն փաստը, վոր բանվորական պատգամավորությունները, մեր յերկիր գալով, շոշափում են մեր շինարարության յուրաքանչյուր անկյունը և աշխատում են շոշափելով տեսնել մեր շինարարության հաջողությունները—այս բոլորից հետևում է, վոր կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգը, հակառակ սոցիալ-դեմոկրատիայի, սկսում է հավատալ իր սեփական ուժերին և բանվոր դասակարգի ընդունակությանը՝ կառուցելու նոր հասարակություն հնի ավերակների վրա:

Չեմ կարող ասել, թե մենք շատ բանի յենք հասել հաշվետու տարվա ընթացքում, բայց մի բան, այնուամենայնիվ, պետք է խոստովանել. այդ այն է, վոր մեր սոցիալիստական շինարարության հաջո-

գություններով մենք ցույց տվինք և ապացուցեցինք, որ բանվոր դասակարգը, տապալելով բուրժուազիային և իշխանությունն իր սեփական ձեռքն առնելով, ընդունակ է վերակառուցելու կապիտալիստական հասարակությունը սոցիալիզմի սկզբունքներով։ Այս բանին մենք հասել ենք, և ոչ ոք չի կարող խլել այս մեզնից, և ոչ մի դեպքում։ Իսկ այս անգնահատելի հաջողություն է։ Որովհետև ինչ է նշանակում հասնել այսպիսի հաջողության։—Այդ նշանակում է կապիտալիստական յերկրների բանվորներին հավատ ներշնչել դեպի իրենց ուժերը, հավատ դեպի իրենց հաղթանակը։ Այդ նշանակում է նոր զենք տալ նրանց ձեռքն ընդդեմ բուրժուազիայի։ Իսկ որ նրանք իրենց ձեռքն են առնում այդ զենքը և պատրաստ են գործադրելու այն—այդ յերևում է թեկուզ նրանից, որ ուխտագնացությունը դեպի մեր յերկիր ոչ թե դադարում, այլ ուժեղանում է։ Իսկ յերբ կապիտալիստական յերկրների բանվորները վարակվեն հավատով դեպի իրենց ուժերը, կարող եք համոզված լինել, որ այդ կլինի կապիտալիզմի վախճանի սկիզբը և պրոլետարական հեղափոխության հաղթության ամենավստահելի նշանը։

Ահա թե ինչու յեմ յես կարծում, որ մենք զուր չենք աշխատում սոցիալիզմ կառուցելով։

Ահա թե ինչու յեմ յես կարծում, որ այս աշխատանքի մեջ մենք հաղթանակ կտանենք միջազգային մասշտաբով։ (**Փոթորկալի, յերկարատև ծափեր։ Ամբողջ համագումարը ովացիա յե անում**)։

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ.

Ընկերնե՛ր, յես չեմ պատասխանելու առանձին հարցերին վերաբերող առանձին ինձ ուղղված յերկտողերին, վորովհետև իմ ամբողջ յեզրափակման ճառը եյապես այդ յերկտողերի պատասխան ե լինելու:

Այնուհետև յես մտադիր չեմ պատասխանելու անձնական հարձակումներին և ամեն տեսակի զուտ անձնական բնույթ կրող արտահայտություններին, վորովհետև կարծում եմ, վոր համագումարը բավականաչափ նյութեր ունի իր ձեռքի տակ, վորպեսզի կարողանա ստուգել այդ հարձակումների մոտիվներն ու աստառը:

Չեմ խոսի նաև «քարայրի մարդկանց» մասին, վորոնք մի կորած տեղ, Կիսլովոդսկի տակ հավաքվում և ամեն տեսակի կոմբինացիաներ հյուսում Կենտկոմի օրգանների նկատմամբ: Այդ իրենց գործն է, թող կոմբինացիաներ անեն, յես դրա հետ առնչություն չունեմ: Կուզեյի միայն շեշտել, վոր ընկ. Լաշևիչը, վորն այստեղ իր յելույթներում ապլոմբով եր արտահայտվում կոմբինատորական քաղաքականության դեմ, ինչպես պարզվեց, ինքն ել կոմբինատորների թվին ե պատկանում, ըստ վորում Կիսլովոդսկի տակ կայացած «քարայրի» մարդկանց խորհրդակցության մեջ, բանից դուրս ե գալիս, վոր նա անկարևոր դեր չի խաղացել: Եհ, տերն իր հետ: (**Ծիծաղ**):

ԸՆԿ. ՍՈԿՈԼՆԻԿՈՎԸ ՅԵՎ ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ԴԱՈՒԵՍԱՑՈՒՄԸ.

Նախ առանձին առարկությունները: Առաջին առարկությունը ընկ. Սոկոլնիկովինն: Նա իր ճառում ասաց. «Իր յերկու գլխավոր գծերը, մեր տնտեսության շինարարության յերկու գծերն ուրվագծելիս, Ստալինը մեզ մոլորության մեջ գցեց, վորովհետև նա այլ կերպ պետք ե ձևակերպեր այդ յերկու գծերը, պետք ե խոսեր վոչ թե սարքավորում ներմուծելու, այլ պատրաստի ապրանքներ ներմուծելու մասին»: Յես պնդում եմ, վոր ընկ. Սոկոլնիկովի այս հայտարարությունը գլխովին մատնում ե նրան իբրև ընկ. Շանինի թեզիսների կողմնակցի: Յես ուզում եմ ասել, վոր սրանով ընկ. Սոկոլնիկովը փաստորեն հանդես ե գալիս վորպես մեր յերկրի դաուեսացման կողմնակից: Ինչ եմ ասել յես իմ զեկուցման մեջ: Միթե յես ներմուծա-արտածողական պլանի մասին եմ խոսել:—Իհարկե վոչ: Ամեն վոք գիտե, վոր մենք **ներկա-**

յումս ստիպված ենք սարքավորում ներմուծել։ Բայց ընկ. Սոկոլնիկովը այդ կարծիքը դարձնում է սկզբունք, թեորիա, զարգացման հեռանկար։ Ահա թե որն է ընկ. Սոկոլնիկովի սխալը։ Իմ զեկուցման մեջ յես խոսել եմ մեր տնտեսության կառուցման յերկու հիմնական ղեկավար, գլխավոր գծերի մասին։ Յես խոսեցի այդ մասին, վորպեսզի պարզեմ կապիտալիստական շրջապատման պայմաններում մեր յերկրի ինքնուրույն տնտեսական զարգացումն ապահովելու ուղիների հարցը։ Իմ զեկուցման մեջ յես խոսել եմ մեր գլխավոր գծի, մեր հեռանկարների մասին այն մտքով, վոր մեր յերկիրն ագրարայինից պետք է վերածել ինդուստրիականի։ Վ՞րն է ագրարային յերկիրը։—Ագրարային յերկիրն այն յերկիրն է, վորն արտահանում է գյուղատնտեսական մթերքներ և ներմուծում է սարքավորում, բայց ինքն այդպիսի սարքավորում (մեքենաներ և այլն) չի արտադրում կամ համարյա թե չի արտադրում իր սեփական ուժերով։ Յեթե մենք մնանք զարգացման այն աստիճանի վրա, վորի վրա գտնվելով հարկադրված ենք լինում ներմուծել և վոչ թե արտադրել մեր սեփական ուժերով սարքավորում ու մեքենաներ, մենք չենք կարող ապահոված լինել, վոր մեր յերկիրը չի վերածվի կապիտալիստական սիստեմի հավելվածի։

Հատկապես այս պատճառով մենք պետք է մեր յերկրում արտադրության միջոցներ արտադրելու կուրս բռնենք։ Միթե ընկ. Սոկոլնիկովը չի կարողանում հասկանալ այս տարրական բանը։ Մինչդեռ յես միայն այդ մասին եմ խոսել իմ զեկուցման մեջ։

Ի՞նչ է պահանջում Դաուեսի ծրագիրը։—Նա պահանջում է, վորպեսզի Գերմանիան դրամ դուրս հանե կատարելու ռեպարացիոն վճարումներն ի հաշիվ շուկաների, գլխավորապես խորհրդային, մեր շուկաների։ Սրանից ի՞նչ է հետևում։—Սրանից հետևում է այն, վոր Գերմանիան մեզ սարքավորում է տալու, մենք ներմուծելու յենք այդ սարքավորումը, իսկ արտահանելու յենք գյուղատնտեսական մթերքներ։ Մենք, այսինքն մեր արդյունաբերությունն, այսպիսով պիտի լինի շղթաներով կապված Յեվրոպայից։ Դաուեսի ծրագրի հիմքն էլ հենց այդ է։ Այս առթիվ յես իմ զեկուցման մեջ ասացի, վոր Դաուեսի ծրագիրն, ինչ չափով վոր նա վերաբերում է մեր յերկրին, ավազի վրա յե կառուցված։ Ինչո՞ւ։—«Նրա համար,—ասացի յես,—վոր մենք բնավ չենք կամենում մնալ ագրարային յերկիր վորևե մեկ ուրիշ յերկրի, թեկուզ հենց Գերմանիայի համար, վորովհետև մենք ինքներս ենք արտադրելու մեքենաներ և արտադրության այլ միջոցներ։ Մեր յերկիրն ագրարայինից վերածել ինդուստրիալ յերկրի՝ ընդունակ իր սեփական ուժերով անհրաժեշտ սարքավորում արտադրելու—ահա թե ինչն է մեր գլխավոր գծի էությունը, հիմքը։ Գործը մենք պետք է դնենք այնպիսի հիմքերի վրա, վորպեսզի մեր տնտեսավարների մտածումներն ու ձգտում-

ներն ուղղվեն հատկապես դեպի այդ կողմը, ուղղվեն մեր յերկիրը սարքավորում ներմուծող յերկրից՝ սարքավորում արտադրող յերկիր դարձնելու կողմը։

Վորովհետև այդ է մեր յերկրի տնտեսական ինքնուրույնության հիմնական յերաշխիքը։ Վորովհետև դա յերաշխիքն է այն բանի, վոր մեր յերկիրը չի վերածվի կապիտալիստական յերկրների հավելվածի։ Ընկ. Սոկոլնիկովը չի կամենում ըմբռնել այս պարզ ու ակնհայտ բանը։

Նրանք, Դաուեսի ծրագրի հեղինակները, կցանկային սահմանափակել մեզ, դիցուք, չթի արտադրությամբ, բայց դրանով մենք չենք կարող բավականանալ, վորովհետև մենք կամենում ենք արտադրել վոչ միայն չիթ, այլև չթի արտադրության համար անհրաժեշտ մեքենաներ։ Նրանք կցանկային, վոր մենք սահմանափակվենք, դիցուք, ավտոմոբիլի արտադրությամբ, բայց այդքանը մեզ չի կարող բավարարել, վորովհետև մենք կամենում ենք արտադրել վոչ միայն ավտոմոբիլներ, այլև ավտոմոբիլ արտադրող մեքենաներ։ Նրանք կամենում են սահմանափակել մեզ, դիցուք, կոշիկի արտադրությամբ, բայց այդքանը մեզ չի կարող բավարարել, վորովհետև մենք կամենում ենք արտադրել վոչ միայն կոշիկներ, այլև կոշիկ արտադրող մեքենաներ։ Յեվ այլն, և այլն։ Ահա թե վորն է յերկու գլխավոր գծերի տարբերությունը, ահա թե ինչն է, վոր չի կամենում ըմբռնել ընկ. Սոկոլնիկովը։ Հրաժարվել մեր գծից—նշանակում է հեռանալ սոցիալիստական շինարարության խնդիրներից, նշանակում է կանգնել մեր յերկրի դաուեսացման տեսակետի վրա։

ԸՆԿ. ԿԱՄԵՆԵՎԸ ՅԵՎ ՄԵՐ ԶԻԶՈՒՄՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԸ.

Յերկրորդ առարկությունն—ընկ. Կամենևինն։ Նա ասաց, վոր մենք, XIV կուսակցական կոնֆերենցիայում վորոշումներ ընդունելով տնտեսական գծով, խորհուրդների աշխուժացման գծով, ռազմական կոմունիզմի մնացորդների վերացման գծով, արենդի ու վարձու աշխատանքի հարցի ճշգրտման գծով—դրանով իսկ զիջումներ արինք վոչ թե գյուղացուն, այլ կուլակին, և դրանք զիջումներ են վոչ թե գյուղացիությանն, այլ կապիտալիստական տարրերին։ Ճի՞շտ է այս։—Յես պնդում եմ, վոր այդ ճիշտ չէ, վոր այդ զրպարտություն է կուսակցության հասցեյին։ Յես պնդում եմ, վոր մարքսիստն այդպես չի կարող մոտենալ հարցին, վոր այդպես կարող է մոտենալ հարցին միայն լիբերալը։

Ի՞նչ են այն զիջումները, վոր արինք մենք XIV կուսկոնֆերենցիայում։ Տեղավորվո՞ւմ են արդյոք այդ զիջումները նեպի շրջանակներում թե վոչ։—Անպայմանորեն տեղավորվում են։ Գուցե մենք ըն-

դարձակել ենք նույն ապրիլյան կոնֆերենցիայում։ Օպոզիցիան թող պատասխանի—ընդարձակե՞լ ենք մենք նույն ապրիլին, թե ոչ։ Եթե մենք այն ընդարձակել եյինք, ապա նրանք ել ինչու քվեարկեցին հօգուտ XIV կոնֆերենցիայի վորոշումների։ Եվ միթե հայտնի չե, վոր մենք բոլորս ել նեպի ընդարձակման դեմ ենք։ Ուրեմն ի՞նչ ե պատահել։—Այն վոր ընկ. Կամենևը մոլորվել ե, վորովհետև նեպն իր մեջ պարունակում ե առևտրի, կապիտալիզմի, վարձու աշխատանքի թույլատրումն, իսկ XIV կոնֆերենցիայի վորոշումներն արտահայտությունն են նեպի, վորը մտցրած ե Լենինի օրով։ Արդյոք Լենինը գիտե՞ր, վոր նեպն առաջին շրջանում ոգտագործելու յեն նախ և առաջ կապիտալիստները, վաճառականները, կուլակները։—Իհարկե գիտեր։ Բայց միթե Լենինն ասել ե, թե նեպ մտցնելով մենք զիջումներ ենք անում սպեկուլյանտներին ու կապիտալիստական տարրերին և վոչ թե գյուղացիությանը։—Վոչ, չի ասել և չեր կարող այդպիսի բան ասել։ Ընդհակառակը, նա միշտ պնդում եր, վոր թույլատրելով առևտուրն ու կապիտալիզմը և փոխելով մեր քաղաքականությունը դեպի նեպ, մենք զիջումներ ենք անում գյուղացիությանը, վորպեսզի պահպանենք և ամրացնենք մեր կապը նրա հետ, վորովհետև գյուղացիությունը չի կարող ապրել ներկա պայմաններում առանց ապրանքաշրջանառության, առանց կապիտալիզմի վորոշ աշխուժացման թույլատրման,—վորովհետև այդ կապը մենք այժմ կարող ենք կանոնավորել միայն առևտրի միջոցով, վորովհետև միայն այդպիսով մենք կարող ենք ամրապնդել այդ կապը և կառուցել սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը։

Ահա թե ինչպես եր մոտենում զիջումների հարցին Լենինը։ Ահա թե ինչպես պետք եր մոտենալ զիջումների հարցին 1925 թվի ապրիլին։ Թույլ տվեք կարդալ ձեզ Լենինի կարծիքը այս հարցի մասին։ Ահա թե նա ինչպես ե հիմնավորում կուսակցության անցումը դեպի նոր քաղաքականություն, դեպի նեպի քաղաքականություն «պարենհարկի մասին» թեմայով Մոսկվայի նահանգի բջիջների քարտուղարների խորհրդակցությանն արած իր զեկուցման մեջ.—

«Ես կամենում եմ կանգ առնել, թե ինչպես այս քաղաքականությունը կարելի յե հաշտեցնել կոմմունիզմի տեսակետի հետ, և ինչպես ե լինում, վոր կոմմունիստական խորհրդային իշխանությունը նպաստում ե ազատ առևտրի զարգացմանը։ Արդյոք կոմմունիզմի տեսակետից լավ բան ե այս։ Այս հարցին պատասխանելու համար պետք ե ուշադրությամբ զննել այն փոփոխությունները, վորոնք տեղի յեն ունեցել գյուղացիական տնտեսության մեջ։ Սկզբում դրությունն այնպես եր, վոր մենք տեսանք, թե ինչպես ամբողջ գյուղացիությունը զրոհ եր տալիս կալվածատերերի իշխանության դեմ։ Կալվածատերերի դեմ գնում եյին

միակերպ թե՛ աղքատները, թե՛ համփաները, թեև, իհարկե, տար-
բեր դիտավորություններով. համփաները հարձակվում եյին՝ նպա-
տակ ունենալով հողը խլել կալվածատերերից և այս հողի վրա
իրենց տնտեսությունը զարգացնել։ Ահա հենց այն ժամանակ
յերևան յեկան համփաների ու աղքատների տարբեր շահերն ու
ձգտումները։ Ուկրայնայում շահերի այս տարբերությունը հենց
այժմ էլ շատ ավելի պայծառ է յերևան գալիս, քան մեզանում։
Հողի այս անցումը կալվածատերերից գյուղացիներին՝ աղքատ-
ները շատ քիչ կարողացան օգտագործել, վորովհետև սրա համար
նրանք չունեյին վոչ նյութեր, վոչ գործիքներ։ Յեվ ահա մենք
տեսնում ենք, վոր աղքատները կազմակերպվում են, վորպեսզի
համփաներին թույլ չտան գրավել խլած հողերը։ Խորհրդային
իշխանությունն օգնություն է ցույց տալիս աղքատների կոմի-
տեներին, վորոնք ծնունդ եյին առել մեզանում, ու աղքատների
կոմիտեներին Ուկրայնայում։ Հետևանքն ինչ յեղավ.— **Հետեվանքն
այն յեղավ, վոր գյուղում գերակշռող տարր դարձան միջակ-
ները...** համփաների դեմ գործադրվող ծայրահեղությունները չքա-
ցել են, չքացել են աղքատների վերաբերմամբ նույնպես, և բնակ-
չության մեծամասնությունն սկսել է մոտենալ միջակի դրությանը։
Յեթե հարկավոր է, վոր մենք մեր գյուղացիական տնտեսու-
թյան արտադրողականությունը մեծացնենք, ապա մենք առաջին
հերթին պետք է հաշվի առնենք միջակին։ **Հարկ յեղավ, վոր
Կոմմունիստական Կուսակցությունը հենց սրա համեմատ էլ
կառուցի իր քաղաքականությունը... Նշանակում է՝ գյուղա-
ցիության նկատմամբ յեղած քաղաքականության փոփոխությու-
նը բացատրվում է նրանով, վոր փոփոխվել է հենց իր, գյու-
ղացիության դրությունը:** Գյուղը դարձել է էլ ավելի միջակա-
յին, և արտադրող ուժերի բարգավաճման համար մենք պետք է
հաշվի առնենք այս։ (Վ. Ի. Լենին, «Նոր տնտեսական քաղաքա-
կանություն», եջ 71—73, Պետական Հրատարակչություն, Յերև-
վան, 1926 թ.)։

Յեվ ապա նույն այդ հատորում, 146-րդ եջում, Լենինն ընդհա-
նուր յեզրակացություն է հանում.

«**Մենք մեր պետական էկոնոմիկան պետք է կառուցենք հա-
մաձայն միջակի էկոնոմիկայի**, վորը մենք յերեք տարվա ըն-
թացքում չեյինք կարող փոխել և դեռևս տաս տարվա ընթացքում
չպիտի կարողանանք փոխել»։

Այլ խոսքով ասած՝ մենք մտցրինք առևտրի ազատություն, մենք
թույլատրեցինք կապիտալիզմի աշխուժացումը, մենք նեպ մտցրինք
նրա համար, վորպեսզի բարձրացնենք արտադրական ուժերի աճումը,

ավելացնենք մթերքների քանակը մեր յերկրում, ամրապնդենք մեր կապը գյուղացիության հետ։ Կապը գյուղացիության հետ, այդ կապի շահերը, վորպես նեպի գծով արվող զիջումների հիմք—ահա թե ինչպես է մոտենում խնդրին Լենինը։

Արդյոք Լենինն այդ ժամանակ գիտեր, վոր նեպից, գյուղացիության արած զիջումներից օգտվելու յեն սպեկուլյանտները, կապիտալիստները, կուլակները։ Իհարկե գիտեր։ Նշանակո՞ւմ է այս արդյոք, վոր այդ զիջումները, եյապես, զիջումներ եյին սպեկուլյանտին ու կուլակին։—Վո՛չ, չի նշանակում։ Վորովհետև նեպն ընդհանրապես և առևտուրը մասնավորապես օգտագործում են վոչ միայն կապիտալիստներն ու կուլակները, այլ և պետական ու կոոպերատիվ մարմինները, վորովհետև առևտուր են անում վոչ միայն կապիտալիստներն ու կուլակներն, այլև պետմարմիններն ու կոոպերացիան, ընդվորում պետմարմիններն ու կոոպերացիան, յերբ նրանք սովորեն առևտուր անել, կգերակշռեն (արդեն իսկ գերակշռում են) մասնավորներին, շաղկապելով մեր ինդուստրիան գյուղացիական տնտեսության հետ։

Իսկ սրանից ինչ է ստացվում։—Սրանից ստացվում է այն, վոր մեր զիջումները հիմնականում ընթանում են կապի ամրապնդման գծով և արվում են հանուն կապի։

Ով այս չի ըմբռնում, նա մոտենում է խնդրին վոչ թե վորպես լենինիստ, այլ վորպես լիբերալ։

ՈՒՄ ՍԽԱԼ ՀԱՇԻՎՆԵՐԸ.

Յերրորդ առարկությունն ընկ. Սոկոլնիկովին։ Նա ասում է. «Վոչաննշան այն կորուստները, վոր կրեցինք մենք տնտեսական ֆրոնտում աշնանից սկսած, ընթանում են ճիշտ մեր ուժերի վերագնահատման գծով, մեր սոցիալիստական հասունության վերագնահատման գծով, մեր կողմից, պետական տնտեսության կողմից ամբողջ ժողովրդական տնտեսությունն այժմ իսկ ղեկավարելու կարելիությունների վերագնահատման գծով»։

Բանից դուրս է գալիս, վոր մթերումների և արտաքին առևտրի ասպարեզում մեր արած սխալ հաշիվները—յես նկատի ունեմ 1924/25 թվին մեր պասիվ սալդոն—բացատրվում են վոչ թե մեր կարգավորիչ մարմինների սխալմունքով, այլ նրանով, վոր մենք վերագնահատում ենք մեր տնտեսության սոցիալիստական հասունությունը։ Յեվ սրա հանցանքը, բանից դուրս է գալիս, ընկնում է ընկ. Բուխարինի վրա, վորի «շկոլան» հատկապես պատվաստում է մեր տնտեսության սոցիալիստական հասունությամբ հափշտակվելու գործը։

Իհարկե, ճառելիս մարդ «կարող է» գլխից դուրս տալ՝ ինչքան

քեֆը տալիս է, ինչպես այդ հաճախ անում է ընկ. Սոկոլնիկովը։ Բայց չէ՞ որ մարդ պետք է, այնուամենայնիվ, չափ ճանաչի։ Ի՞նչպես կարելի յե այդպիսի անհեթեթություն և ուղղակի սուտ ասել համագումարի առաջ։

Մի՞թե ընկ. Սոկոլնիկովը չգիտե նոյեմբերի սկզբներում տեղի ունեցած Պոլիտբյուրոյի նիստի մասին, վորտեղ մթերումների և արտաքին առևտրի հարցը քննվեց, վորտեղ կարգավորիչ մարմինների սխալներն ուղղեցին Կենտրոնական Կոմիտեյի կողմից, Կենտրոնական Կոմիտեյի մեծամասնության կողմից, վորն իբր թե գերագնահատում է մեր սոցիալիստական կարելիությունները։ Ի՞նչպես կարելի յե համագումարում այդպիսի դատարկ բաներ դուրս տալ։ Յեվ ինչ գործ ունի այստեղ Բուխարինի «շիլան» կամ ինքն ընկ. Բուխարինը։ Այս ինչ ձև է իր մեղքն ուրիշի վրա գցելու։ Մի՞թե ընկ. Սոկոլնիկովը չգիտե, վոր մեր սխալ հաշիվների հարցին վերաբերող Կենտկոմի նիստի արձանագրությունն ուղարկվել է բոլոր նահանգկոմներին. ինչպես կարելի յե խոսել ակնհայտ փաստերի դեմ։ Ճառելիս «կարելի յե» գլխից դուրս տալ. բայց չէ՞ որ մարդ չափ էլ պետք է ճանաչի։

ԸՆԿ. ՍՈԿՈԼՆԻԿՈՎԸ Ի՞ՆՉՊԵՍ Է ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ՉՔԱՎՈՐՆԵՐԻՆ.

Չորրորդ տարակուսությունը ես ընկ. Սոկոլնիկովի դեմ է։ Նա այստեղ հայտարարեց, վոր ինքը, վորպես ֆինժողկոմ, ամեն կերպ աշխատում է ապահովել մեր գյուղատնտեսական հարկի յեկամտայնությունը, բայց իրեն խանգարում են, վորովհետև հնարավորություն չեն տալիս պաշտպանել չքավորներին և սանձահարել կուլակին։ Սա ճիշտ չէ, ընկերներ։ Սա զրպարտություն է կուսակցության հասցեյին։ Գյուղատնտեսական հարկը յեկամտային գծով ձևականապես փոխելը — յես ձևականապես եմ ասում, վորովհետև փաստորեն դա յեկամտային հարկ է — այդ հարցը դրվեց Կենտկոմի պլենումում այս տարվա հոկտեմբերին, սակայն ընկ. Սոկոլնիկովից բացի վոչ վոք չպաշտպանեց այդ հարցը համագումարում դնելու առաջարկը, վորովհետև համագումարում դնելու համար այն դեռևս պատրաստված չէր։ Այն ժամանակ ընկ. Սոկոլնիկովը չպնդեց իր առաջարկության վրա։

Իսկ այժմ պարզվում է, վոր ընկ. Սոկոլնիկովը հեռու չէ ոգտագործելու այդ գործը Կենտկոմի դեմ, իհարկե վոչ թե հանուն չքավորների շահերի, այլ հանուն ոպպոզիցիայի շահերի։ Այսպիսով քանի վոր ընկ. Սոկոլնիկովն այստեղ չքավորների մասին է խոսում, թույլ տվեք հաղորդել ձեզ մի փաստ, վորը մերկացնում է ընկ. Սոկոլնիկովի, չքավորների այդ իբր թե յերդվյալ պաշտպանի, իսկական դիրքը։ Սրանից քիչ առաջ ՌԽՍՖՀ ֆինժողկոմ ընկ. Միլյուտինը մի վորոշում էր

ընդունել՝ չքավոր գյուղացիական տնտեսությունները մեկ ռուբլուց պակաս հարկից ազատելու մասին։ Կենտկոմին ուղարկած ընկ. Միլյուտինի զեկուցագրից յերևում է, վոր այդ մեկ ռուբլուց պակաս հարկի գումարը—մի հարկ, վոր ջղայնացնում է գյուղացիությանը—կազմում է մոտ 300—400 հազար ռուբլի ամբողջ ՌԽՍՖՀ մեջ, և վոր այդ հարկի գանձման ծախսերի համար պահանջվում է այդ հարկի գումարից աննշան չափով պակաս մի գումար։ Ի՞նչ եք կարծում, ինչ է անում ընկ. Սոկոլնիկովը, չքավորների այդ պաշտպանը։ Նա վերցնում-փոխում է ընկ. Միլյուտինի վորոշումը։ Կենտկոմը 15 նահանգկոմից բողոք է ստանում այդ առթիվ. Ընկ. Սոկոլնիկովը համառում է։ Անհրաժեշտ է լինում դիմելու կենտկոմի ճնշման, հարկադրելու ընկ. Սոկոլնիկովին, վոր հրաժարվի ՌԽՍՖՀ ֆինժողկոմի մեկ ռուբլուց պակաս հարկը չհավաքելու մասին արած միանգամայն ճիշտ վորոշումը փոխելուց։ Ընկ. Սոկոլնիկովի լեզվով այս չքավորների շահերի «պաշտպանություն» է նշանակում։ Յեվ այդպիսի ընկերները, վորոնք իրենց խղճի վրա այդպիսի բեռ ունեն—ինչպես արտահայտվենք, վոր մեղմ լինի—համարձակվում են կենտկոմի դեմ լինել։ Տարօրինակ է, ընկերներ, տարօրինակ։

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ, ԹԵ՞ ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ.

Վերջապես ևս մի առարկություն։ Խոսքս վերաբերում է «Сборник материалов по спорным вопросам» ժողովածուի («Նյութերի ժողովածու վիճելի հարցերի մասին») հեղինակներին ուղղելիք առարկությանը։ Յերեկ այստեղ գաղտնաբար, միայն համագումարի անդամներին, բաժանեցին հենց նոր հրատարակված «Сборник материалов по спорным вопросам» ժողովածուն։ Այդ ժողովածուի մեջ ի միջի այլոց ասված է, վոր յես, այս տարվա ապրիլին գյուղթղթակիցների պատգամավորությունն ընդունելիս, համակրանք եմ հայտնել սեփականության վերականգնման գաղափարին։ Բանից դուրս է գալիս, վոր «Բեդնոտա»-յում զետեղված են յեղել գյուղթղթակիցներից մեկի ինձ անհայտ, իմ կողմից չնայված նման «տպավորությունները»։ Այդ մասին յես իմացա այս տարվա հոկտեմբերին։ Ավելի վաղ, ապրիլին, Ռիգայի հեռագրական գործակալությունը, վոր տարբերվում է բոլոր մյուս գործակալություններից նրանով, վոր թխում է ամեն տեսակի սուտ լուրեր մեր մասին, դրա նման հաղորդագրություն եր արել արտասահմանի մամուլին, վորի մասին մեզ հաղորդեցին մեր մարդիկ Պարիզից՝ Արտժողկոմատին հասցեագրած հեռագրով, պահանջելով, վոր հերքենք։ Յես անհապաղ պատասխանեցի ընկ. Չիչերինին ոգնականիս միջոցով, հայտարարելով, վոր «յեթե ընկ. Չիչերինը կամենում է հերքել յուրաքանչյուր հիմար լուր և բամբասանք, թող հերքե» (տես՝ կենտկոմի արխիվ)։

Հայտնի՞ յե արդյոք այս բոլորն այդ սակրամենտալ (սրբազան) «Ժողովածուի» հեղինակներին։ – Իհարկե հայտնի յե։ Հապա ել ինչո՞ւ յեն շարունակում ամեն տեսակ հիմարություն և հերյուրանք տարածել իմ մասին։ Ի՞նչպես են կարողանում նրանք, ինչպես և կարողանում օպպոզիցիան դիմել Ռիգայի հեռագրական գործակալության մեթոդին։ Միթե նրանք մինչև այդ տեղն են հասել։ (**Մի ձայն.** «Խայտառակություն»)։

Այնուհետև, ծանոթ լինելով «քարայրի մարդկանց» բարքերին, իմանալով, վոր նրանք ընդունակ են կրկնելու Ռիգայի գործակալության մեթոդները, յես «Բեդնոտա»-յի խմբագրությանը հերքում ուղարկեցի։ Այդպիսի հիմարություն հերքելը ծիծաղելի յե, բայց իմանալով, թե ում հետ գործ ունեմ, յես հերքումն, այնուամենայնիվ, ուղարկեցի։ Ահա այն.—

«Նամակ «Բեդնոտա»-յի խմբագրության։

Ընկ. խմբագիր. Մոտ օրերս յես ընկերներից իմացա, վոր «Բեդնոտա»-յի 1925 թ. ապրիլի 5-ի համարում տպված գյուղթղթակիցներից մեկի՝ գյուղթղթակիցների պատգամավորության ինձ հետ ունեցած զրույցի տպավորությունները նկարագրող ակնարկում, վորը յես իր ժամանակ կարդալու առիթ չեմ ունեցել, հաղորդվում ե, վոր յես իբր թե համակրությամբ եմ վերաբերվել հողի տիրապետությունը 40 և ավելի տարով ամրացնելու գաղափարին, հողի մասնավոր սեփականության գաղափարին և այլն։ Թեև այդ ֆանտաստիկ հաղորդագրությունը հերքման կարոտ չի՝ շնորհիվ նրա ակնհայտ անհեթեթության, բայց և այնպես թերևս ավելորդ չի լինի ձեր թույլտվությունը խնդրել հաղորդելու «Բեդնոտա»-յում, վոր այդ հաղորդագրությունը կոպտագույն սխալ ե, և այն ամբողջապես պետք ե՛ վերագրել նրա հեղինակի ֆանտազիային։

Ի. Ստալին»

Հայտնի՞ յե արդյոք այս նամակը «Ժողովածուի» ընկեր հեղինակներին։— Անկասկած հայտնի յե։ Հապա ել ինչո՞ւ յեն շարունակում բամբասանքներ, հերյուրանքներ տարածել։ Այս պայքարի ինչ մեթոդ ե։ Ասում են, թե այս գաղափարական պայքար ե։ Ո՛, վոչ, ընկերներ, դա գաղափարական պայքար չե։ Մեր պարզ ռուս լեզվով դրան ուղղակի ասում են **զրպարտություն**։

Թույլ տվեք այժմ անցնեմ հիմնական սկզբունքային հարցերին։

ՆԵՊԻ ՄԱՍԻՆ.

Վերցնենք նեպի հարցը։ Խոսքս վերաբերում ե ընկ. Կրուպսկայային և նրա ճառին նեպի հարցի մասին։ Նա ասում ե. «Նեպն եյապես կապիտալիզմ ե, վորոշ պայմաններով թույլատրված, կապիտալիզմ, վորը շղթայակապ ե պահում պրոլետարական պետությունը»...

Ճի՞շտ է այս։—Յեվ այո, և վոչ։ Վոր մենք շղթայած ենք պահում կապիտալիզմը և պահելու յենք, քանի նա գոյություն ունի, այդ փաստ է, այդ ճիշտ է։ Բայց ասել, թե նեպը կապիտալիզմ է—այդ անհեթեթություն է, անասելի անհեթեթություն։ Նեպը պրոլետարական պետության հատուկ քաղաքականություն է, վորը թույլատրում է կապիտալիզմի գոյությունը, պայմանով, վոր պրոլետարական պետության ձեռքին են գտնվում իշխող բարձունքները, վոր հիմնված է կապիտալիստական և սոցիալիստական տարրերի պայքարի վրա, հիմնված է սոցիալիստական տարրերի դերի ի վնաս կապիտալիստական տարրերի՝ աճման վրա, հիմնված է կապիտալիստական տարրերի նկատմամբ սոցիալիստական տարրերի հաղթանակի վրա, հիմնված է դասակարգերի վերացման, սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման վրա։ Ով չի ըմբռնում նեպի այս անցողիկ, յերկաթե բնույթը, նա հեռանում է լենինիզմից։ Յեթե նեպը կապիտալիզմ լիներ, այն ժամանակ նեպական Ռուսաստանը, վորի մասին խոսում եր Լենինը, կլիներ կապիտալիստական Ռուսաստան։ Բայց մի՞թե այժմյան Ռուսաստանը կապիտալիստական է և վոչ անցման՝ կապիտալիզմից դեպի սոցիալիզմ։ Հապա ել ինչու Լենինն ուղղակի չասաց. «**Կապիտալիստական** Ռուսաստանը կդառնա սոցիալիստական», այլ գերադասեց տալ այլ ֆորմուլա. «**Նեպական** Ռուսաստանը կդառնա սոցիալիստական Ռուսաստան»։

Համաձա՞յն է արդյոք ոպպոզիցիան ընկ. Կրուպսկայայի հետ, վոր նեպը կապիտալիզմ է, թե համաձայն չե։—Յես կարծում եմ, վոր չի գտնվի համագումարի և վոչ մի անդամ, վոր համաձայնի ընկ. Կրուպսկայայի ֆորմուլայի հետ։ Ընկ. Կրուպսկայան (թող ների նա ինձ) նեպի մասին միանգամայն անհեթեթ բան է ասել։ Չի կարելի այստեղ Լենինին պաշտպանելու համար Բուխարինի դեմ յելնել այդպիսի անհեթեթությամբ։

ՊԵՏԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՄԱՍԻՆ.

Այս հարցի հետ կապված է ընկ. Բուխարինի սխալը։ Վո՞րն եր նրա սխալը։ Վո՞ր հարցերի շուրջն եր վիճում Լենինը Բուխարինի հետ։ Լենինը պնդում եր, վոր պետկապիտալիզմի կատեգորիան համակցելի յե (СОВМЕСТИМО) պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի հետ։ Բուխարինն այդ ժխտում եր։ Նա գտնում եր—և ձախ կոմմունիստները, դրանց թվում նաև ընկ. Սոկոլնիկովը նրա հետ միասին՝ գտնում եյին, վոր չի կարելի համակցել պետկապիտալիզմի սիստեմը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմին։ Իհարկե Լենինն իրավացի յեր։ Բուխարինն՝ անիրավացի։ Յեվ նա իր այդ սխալը խոստովանեց։ Ահա թե վորն եր Բուխարինի սխալը։ Բայց այդ առաջ եր։ Յեթե նա այժմ,

1925 թվին, մայիսին, կրկնում է, որ տարակարծիք է Լենինի հետ պետկապիտալիզմի հարցում, յես կարծում եմ, որ այդ պարզապես թյուրիմացություն է: Կամ նա պարտավոր է այդ հայտարարությունից ուղղակի հրաժարվել, կամ այդ թյուրիմացություն է, որովհետև այն գիծը, որ նա պաշտպանում է այժմ պետկապիտալիզմի բնույթին վերաբերող հարցում, Լենինի գիծն է: Ոչ թե Լենինն է յեկել Բուխարինի մոտ, այլ, ընդհակառակը, Բուխարինն է յեկել Լենինի մոտ: Հենց դրա համար է, որ մենք պաշտպանում ենք և պաշտպանելու յենք Բուխարինին (**ծափեր**):

Ընկ. ընկ. Կամենևի և Զինովևի հիմնական սխալն այն է, որ նրանք պետկապիտալիզմի հարցը քննում են սխոլաստիկ կերպով, ոչ-դիալեկտիկորեն, առանց պատմական դրավիճակի հետ կապակցելու: Հարցի այդ ձևի մոտեցում ունենալը հակասում է լենինիզմի ամբողջ ոգուն: Լենինն ինչպես էր դնում այդ հարցը — 1921 թվին Լենինը, իմանալով, որ մեր արդյունաբերությունը քիչ է զարգացած, իսկ գյուղացիությունն ապրանքի կարիք է զգում, իմանալով, որ արդյունաբերությունը մեկեն չես բարձրացնի, որ բանվորները, որոշ պայմանների հետևանքով, զբաղված են ոչ այնքան արդյունաբերությամբ, որքան վառիչներ (ЗАЖИГАЛКИ) պատրաստելով, - Լենինը գտնում էր, որ այդ պայմաններում բոլոր կարելիություններից լավագույն կարելիությունն է — դիմել մեր յերկիր գրավել օտարերկրյա կապիտալը, նրա օգնությամբ կարգի գցել արդյունաբերությունը, այդպիսով պետկապիտալիզմ մտցնել և նրա **միջոցով** գլուխ բերել խորհրդային իշխանության կապը գյուղի հետ: Այս ուղին այն ժամանակ անկասկած, ճիշտ էր, որովհետև գյուղացիությանը բավարարելու այլ կարելիություններ այն ժամանակ մենք չունեյինք, որովհետև մեր արդյունագործությունը կաղում էր, տրանսպորտը կանգ էր առել, կամ համարյա թե կանգ էր առել, չկար, պակասում էր վառելիք: Լենինն այն ժամանակ թույլատրելի և ցանկալի համարում էր արդյոք պետկապիտալիզմը, որպես մեր տնտեսության գերակշռող ձև: Այո, համարում էր: Բայց այդ այն ժամանակ էր, 1921 թվին: Իսկ այժմ — Այժմ կարելի՞ յե ասել, թե մենք մեր արդյունաբերությունը չունենք, տրանսպորտը կանգ է առած, վառելիք չունենք և այլն: — Ոչ, չի կարելի: Կարելի՞ յե ժխտել, որ մեր արդյունաբերությունն ու առևտուրն արդեն կապ են հաստատում ինդուստրիայի (**մեր** ինդուստրիայի) և գյուղացիական տնտեսության միջև **անմիջական կերպով**, իրենց սեփական ուժերով: — Ոչ, չի կարելի: Կարելի՞ յե ժխտել, որ արդյունաբերության ասպարեզում «պետկապիտալիզմն» ու «սոցիալիզմը» արդեն փոխել են իրենց դերերը, որովհետև սոցիալիստական արդյունաբերությունը գերիշխող է դարձել, իսկ կոնցեսսիաներն և ա-

ընդքի տնտեսական կշիռը (առաջինները ունեն 50 հազար բանվոր, յերկրորդը՝ 35 հազար) նվազագույն է։ — Ո՛չ, չի կարելի։ Դեռևս 1922 թվին Լենինն ասաց, որ կոնցեսիաներից ու արենդից մեր յերկրում բան չի դուրս գալիս։

Իսկ ինչ է հետևում սրանից։ — Սրանից այն է հետևում, որ 1921 թվից պայմանները մեզ մոտ էապես փոխվել են, որ այս ժամանակամիջոցում մեր սոցիալիստական արդյունաբերությունն ու խորհրդային-պետական առևտուրը կարողացել են դառնալ գերակշռող ուժ, որ կապը քաղաքի և գյուղի միջև արդեն սովորել ենք հաստատել սեփական ուժերով, որ պետկապիտալիզմի ամենացայտուն ձևերը — կոնցեսիաներն ու արենդն այդ ժամանակամիջոցում լրջորեն չեն զարգացել, որ խոսել **այժմ**, 1925 թվին, պետկապիտալիզմի մասին, որպես մեր տնտեսության գերակշռող ձևի մասին՝ նշանակում է աղավաղել մեր պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթը, նշանակում է չըմբռնել անցյալ և այժմյան պայմանների միջև գոյություն ունեցող ամբողջ տարբերությունը, նշանակում է մոտենալ պետկապիտալիզմի հարցին ոչ թե դիալեկտիկորեն, այլ սխոլաստիկորեն, բնազանցորեն։

Չեի՞ք կամենա լսել ընկ. Սոկոլնիկովին։ Նա իր ճառում ասում է.

«Մեր արտաքին առևտուրը տարվում է որպես պետական-կապիտալիստական ձեռնարկություն... Մեր ներքին առևտրական ընկերությունները նույնպես պետական-կապիտալիստական ձեռնարկություններ են։ Յեվ յես պետք է ասեմ, ընկերներ, որ պետական բանկը ևս պետական-կապիտալիստական ձեռնարկություն է։ Մեր դրամական սիստեմը։ — Մեր դրամական սիստեմը հիմնված է այն բանի վրա, որ խորհրդային տնտեսության մեջ, կառուցվող սոցիալիզմի պայմաններում, առնված է դրամական մի սիստեմ, որը տոգորված է կապիտալիստական էկոնոմիկայի սկզբունքներով»։

Այսպես է ասում ընկ. Սոկոլնիկովը։

Շուտով նա այնտեղը կհասնի, որ ֆինանսների ժողովրդական կոմիսարիատը ևս պետական կապիտալիզմ կհայտարարի։ Մինչ այժմ յես կարծում եյի, մինչ այժմ մենք բոլորս եյինք կարծում, որ պետբանկը պետական ապարատի մի մասն է։ Մինչև այժմ յես կարծում եյի, և մենք բոլորս կարծում եյինք, որ մեր արտառը (ВНЕШТОРГ), յեթե չհաշվենք նրա հարակից պետկապիտալիստական հիմնարկները, մի մասն է պետական ապարատի, որ մեր պետական ապարատը պրոլետարական տիպի պետության ապարատ է։ Մենք բոլորս այդպես եյինք կարծում մինչ այժմ, որովհետև պրոլետարական իշխանությունը **միակ** տերն է այդ հաստատությունների (ինստիտուտների)։ Իսկ այժմ ըստ Սոկոլնիկովի դուրս է գալիս, որ այդ ինստիտուտները, որոնք մասն են մեր պետապարատի, պետկապիտալիստական են։ Գուցե մեր

խորհրդային ապպարատը նույնպես պետկապիտալիզմ ե և վոչ թե պրոլետարական տիպի պետություն, ինչպես Լենինն եր պնդում։ Ի՞նչ կա վոր։ Միթե մեր խորհրդային ապպարատը չի գործադրում մի «դրամական սիստեմ, վոր տոգորված ե կապիտալիստական եկոնոմիկայի սկզբունքներով»։

Ահա թե մինչ վոր աստիճանի անհեթեթության կարող ե մարդ հասնել։

Թույլ տվեք ամենից առաջ բերել Լենինի կարծիքը պետական բանկի բնույթի և նշանակության հարցի մասին։ Յես կուզեյի, ընկերներ, քաղել մի կտոր Լենինի գրքից, վոր գրված ե 1917 թվին։ Խոսքս «Բոլշևիկները կպահե՞ն արդյոք իշխանությունը» բրոշյուրին ե վերաբերում, վորտեղ Լենինը դեռևս կանգնած եր արդյունաբերության վրա վերահսկողություն նշանակելու (և վոչ այն ազգայնացնելու) տեսակետի վրա և վորտեղ, չնայած դրան, նա պետական բանկը պրոլետարական պետության ձեռքին $^{9}/_{10}$-ով սոցիալիստական ապպարատ եր համարում։

Ահա թե ինչ ե գրել նա պետբանկի մասին.—

«Խոշոր բանկերն այն պետական ապպարատն **են**, վորը **պետք ե** մեզ սոցիալիզմն իրականացնելու համար, և վորը մենք **պատրաստի վերցնում ենք** կապիտալիզմից, ընդ վորում այստեղ մեր խնդիրը միայն այն ե, վոր **կտրենք-դենք գցենք այն**, ինչը **կապիտալիստորեն այլանդակում ե** այդ սքանչելի ապպարատը, դարձնենք այն ավելի **խոշոր**, ավելի դեմոկրատական, ավելի համապարփակ։ Քանակը կփոխվի վորակի։ Միասնական, խոշորագույններից խոշորագույնը՝ պետական բանկը իր բաժանմունքներով յուրաքանչյուր գավառակում, յուրաքանչյուր ֆաբրիկայում—այս արդեն **սոցիալիստական** ապպարատի ինն տասներորդականն ե։ Դա—համապետական **հաշվետվություն ե**, մթերքների արտադրության ու բաշխման համապետական **հաշվառում**, դա—սոցիալիստական հասարակության այսպես ասած **կմախքի** պես մի բան ե»։

Համեմատեցեք Լենինի խոսքերն ընկ. Սոկոլնիկովի ճառի հետ և կհասկանաք, թե դեպի ուր ե գլորվում ընկ. Սոկոլնիկովը։ Յես չեմ զարմանա, յեթե նա ֆինժողկոմատը պետկապիտալիզմ հայտարարի։

Ի՞նչն ե սրա պատճառը։ Ինչի՞ց են առաջանում ընկ. Սոկոլնիկովի այսպիսի սխալները։

Բանն այն ե, վոր ընկ. Սոկոլնիկովը չի ըմբռնում նեպի յերկակի բնույթը, առևտրի յերկակի բնույթը սոցիալիստական և կապիտալիստական տարրերի պայքարի ներկա պայմաններում, նա չի ըմբռնում զարգացման դիալեկտիկան պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում, վորտեղ բուրժուական մեթոդներն ու զենքը օգտագործվում են սոցիալիստական տարրերի կողմից՝ կապիտալիստական տարրերին հաղթահարելու և նրանց վերացնելու համար։ Բանն ամենևին այն չե,

որ առևտուրն ու դրամական սիստեմը «կապիտալիստական էկոնոմիկայի» մեթոդներ են: Բանն այն է, որ մեր տնտեսության սոցիալիստական տարրերը, պայքարելով կապիտալիստական տարրերի դեմ, յուրացնում են այդ մեթոդներն ու բուրժուազիայի զենքը՝ կապիտալիստական տարրերին հաղթելու համար, որ նրանք **հաջողությամբ** օգտագործում են դրանց՝ կապիտալիզմի **դեմ, հաջողությամբ** օգտագործում են դրանց՝ մեր էկոնոմիկայի սոցիալիստական հիմքը կառուցելու համար: Հետևապես բանն այն է, որ շնորհիվ մեր զարգացման դիալեկտիկայի, բուրժուազիայի այդ գործիքների ֆունկցիաներն ու պաշտոնը փոխվում են **սկզբունքորեն**, արմատականապես, փոխվում են հօգուտ սոցիալիզմի, ի վնաս կապիտալիզմի: Ընկ. Սոկոլնիկովի սխալն այն է, որ նա չի հասկացել մեր էկոնոմիկայի մեջ տեղի ունեցող պրոցեսի ամբողջ բարդությունն ու հակասականությունը:

Թույլ տվեք այժմ պետկապիտալիզմի պատմական բնույթի հարցի վերաբերյալ դիմել Լենինի վկայության, բերել մի քանի քաղվածք այն հարցի առթիվ, թե յերբ և ինչու յե նա առաջարկել պետկապիտալիզմը, որպես տնտեսության գլխավոր ձև, ինչն է նրան այդ բանին հարկադրել, ինչ կոնկրետ պայմաններում է նա այդ բանն առաջարկել: (**Ձայներ**. «Խնդրում ենք»):

> «Մենք ոչ մի դեպքում չպետք է մոռանանք այն, ինչ որ նկատում ենք հաճախ,—այն է՝ բանվորների սոցիալիստական հարաբերությունները պետությանը պատկանող ֆաբրիկաներում, որտեղ բանվորներն իրենք են հավաքում վառելիք, հում նյութ ու արդյունքներ և երբ բանվորներն աշխատում են արդյունաբերության արտադրանքներն ուղիղ բաշխել գյուղացիության միջև, այս արդյունքները տանում-հասցնում են տրանսպորտի միջոցով: Այս սոցիալիզմ է*: Սակայն սրա կողքին գոյություն ունի մանր տնտեսություն, որ ամեն քայլափոխում կա և մնում է նրանից **անկախ**: Ինչու՞ մանր տնտեսությունը կարողանում է գոյություն ունենալ նրանից անկախ: **Որովհետև** խոշոր արդյունաբերությունը չի վերականգնել, **որովհետև** սոցիալիստական ֆաբրիկաները կարող են ստանալ թերևս միայն տասներորդ մասն այն բաժնի, որ պետք է ստանային, և քանի այս ֆաբրիկաները չեն ստանում, մանր տնտեսությունն անկախ կմնա սոցիալիստական ֆաբրիկաներից: Յերկրի աներևակայելի քայքայումը, վառելիքի, հում նյութի ու տրանսպորտի պակասությունը հասցնում են այն դրության, որ մանր արտադրությունը գոյություն է ունենում սոցիալիզմից **անջատ, առանձին**: Յեվ յես ասում եմ. այս պայմաններում պետական կապիտալիզմն ինչ բան է: Այս կլինի մանր արտադրության միավորությունը: Կապիտալը միացնում է մանր արտադրությունը, կապիտալն առաջանում է մանր արտադրությունից: Այս բանի հանդեպ կարիք չկա աչք գոցելու: Իհարկե,

* Ընդգծումներն ամենուրեք իմն են: Ի. Ստալին:

առևտրի ազատությունը նշանակում է կապիտալիզմի աճում։ Յեթե կա մանր տնտեսություն, յեթե կա փոխանակության ազատություն կապիտալիզմը յերևան կգա։ Սակայն սարսափելի չէ՞ արդյոք մեզ համար այս կապիտալիզմը, **յերբ մեր ձեռքումն են ֆաբրիկաները, գործարանները, տրանսպորտն ու արտասահմանյան առևտուրը.** և ահա յես ասում եյի այն ժամանակ, պետք է կրկնեմ այժմ, - և կարծում եմ, թե այս անհերքելի յե,—վոր այս կապիտալիզմը սարսափելի չէ մեզ համար։ Այսպիսի կապիտալիզմ են կոնցեսսիաները»։ (Վ. Ի. Լենին, «Նոր տնտեսական քաղաքականություն», եջ 73-74, Պետական Հրատարակչություն, Յերևան, 1926 թ)

Ահա թե ինչպես եր մոտենում Լենինը պետկապիտալիզմի հարցին։ 1921 թվին, յերբ սեփական արդյունաբերություն համարյա թե չունեյինք, հում նյութը պակասում եր, իսկ տրանսպորտը կանգնած եր, Լենինն առաջարկում եր պետկապիտալիզմը, վորպես միջոց, վորի միջոցով նա հույս ուներ գյուղացիական տնտեսությունը կապել ինդուստրիայի հետ։ Յեվ այդ ճիշտ մոտեցում եր։ Բայց արդյոք այս նշանակում է, վոր Լենինն այս ուղին ցանկալի յեր համարում **բոլոր պայմաններում**։—Իհարկե չի նշանակում։ Նա ձգտում եր կապի հասնել պետկապիտալիզմի միջոցով այն պատճառով, վոր մենք զարգացած սոցիալիստական արդյունաբերություն չունեյինք։

Իսկ այժմ։ Կարելի՞ յե ասել, թե մենք այժմ զարգացած պետարդյունաբերություն չունենք։—Իհարկե չի կարելի ասել։ Զարգացումն ընթացավ այլ հունով, կոնցեսսիաները համարյա արմատ չբռնեցին, պետարդյունաբերությունը աճեց, աճեց պետառևտուրը, աճեց կոոպերացիան, և կապը գյուղի ու քաղաքի միջև սկսեց հաստատվել սոցիալիստական արդյունաբերության միջոցով։ Մենք հասանք ավելի լավ դրության, քան ինքներս սպասում եյինք։ Ինչպես կարելի յե սրանից հետո ասել, թե պետկապիտալիզմը մեր տնտեսության գլխավոր ձևն է։

Օպոզիցիայի դժբախտությունն այն է, վոր նա չի կամենում հասկանալ այս հասարակ բանը։

ԸՆԿ. ԶԻՆՈՎՅԵՎԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ.

Այժմ գյուղացիության հարցը։ Յես իմ զեկուցման մեջ ասել եմ, և այստեղ էլ հռետորները պնդում եյին, վոր ընկ. Զինովյևն ունի միջակի թերագնահատելու թեքում, վոր նա վորոշակի կերպով, դեռևս շատ մոտ անցյալում, կանգնած եր միջակ գյուղացիության չեզոքացման տեսակետի վրա և միայն այժմ, կուսակցության ներսը տեղի ունեցած պայքարից հետո, փորձում է չվել, հաստատվել այլ տեսակետի վրա, միջակի հետ ամուր դաշինք կնքելու տեսակետի վրա։ Ճիշտ է այս բոլորը, թե վոչ։ Թույլ տվեք դիմել մի քանի դոկումենտների։ «Բոլշևիկացման մասին» իր հոդվածում ընկ. Զինովյևը գրել է.

«Կան մի շարք խնդիրներ, վորոնք **միանգամայն ընդհանուր են Կոմինտերնի բոլոր կուսակցությունների համար** *: Այսպես են, որինակ. ճիշտ մոտեցումը գյուղացիությանը: Ամբողջ աշխարհի հողագործ բնակչության մեջ կա յերեք շերտ, վորոնք կարող են և պետք է նվաճվեն մեր կողմից ու պրոլետարիատի դաշնակիցը դառնան (գյուղատնտեսական պրոլետարիատ, կիսապրոլետարներ, պարզել գյուղացիներ և ուրիշի բանվորական ուժը վարձելուն չդիմող մանր գյուղացիություն). կա գյուղացիության նաև մեկ ուրիշ շերտ (միջակները), վորին մենք պետք է գոնե **չեզոքացնենք**»:

(«Պրավդա», 13 հունվ. 1925 թ.):

Այսպես է գրում ընկ. Զինովյևը չորս տարի անց կուսակցության VIII համագումարից, վորտեղ Լենինը մերժեց միջակի չեզոքացման լոզունգը, այն փոխարինելով միջակի հետ ամուր դաշինք կնքելու լոզունգով: Ընկ. Բակաևը հարցնում է, թե սարսափելի ինչ կա այստեղ: Իսկ յես ձեզ կխնդրեմ համեմատել ընկ. Զինովյևի հոդվածը Լենինի «մեր հենարանը միջակն է» թեզիսի հետ ու պատասխանել՝ հեռացե՞լ է ընկ. Զինովյևը Լենինի թեզիսից, թե չի հեռացել... (**Մի բացականչություն տեղից**. «Նկատի յեն առնված ուրիշ յերկրներ, բացի Ռուսաստանը»: **Աղմուկ**): Չեղավ, ընկեր, վորովհետև ընկ. Զինովյևի հոդվածում խոսվում է այն «խնդիրների մասին, վորոնք միանգամայն ընդհանուր են Կոմինտերնի բոլոր կուսակցությունների համար»: Միթե դուք կժխտեք, վոր մեր կուսակցությունն էլ Կոմինտերնի մասն է: Այստեղ ուղղակի ասված է՝ «բոլոր կուսակցությունների համար: (**Մի բացականչություն Լենինգրադի պատգամավորության կողմից**. «Վորոշ մոմենտներում»: **Ընդհանուր ծիծաղ**):

Համեմատեցե՛ք ընկ. Զինովյևի հոդվածից առնված այս քաղվածքը **չեզոքացման մասին** կուսակցության VIII համագումարում Լենինի ասած ճառից առնված քաղվածքի հետ, վորտեղ նա ասում է, վոր մենք պետք է **ամուր դաշինք** կնքենք միջակի հետ—և դուք կհասկանաք, վոր դրանց մեջ վոչ մի նմանություն չկա:

Բնորոշն այն է, վոր ընկ. Զինովյևի հոդվածում այդ տողերը կարդալով, ընկ. Լարինը, այդ կողմնակիցը «յերկրորդ հեղափոխության» գյուղում, չհապաղեց միանալ դրանց: Յես կարծում եմ, վոր ընկ. Լարինը մոտ որերս թեև ընկ. ընկ. Կամենևի ու Զինովյևի դեմ յելավ—ու յելավ բավական հաջող կերպով,—բայց դրանով չի բացառվում այն, վոր մեր և նրա մեջ տարաձայնություններ կան, և մենք պարտավոր ենք այստեղ քիչ հոգալ սահման գծելու մեր և նրա մեջ:

Ահա թե ինչպիսի գնահատական է տալիս ընկ. Լարինը ընկ. Զինովյևի այդ հոդվածին.

* Ընդգծումն ամենուրեք իմն է: Ի. Ստ.

«Կոմինտերնի **բոլոր*** կուսակցությունների ընդհանուր խնդիրների տեսակետից «գյուղացիության ճիշտ մոտեցում ունենալը» միանգամայն ճիշտ ե ձևակերպել Կոմինտերնի նախագահ ընկ. Զինովյևը»:

(Ларин. «Советская деревня», էջ 80)

Յես տեսնում եմ, վոր ընկ. Լարինը բողոքում ե, հայտարարելով, վոր ինքն իր գրքում վերապահում ե, վոր ինքը համաձայն չի ընկ. Զինովյևի կարծիքին, ինչ չափով վոր ընկ. Զինովյևը միջակի չեզոքացման լոզունգը տարածում ե նաև Ռուսաստանի վրա: Ճիշտ ե, վոր նա իր գրքում այդ վերապահումն անում ե, պնդելով, վոր չեզոքացումն անբավարար ե մեզ համար, վոր մենք պետք ե ««մի քայլ առաջ» գնանք միջակի հետ կուլակի դեմ համաձայնություն կնքելու ուղղությամբ: Բայց այստեղ ընկ. Լարինը դժբախտաբար անտեղի մեջ ե գցում կուլակի ճնշման դեմ «յերկրորդ հեղափոխություն» բարձրացնելու իր սխեման, վորպիսի տեսակետ մենք չենք ընդունում, վորը մոտեցնում ե նրան ընկ. Զինովյևին և վորը հարկադրում ե ինձ հայտարարել, վոր մենք փոքր ինչ տարակարծիք ենք:

Ինչպես տեսնում եք, իմ բերած դոկումենտում ընկ. Զինովյևն ուղղակի և վորոշակի արտահայտվում ե հոգուտ միջակ գյուղացիության չեզոքացման, հակառակ Լենինի, վորը հռչակում եր չեզոքացման անբավարար լինելը և միջակի հետ ամուր դաշինք կնքելու անհրաժեշտությունը:

Հետևյալ դոկումենտը: Ընկ. Զինովյևն իր «Լենինիզմ» գրքում, քաղելով Լենինից հետևյալ կտորը, վոր վերաբերում ե 1918 թվին—«ընդհանրապես գյուղացիության հետ՝ մինչև բուրժուական-դեմոկրատական հեղափոխության վերջը. գյուղացիության ամենաչքավոր, պրոլետարական և կիսապրոլետարական մասի հետ՝ հառաջ, դեպի սոցիալիստական հեղափոխություն»,— այսպիսի յեզրակացություն ե հանում.

«Այս մոմենտին մեզ զբաղեցնող հիմնական պրոբլեմը լուսաբանված ե Լենինի վերը բերած հիմունքներում լիովին ու վերջնականապես: **Սրան վոչ մի խոսք չես կարող ավելացնել, վոչ մի խոսք չես կարող պակասեցնել***: Այստեղ ամեն ինչ ասված ե իլյիչյան ժլատությամբ և արտահայտությամբ, սեղմ ու պարզ—այնպես, վոր ասում ես՝ քրեստոմատիայի մեջ մտցնեմ»:

(«Ленинизм», էջ 60)

Այս ե ըստ Զինովյևի լենինիզմի **սպառիչ** բնութագիրը գյուղացիական հարցի մասին: Ընդհանրապես գյուղացիության հետ ցարի և կալվածատերերի դեմ՝ այս բուրժուական հեղափոխությունն ե: Չքավորության հետ բուրժուազիայի դեմ՝ այս Հոկտեմբերյան հեղափոխությունն ե:

---

* Ընդգծումն իմն ե: Ի. Ստ.

Այս բոլորը լավ ե։ Լենինյան յերկու լոզունգներ տրված են։ Իսկ ու՞ր ե Լենինյան յերրորդ լոզունգը՝ միջակի հետ և կուլակի դեմ դեպի սոցիալիստական շինարարություն։ Ո՞ւր ե չքացել Լենինի այս յերրորդ լոզունգը։ Ընկ. Զինովյևն այդ լոզունգը չունի։ Նա կորել ե։ Թեպետ ընկ. Զինովյևը պնդում ե, վոր «սրան վոչ մի խոսք չես կարող ավելացնել», բայց և այնպես, յեթե մենք սրան չավելացնենք Լենինի յերրորդ լոզունգը՝ միջակի հետ պրոլետարիատի ու չքավորության ամուր դաշինք կնքելու մասին, կարող ենք աղավաղել Լենինին, ինչպես աղավաղում ե նրան ընկ. Զինովյևը։ Կարելի՞ յե պատահականություն համարել, վոր Լենինի յերրորդ լոզունգը, վորը ներկայումս մեզ համար ամենաակտուալ լոզունգն ե, կորել ե, ընկ. Զինովյևը կորցրել ե այն։

Վոչ, չի կարելի պատահականություն համարել, վորովհետև նա (Զինովյևը) կանգնած ե միջակի չեզոքացման տեսակետի վրա։

Առաջին և յերկրորդ դոկումենտների միջև գոյություն ունեցող տարբերությունն այն ե, վոր առաջինում նա դեմ ե միջակի հետ ամուր դաշինք կնքելուն, իսկ յերկրորդում լռում ե այդ լոզունգի մասին։

Յերրորդ դոկումենտը—ընկ. Զինովյևի «Եպոխայի փիլիսոփայությունը» հոդվածն ե։ Խոսքս վերաբերում ե այդ հոդվածի նախնական խմբագրությանը, առանց այն փոփոխությունների ու լրացումների, վոր Կենտկոմի անդամները հետո յեն մտցրել։ Այդ հոդվածի բնորոշ կողմն այն ե, վոր նա, ինչպես և յերկրորդ դոկումենտը, բոլորովին լռում ե միջակի հարցի մասին և այդ կենսաթրթիռ հարցի կողքով անցնելով՝ խոսում ե ինչ-վոր անորոշ նարոդնիկական հավասարության մասին, առանց նշելու այդ հավասարության դասակարգային աստառը։

Այնտեղ կա չքավոր գյուղացիությունը, կա կուլակը, կա կապիտալիստը, քարեր են շպրտված Բուխարինի հասցեյին, կա ես-երական հավասարություն, կա Ուստրյալովը, բայց չկա միջակը և Լենինի կոոպերատիվ պլանը, չնայած վոր հոդվածը «Եպոխայի փիլիսոփայություն» ե կոչվում։ Յերբ ընկ. Մոլոտովն այդ հոդվածն ինձ ուղարկեց (յես այն ժամանակ Մոսկվայից բացակայում եյի), դրան յես պատասխանեցի կոպիտ ու խիստ քննադատությամբ։ Այո՛, ընկերներ, յես շիտակ ու կոպիտ մարդ եմ, այդ ճիշտ ե, յես այդ չեմ ժխտում (ծիծաղ)։

Յես կոպիտ քննադատությամբ պատասխանեցի, վորովհետև անկարելի յե հանդուրժել, վոր ընկ. Զինովյևը մի տարվա ընթացքում սիստեմատիկաբար լռությամբ մատնե կամ աղավաղե լենինիզմի ամենաբնորոշ գծերը գյուղացիական հարցում, մեր կուսակցության հերթական լոզունգը գյուղացիության հիմնական մասսայի հետ դաշինք կնքելու մասին։ Ահա թե ինչպես պատասխանեցի յես ընկ. Մոլոտովին.—

«Ընկ. Զինովևի «Եպոխայի փիլիսոփայությունը» հոդվածը կուսակցական գիծը ծռում է Լարինի վոգով։ Այդ հոդվածը խոսում է XIV կոնֆերենցիայի մասին, բայց այդ կոնֆերենցիայի գլխավոր նյութը—միջակ գյուղացիությունն ու կոոպերացիան—մի կողմ են թողնված։ Միջակ գյուղացիությունն ու Լենինի կոոպերատիվ պլանը չքացել են։ Այդ պատահականություն չի։ Դրանից հետո խոսել հանուն XIV կոնֆերենցիայի վորոշումների «մեկնաբանության պայքար մղելու» մասին—նշանակում է այդ վորոշումների խախտման գիծ տանել։ Բուխարինին շփոթել Ստալինի հետ, ինչպես ընկ. Զինովևն է անում, —նշանակում է ստել Բուխարինի մասին։ Այդպիսով կարելի յե Ստալինի հետ շփոթել նաև Լենինին, վորն ասում եր՝ «առևտուր արեք և առևտուր անել սովորեցեք»։ Հավասարության լոզունգը տվյալ մոմենտին ես-երական դեմագոգիա յե։ Վոչ մի հավասարություն չի կարող լինել, քանի կան դասակարգեր, և քանի վոր կա վորակյալ և անվորակյալ աշխատանք (տես՝ «Պետություն և հեղափոխություն» Լենինի)։ Պետք է խոսել վոչ թե անորոշ հավասարության մասին, այլ դասակարգերի վերացման, սոցիալիզմի մասին։ Անվանել մեր հեղափոխությունը վոչ-կլասսիկ—նշանակում է գլորվել դեպի մենշևիզմ։ Հոդվածը պետք է վերամշակել, ըստիս, հիմնովորապես, այնպես, վորպեսզի նա XIV համագումարի առթիվ ներկայացվող պլատֆորմի բնույթ չկրի։
12 սեպտեմբերի 1925 թ.

Ի. Ստալին

Այս բոլորը յես պատրաստ եմ այժմ էլ պաշտպանել։ Յուրաքանչյուր բառը, յուրաքանչյուր դարձվածքը։

Հիմնական ղեկավար հոդվածում չի կարելի խոսել հավասարության մասին, խստիվ չվորոշելով, թե վոր հավասարության մասին է խոսքը—գյուղացիների և բանվոր դասակարգի հավասարության, հավասարության բանվոր դասակարգի ներսում, հավասարության գյուղացիության ներսում, վորակյալների և անվորակյալների հավասարության, թե դասակարգերի վերացման մտքով առնված հավասարության մասին։ Ղեկավար հոդվածում չի կարելի լռությամբ անցնել կուսակցության հերթական լոզունգները գյուղում կատարվող աշխատանքի վերաբերյալ։ Հավասարությանը վերաբերող ֆրազների հետ չի կարելի խաղալ, վորովհետև դա կրակի հետ խաղալ է ճիշտ այնպես, ինչպես չի կարելի խաղալ լենինիզմին վերաբերող ֆրազի հետ, լռություն պահպանելով գյուղացիության հարցին վերաբերող լենինիզմի հերթական լոզունգի մասին։

Այսպես են այդ յերեք դոկումենտները։ Ընկ. Զինովևի հոդվածը (1925 թ. հունվար)՝ միջակի չեզոքացմանը նվիրված։ Ընկ. Զինովևի «Լենինիզմ» գիրքը (սեպտեմբեր), վոր լռում է լենինիզմի յերրորդ լոզունգի մասին, վորը միջակին է վերաբերում։ Յեվ ընկ. Զինովևի

նոր հոդված՝ «Եգոիստի փիլիսոփայությունը», որը լուծյան և տաալիս միջակին և Լենինի կոոպերատիվ պլանը։

Պատահակա՞ն են արդյոք ընկ. Զինովևի այս մշտական տատանումները գյուղացիության հարցում։—

Դուք տեսնում եք, որ այդ պատահական չի։

Մոտ ժամանակներս Լենինգրադում Կենտկոմի հաշվետվությանը նվիրված իր ճեկուցման մեջ ընկ. Զինովևը, վերջապես, վորոշեց արտահայտվել հօգուտ միջակի հետ դաշինք կնքելու լոզունգին։

Այո, Կենտկոմում յեղած պայքարից, տարաձայնություններից ու ընդհարումներից հետո։ Այդ շատ լավ ե։ Բայց յես համոզված չեմ, վոր նա հետո դրանից չի հրաժարվի։ Վորովհետև, ինչպես փաստերն են ցույց տալիս, ընկ. Զինովևը յերբեք չի ունեցել գյուղացիության հարցում վարած իր գծի այն ամրությունը, վորպիսին մեզ հարկավոր ե (**Ծափեր**)։

Ահա մի քանի փաստեր գյուղացիության հարցում ընկ. Զինովևի տատանումների աշխարհից։ 1924 թվին ընկ. Զինովևը Կենտկոմի պլենումում պաշտպանում եր կենտրոնում և տեղերում անկուսակցական գյուղացիական ֆրակցիաներ՝ իրենց ամենորյա թերթերով կազմակերպելու «քաղաքականությունը», ըստ վորում այս առաջարկը Կենտկոմում յեղած առարկությունների հետևանքով մերժվեց։ Դրանից փոքր ինչ առաջ ընկ. Զինովևը նույնիսկ խրոխտանում եր նրանով, վոր ինքը «գյուղացիական թեքում» ունի։ Ահա թե ինչ եր ասում նա, որինակ, կուսակցության XII համագումարում. «Յերբ ինձ ասում են, թե դուք «թեքում» ունեք, դուք գյուղացիության կողմն եք հակված,—յես պատասխանում եմ. այո, մենք վոչ միայն պետք ե թեքվենք գյուղացիության և նրա տնտեսական կարիքների կողմը, այլև մենք պետք ե **գլուխ իջեցնենք** և, յեթե պետք ե, **խոնարհվենք** այն գյուղացու տնտեսական կարիքների առաջ, վոր մեր պրոլետարիատից ե գնում»։ Լսում եք. «թեքվել», «խոնարհվել», «գլուխ իջեցնել» (**Ծիծաղ. Ծափեր**)։ Հետո, յերբ գյուղացիության վիճակը լավացավ, յերբ մեր դրությունը լավացավ գյուղում, ընկ. Զինովևը «պտույտ տվեց» այդ համակրությունից, կասկածի տակ առնելով միջակին և չեզոքացման լոզունգ հռչակելով։ Վորոշ ժամանակից հետո նա նոր «պտույտ տվեց», նույպես պահանջեց XIV կոնֆերենցիայի վորոշումների վերաքննություն («Եգոիստի փիլիսոփայությունը») և, մեղադրելով «գյուղացիական թեքման» մեջ համարյա թե ամբողջ Կենտկոմը, սկսեց ավելի վճռական «պտույտ գալ» միջակի դեմ։ Վերջապես կուսակցության XIV համագումարից առաջ նա նորից «դարձավ» միջակի հետ դաշինք կնքելու կողմը և թերևս կսկսի նույնիսկ պարծենալ, վոր նորից պատրաստ ե «գլուխ իջեցնել» գյուղացիության ա-

տալ։ Ի՞նչ յերաշխիք, վոր ընկ. Զինովյևը չի տատանվի մեկ անգամ ել։

Բայց չէ՞ վոր այս ճոճանակ է, ընկերներ, և վոչ թե քաղաքականություն (**ծիծաղ, ծափեր**)։ Չէ՞ վոր այս հիստերիկա յե, և վոչ թե քաղաքականություն։(**Բացականչություններ.** «Ճիշտ է»)։

Ասում են, թե հատուկ ուշադրություն չպետք է դարձնել յերրորդ թեքման դեմ պայքարելու վրա։ Այդ ճիշտ չե։ Յեթե մեզ մոտ կա յերկու թեքում—Բոգուշևսկու թեքումը և ընկ. Զինովյևի թեքումը,—ապա դուք պետք է հասկանաք, վոր Բոգուշևսկին յերբեք չի կարող համեմատվել ընկ. Զինովյևի հետ։ Բոգուշևսկու բանը վերջացած է (**ծիծաղ**)։ Բոգուշևսկին իր որգանը չունի։ Իսկ միջակի չեզոքացման կողմը հակված թեքումը, միջակի հետ ամուր դաշինք կնքելու դեմ ուղղված թեքումը, զինովյևյան թեքումն ունի իր որգանը և մինչև այժմ ել շարունակում է պայքարել Կենտկոմի դեմ։ Այդ որգանի անունն է «Լենինգրադսկայա Պրավդա»։ Վորովհետև ինչ է նորերս Լենինգրադում թխված «միջակային բայլշևիզմ» տերմինը, վորի մասին փրփուրը բերանին է խոսում «Լենինգրադսկայա Պրավդան», յեթե վոչ ցուցանիշն այն բանի, վոր այդ լրագիրը հեռացել է լենինիզմից գյուղացիական հարցում։ Միթե պարզ չի յերևում թեկուզ միայն այդ հանգամանքից, վոր յերրորդ թեքման դեմ պայքարելն ավելի դժվար է, քան առաջին թեքման, Բոգուշևսկու թեքման դեմ պայքարելը։ Ահա թե ինչու մեր առջևն ունենալով յերրորդ թեքման այնպիսի ներկայացուցիչ, կամ յերրորդ թեքման այնպիսի պաշտպան ու հովանավոր, վորպիսին «Լենինգրադսկայա Պրավդան» է, մենք պետք է ձեռք առնենք ամեն միջոց, վորպեսզի կուսակցությունն առանձնապես լավ պատրաստված լինի այդ թեքման դեմ պայքարելու, վորն ուժեղ է, վորը բարդ է, և վորի դեմ պետք է կենտրոնացնել կրակը։ Ահա թե ինչու այդ յերրորդ թեքումը մեր կուսակցության հատուկ ուշադրության առարկա պետք է լինի։ (**Ձայներ.** «Ճիշտ է»։ **Ծափեր**)։

ՄԵՐ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ.

Թույլ տվեք այժմ անցնել Կենտրոնական Կոմիտեյի մեծամասնության ներսը տեղի ունեցած մեր ներքին պայքարի պատմությանը։ Նա սկսվեց այն հարցից, թե ինչպես վարվենք ընկ. Տրոցկու հետ։ 1924 թվի վերջերումն եր այդ. լենինգրադցիների խմբակն սկզբում առաջարկում եր արտաքսել ընկ. Տրոցկուն կուսակցությունից։ Խոսքըս վերաբերում է 1924 թվի դիսկուսիայի շրջանին։ Լենինգրադի նահանգկոմն ընկ. Տրոցկուն կուսակցությունից արտաքսելու վորոշում եր հանել։ Մենք, այսինքն Կենտկոմի մեծամասնությունը, չհամաձայնեցինք դրան (**ձայներ՝** «Ճիշտ է»), վորոշ պայքար ունեցանք լենինգրադցիների հետ և համոզեցինք նրանց դուրս գցել իրենց բանաձևից

արտաքսման կետը։ Միաժամանակ անց, յերբ մեզ մոտ Կենտկոմի պլենում գումարվեց և լենինգրադցիներն ընկ. Կամենևի հետ միասին պահանջեցին անմիջապես արտաքսել ընկ. Տրոցկուն Պոլիտբյուրոյից, մենք չհամաձայնեցինք օպպոզիցիայի նաև այդ առաջարկին, Կենտկոմում մեծամասնություն ստացանք և սահմանափակվեցինք ընկ. Տրոցկուն ռազմժողկոմի պոստից վերցնելով։ Ընկ. ընկ. Զինովևի ու Կամենևի հետ մենք չհամաձայնեցինք, վորովհետև գիտեյինք, վոր անդամահատության քաղաքականությունը կուսակցության համար հղի յե մեծ վտանգներով, վոր անդամահատության մեթոդը, արյուն առնելու մեթոդը — իսկ նրանք արյուն եյին պահանջում — վտանգավոր և վարակիչ. այսոր մեկին հատեցինք կուսակցության մարմնից, վաղը՝ մյուսին, յերրորդ որը՝ յերրորդին, — կուսակցության մեջ ել ինչ կմնա **(ծափեր)**։

Կենտկոմի մեծամասնության ներսը տեղի ունեցած այս առաջին ընդհարումը յերևան բերեց մեր միջև գոյություն ունեցող հիմնական տարաձայնությունը կուսակցության կազմակերպչական քաղաքականության հարցերում։

Յերկրորդ հարցը, վոր տարաձայնություն առաջացրեց մեր մեջ, ընկ. Սարգսի՝ ընկ. Բուխարինի դեմ յելնելու հետ կապված հարցն եր։ XXI կոնֆերենցիան եր, 1925 թվի հունվարին. Ընկ. Սարգիսն այն ժամանակ ընկ. Բուխարինի դեմ յելավ, մեղադրելով նրան սինդիկալիզմի մեջ։

Ահա նրա խոսքերը.—

«Մենք կարդացինք Մոսկվայի «Պրավդայում» ընկ. Բուխարինի հոդվածը բանվորական և գյուղական թղթակիցների մասին։ Այն հայացքները, վոր զարգացնում է ընկ. Բուխարինը, մեր կազմակերպության մեջ կողմնակիցներ չունեն։ Բայց այդպիսի հայացքներ, վորոնք, կարելի յե ասել, իրենց տեսակի **սինդիկալիստական, վոչ բոլշևիկյան** հակակուսակցական հայացքներ են — ունեն մի շարք նույնիսկ պատասխանատու ընկերներ (կրկնում եմ, վոչ թե Լենինգրադի, այլ ուրիշ տեղերի կազմակերպություններում)։ Այդ հայացքները պաշտպանում են զանազան մասսայական բանվորագյուղացիական հանրային կազմակերպությունների անկախություն ու եքստերրիտորիալությունը կոմմունիստական կուսակցությունից։

(Լենինգրադի XXI-րդ կոնֆերենցիայի սղագիր հաշվետվություն)։

Այս յելույթը նախ և առաջ ընկ. Սարգսի սկզբունքային սխալն եր, վորովհետև ընկ. Բուխարինը բացարձակապես իրավացի յեր բանգյուղթղթակցային շարժման հարցում. յերկրորդ, այստեղ թույլատրվել եր, վոչ առանց Լենինգրադի կազմակերպության ղեկավարների խրախուսանքի, ամենակոպիտ խախտումն հարցն ընկերական քննու-

թյան չենթարկելու տարրական կանոններին։ Ինչ խոսք, վոր այդ հանգամանքը չէր կարող չվտանգել հարաբերությունները Կենտկոմի ներսում։ Բանը վերջացավ նրանով, վոր ընկ. Սարգիսը մամուլում հրապարակորեն խոստովանեց իր սխալը։

Այս միջադեպը ցույց տվեց, վոր իր սխալը հրապարակով խոստովանելը բացահայտ ցինիկությունից խուսափելու և տարաձայնությունները ներքին կարգով վերացնելու լավագույն յեղանակն է։

Յերրորդ հարցը Լենինգրադի Կոմյերիտմիության հարցն եր։ Այստեղ նստած են նահանգկոմի անդամները և նրանք, հավանաբար, հիշում են, վոր Պոլիտբյուրոն համապատասխան վորոշում ուներ Կոմյերիտմիության Լենինգրադի նահանգային կոմիտեի մասին, վորը փորձ եր արել Լենինգրադում Կոմյերիտմիության համարյա թե համառուսական կոնֆերենցիա հրավիրել առանց Յերիտասարդական Միության Կենտկոմի գիտության ու համաձայնության։

Թ. Կ. Կ. Կենտկոմի վորոշումը ձեզ ծանոթ է։ Մենք չեյինք կարող թույլատրել, վոր Կոմյերիտմիության Կենտկոմի կողքին մեկ ուրիշ կենտրոն ևս գոյություն ունենա՝ նրա դեմ մրցող և իրեն այդ կենտրոնին հակադրող։ Մենք, վորպես բոլշևիկներ, չեյինք կարող յերկու կենտրոն թույլատրել։ Ահա թե ինչու Կենտկոմը անհրաժեշտ համարեց միջոցներ ձեռք առնել թարմացնելու յերիտասարդության Կենտկոմը, վոր թույլատրել եր այդ անպարտություն, և հեռացնելու ընկ. Սաֆարովին Կոմյերիտմիության Լենինգրադի նահանգկոմի ղեկավարի պաշտոնից։

Այդ միջադեպը ցույց տվեց, վոր Լենինգրադի ընկերները հակում ունեն վերածելու իրենց Լենինգրադի կազմակերպությունը Կենտկոմի դեմ մղվող պայքարի կենտրոնի։

Չորրորդ հարցը այն հարցն է, վոր դրել եր ընկ. Զինովևը Լենինգրադում «Բոլշևիկ» անունով ժուռնալ կազմակերպելու խմբագրության հետևյալ կազմով — ընկ. ընկ. Զինովև, Սաֆարով, Վարդին, Սարգիս ու Թորիանով։ Մենք չհամաձայնեցինք դրան, համոզված լինելով, վոր Մոսկվայի «Բոլշևիկին» զուգընթաց հրատարակվող այդպիսի ժուռնալը անխուսափելիորեն կդառնա խմբակի օրգան, ոպպոզիցիայի ֆրակցիոն օրգան, — վոր այդպիսի քայլը վտանգավոր է և կխախտի կուսակցության միասնականությունը։ Այլ խոսքով ասած՝ մենք արգելեցինք այդ ժուռնալի լույս ընծայելը։ Հիմա մեզ ուզում են վախեցնել «արգելք» բառով։ Սակայն այդ դատարկ բան է, ընկերներ։ Մենք լիբերալներ չենք։ Մեզ համար կուսակցության շահերը բարձր են ձևական դեմոկրատիզմից։ Այո, մենք արգելեցինք ֆրակցիոն օրգանի լույս ընծայելը և նման բաներն առաջայում էլ կարգելենք (**Ձայներ.** «Ճիշտ է», «Շատ լավ». **Փոթորկալի ծափեր**)։

Այդ միջադեպը ցույց տվեց, վոր Լենինգրադի կազմակերպության

վերնախավը կամենում է առանձնանալ և սեփական խմբավորում ստեղծել։

Այնուհետև գալիս է ընկ. Բուխարինի հարցը։ Խոսքս «հարստացեք» լոզունգի մասին է։ Խոսքս ընկ. Բուխարինի ապրիլյան ճառի մասին է, յերբ նրա բերանից դուրս թռավ «հարստացեք» բառը։ Յերկու որ անց բացվեց մեր կուսակցության ապրիլի կոնֆերենցիան։ Յես եյի և վոչ մեկ ուրիշը, վոր կոնֆերենցիայի նախագահության մեջ, ընկ. ընկ. Սոկոլնիկովի, Զինովևի, Կամենևի ու Կալինինի ներկայությամբ հայտարարեցի, վոր «հարստացեք» լոզունգը մեր լոզունգը չէ։ Յես չեմ հիշում, վոր ընկ. Բուխարինն առարկած լինի այս բողոքի դեմ։ Յերբ ընկ. Լարինը խոսք խնդրեց կոնֆերենցիայում, կարծեմ Բուխարինի դեմ, ընկ. Զինովևն եր և վոչ մի ուրիշը, վոր պահանջեց այն ժամանակ յելույթ չթույլատրել ընկ. Բուխարինի դեմ։ Սակայն դրանից հետո ընկ. Կրուպսկայան մի հոդված է ուղարկում ընկ. Բուխարինի դեմ՝-պահանջելով, վոր այն տպենք։ Ընկ. Բուխարինն, ինարկե, պարտքի տակ չի մնում և իր հերթին հոդված է գրում ընկ. Կրուպսկայայի դեմ։ Կենտկոմի մեծամասնությունը վորոշում է չտպել և վոչ մի դիսկուսիոն հոդված, դիսկուսիա չբանալ և առաջարկել ընկ. Բուխարինին, վոր հայտարարի մամուլում «հարստացեք» լոզունգի սխալ լինելը, վորին նա համաձայնում է և վորը կատարում է հետո, արձակուրդից վերադառնալուց հետո Ուստրյալովի դեմ գրած իր հոդվածում։

Հիմա ընկ. ընկ. Կամենևն ու Զինովևն ուզում են վախեցնել վոմանց «արգելման» խրտվիլակով, լիբերալի պես վրդովվելով, վոր մենք արգելել ենք ընկ. Կրուպսկայայի հոդվածի տպագրությունը։ Դուք դրանով վոչ վոքի չեք վախեցնի։ Նախ և առաջ՝ մենք չտպագրեցինք վոչ միայն ընկ. Կրուպսկայայի հոդվածը, այլև ընկ. Բուխարինինը։ Յերկրորդ, ինչու չարգելել ընկ. Կրուպսկայայի հոդվածի տպագրությունը, յեթե այդ են պահանջում մեզանից մեր կուսակցության միասնականության շահերը։ Ինչով է, ասացեք խնդրեմ, տարբերվում ընկ. Կրուպսկայան յուրաքանչյուր այլ պատասխանատու ընկերոջից։ Չլինի թե կարծում եք, վոր առանձին ընկերների շահերը պետք է վեր դասվեն կուսակցության և նրա միասնականության շահերից։ Միթե ոպպոզիցիայի ընկերներին հայտնի չէ, վոր մեզ, բոլշևիկների համար, ձևական դեմոկրատիզմը — դատարկ բան է, իսկ կուսակցության շահերը — ամեն ինչ (**Ծափեր**)։

Ընկերները թող ցույց տան կենտրոնական օրգանում, «Պրավդայում», գեթ մի հոդված, վորն ուղղակի կամ անուղղակի կերպով պաշտպանելիս լինի «հարստացեք» լոզունգը։ Նրանք չեն կարող ցույց տալ, վորովհետև այդպիսի հոդվածներ չկան բնության մեջ։ Կա մի դեպք, միակ դեպքը, յերբ «Կոմսոմոլսկայա Պրավդայում» ընկ. Ստեցկին մի հոդված գրեց, վորտեղ աշխատում է փափուկ, հազիվ նշմարելի

վերնախավը կամենում է առանձնանալ և ուրույն խմբավորում ստեղծել։

Այնուհետև գալիս է ընկ. Բուխարինի հարցը։ Խոսքս «Հարստացեք» լոզունգի մասին է։ Խոսքս ընկ. Բուխարինի ապրիլյան ճառի մասին է, յերբ նրա բերանից դուրս թռավ «Հարստացեք» բառը։ Յերկու օր անց բացվեց մեր կուսակցության ապրիլի կոնֆերենցիան։ Յես եյի և վոչ մեկ ուրիշը, վոր կոնֆերենցիայի նախագահության մեջ, ընկ. ընկ. Սոկոլնիկովի, Զինովևի, Կամենևի ու Կալինինի ներկայությամբ հայտարարեցի, վոր «Հարստացեք» լոզունգը մեր լոզունգը չի։ Յես չեմ հիշում, վոր ընկ. Բուխարինն առարկած լինի այս բողոքի դեմ։ Յերբ ընկ. Լարինը խոսք խնդրեց կոնֆերենցիայում, կարծեմ Բուխարինի դեմ, ընկ. Զինովևն եր և վոչ մի ուրիշը, վոր պահանջեց այն ժամանակ յելույթ չթույլատրել ընկ. Բուխարինի դեմ։ Սակայն դրանից հետո ընկ. Կրուպսկայան մի հոդված է ուղարկում ընկ. Բուխարինի դեմ՝ պահանջելով, վոր այն տպենք։ Ընկ. Բուխարինն, իհարկե, պարտքի տակ չի մնում և իր հերթին հոդված է գրում ընկ. Կրուպսկայայի դեմ։ Կենտկոմի մեծամասնությունը վորոշում է չտպել և վոչ մի դիսկուսիոն հոդված, դիսկուսիա չբանալ և առաջարկել ընկ. Բուխարինին, վոր հայտարարի մամուլում «Հարստացեք» լոզունգի սխալ լինելը, վորին նա համաձայնում է և վորը կատարում է հետո, արձակուրդից վերադառնալուց հետո Ուստրյալովի դեմ գրած իր հոդվածում։

Հիմա ընկ. ընկ. Կամենևն ու Զինովևն ուզում են վախեցնել վոմանց «արգելում» խրտվիլակով, լիբերալի պես վրդովվելով, վոր մենք արգելել ենք ընկ. Կրուպսկայայի հոդվածի տպագրությունը։ Դուք դրանով վոչ վոքի չեք վախեցնի։ Նախ և առաջ՝ մենք չտպագրեցինք վոչ միայն ընկ. Կրուպսկայայի հոդվածն, այլև ընկ. Բուխարինինը։ Յերկրորդ, ինչո՞ւ չարգելել ընկ. Կրուպսկայայի հոդվածի տպագրությունը, յեթե այդ են պահանջում մեզանից մեր կուսակցության միասնականության շահերը։ Իսկ ինչո՞վ է, ասացեք խնդրեմ, տարբերվում ընկ. Կրուպսկայան յուրաքանչյուր այլ պատասխանատու ընկերոջից։ Չլինի՞ թե կարծում եք, վոր առանձին ընկերների շահերը պետք է վոր դասվեն կուսակցության և նրա միասնականության շահերից։ Միթե ոպպոզիցիայի ընկերներին հայտնի չէ, վոր մեզ, բոլշևիկներիս համար, ձևական դեմոկրատիզմը—դատարկ բան է, իսկ կուսակցության շահերն—ամեն ինչ (**Ծափեր**)։

Ընկերները թող ցույց տան կենտրոնական օրգանում, «Պրավդայում», գեթ մի հոդված, վորն ուղղակի կամ անուղղակի կերպով պաշտպանելիս լինի «Հարստացեք» լոզունգը։ Նրանք չեն կարող ցույց տալ, վորովհետև այդպիսի հոդվածներ չկան բնության մեջ։ Կա մի դեպք, միակ դեպքը, յերբ «Կոմսոմոլսկայա Պրավդայում» ընկ. Ստեցկին մի հոդված գրեց, վորտեղ աշխատում է փափուկ, հազիվ նշմարելի

ձևով, արդարացնել «հարստացեք» լոզունգը։ Յեվ ինչ։ Դրա հենց մյուս որն ևեթ Կենտկոմի քարտուղարությունը կարգի հրավիրեց այդ թերթի խմբագրությունը Մոլոտովի, Անդրեևի ու Ստալինի ստորագրությունը կրող մի հատուկ նամակով։ Այս տեղի ունեցավ 1925 թ. հունիսի 2-ին։ Իսկ միքանի որ անց Կենտկոմի կազմբյուրոն վորոշեց ընկ. Բուխարինի կատարյալ համաձայնությամբ կանխորոշել այդ թերթի խմբագրին հրաժարեցնելը։ Ահա քաղվածքներ այդ նամակից։

«Մոսկվա, 2 հունիսի 1925 թ. «Կոմսոմոլսկայա Պրավդայի» խմբագրության բոլոր անդամներին և ՌԿԿ (բ.) Կենտկոմի մամուլի բաժնի վարիչ ընկ. Վարեյկիսին.

Գտնում ենք, վոր ընկ. Ստեցկու «Տնտեսական նոր քաղաքականության նոր էտապ» հոդվածաշարքի վորոշ տեղեր կասկածներ են հարուցում։ Այդ հոդվածներում, ճիշտ է, փափուկ ձևով, անց է կացվում «հարստացեք» լոզունգը։ Այդ լոզունգը մերը չի, նա սխալ է, նա մի ամբողջ շարք կասկածներ ու թյուրիմացություններ է ծնեցնում և նա չպետք է տեղ ունենա «Կոմսոմոլսկայա Պրավդայի» ղեկավար հոդվածում։ Մեր լոզունգն է՝ սոցիալիստական կուտակումը։ Մենք վերացնում ենք գյուղի բարորության ճանապարհ կտրող վարչական արգելքները։ Այդ օպերացիան անշուշտ հեշտացնում է ամեն տեսակի կուտակումը՝ և մասնավոր-կապիտալիստականը, և սոցիալիստականը։ Բայց կուսակցությունը դեռևս յերբեք չի ասել, թե նա իր լոզունգ է դարձնում մասնավոր կուտակումը»...

Հայտնի՞ յեն արդյոք ոպպոզիցիային այս բոլոր փաստերը։ Իհարկե, հայտնի յեն։ Յեթե այդպես է, ապա էլ ինչո՞ւ նրանք չեն դադարեցնում իրենց հալածանքը ընկ. Բուխարինի դեմ։ Մինչև յե՞րբ պետք է նրանք աղաղակեն ընկ. Բուխարինի սխալի մասին։

Յես գիտեմ վորոշ ընկերների սխալներ, որինակ, 1917 թվի հոկտեմբերին, վորոնց համեմատությամբ ընկ. Բուխարինի սխալը նույնիսկ ուշադրության արժանի չէ։ Այդ ընկերները վոչ միայն սխալվեցին այն ժամանակ, այլև «համարձակություն» ունեցան յերկու անգամ խախտելու Կենտկոմի կարևորագույն վորոշումը, վորն ընդունվել էր Լենինի ղեկավարությամբ ու ներկայությամբ։ Յեվ, այնուամենայնիվ, կուսակցությունը մոռացավ այդ սխալները, հենց վոր այդ ընկերները խոստովանեցին իրենց սխալը։ Բայց ընկ. Բուխարինն այդ ընկերների համեմատությամբ թույլ է տվել մի աննշան սխալ։ Յեվ նա չի խախտել Կենտկոմի և վոչ մի վորոշում։ Ինչո՞վ բացատրել, վոր, չնայած դրան, այնուամենայնիվ տակավին շարունակվում է ընկ. Բուխարինի սանձարձակ հալածանքը։ Ի՞նչ են ուզում Բուխարինից։ Նրանք Բուխարինի արյունն են պահանջում։ Հենց այդ է պահանջում ընկ. Զինովյևը, իր յեզրակացման խոսքում սրելով

հարցը Բուխարինի դեմ։ Բուխարինի արյունն եք պահանջում։ Չենք տա ձեզ նրա արյունը, այդպես ել իմացեք (**Ծափեր. կանչեր՝** «Ճիշտ ե»)։

Այս ե ընկ. Բուխարինի սխալի հարցի դրությունը։

Այնուհետև գալիս ե ընկ. Զինովևի «Եպոխայի փիլիսոփայությունը» գրվածքը և ընկ. Կամենևի՝ այս տարվա ամառվա վերջը և աշնան սկզբին Մոսկվայի պլենումում արած դեկլարացման հարցը,—մի հարց, որը նույնպես սրեց մեր ներկուսակցական հարաբերությունները։ Ցես այս մասին արդեն խոսել եմ իմ ճառում, ել նորից չեմ կրկնի։ Խոսքն այն ժամանակ «Եպոխայի փիլիսոփայությունը» հոդվածի մասին եր, այդ հոդվածի սխալների մասին, այն մասին, թե մենք ինչպես եյինք ուղղում այդ սխալները, Կենտվիճվարի հացի և խարի բալանսի առթիվ ընկ. Կամենևի արած սխալների մասին և այն մասին, թե ընկ. Կամենևն ինչպես եր հավատ ընծայել Կենտվիճվարի թվերին, որոնք վերաբերում եյին ապրանքային ավելցուկի 61 տոկոսը գյուղացիության վերին խավերի ձեռքում գտնվելուն. խոսքը այն մասին ե, թե ինչպես նա հետո մեր ընկերների ճնշման տակ ստիպված ուղղել իր սխալը՝ Աշխատանքի Պաշտպանության Խորհրդում (СТО) արած ու ապա լրագրերում գրած իր հայտարարությամբ, որ ավելցուկների կեսից ավելին միջակների ձեռքին ե գտնվում։ Այս բոլորն, անկասկած, սրում եր մեր հարաբերությունները։ Հետագայում յեկան հոկտեմբերյան պլենումի հետ կապված հարցերը—Նոր բարդություններ, յերբ օպոզիցիան պահանջում եր հրապարակորեն դիսկուսիա, յերբ հրապարակ իջավ ընկ. Զալուցկու այսպես կոչված «տերմիդորի» հարցը, և այդ բոլորի վերջում—Լենինգրադի կոնֆերենցիան, որն առաջին իսկ օրվանից կրակ բացեց Կենտկոմի վրա։ Խոսքս այնպիսի ընկերների յելույթի մասին ե, որպիսիք են Սաֆարովը, Սարգիսը, Շելավինը և ուրիշները։

Խոսքս վերաբերում ե ընկ. Զինովևի յելույթին, կոնֆերենցիայի փակմանը նրա արտասանած ճառերից մեկին, որտեղ նա կոնֆերենցիային պատերազմի կանչեց մոսկվացիների դեմ, առաջարկելով պատգամավորությունն ընտրել այնպիսի մարդկանցից, որոնք պատրաստ են պայքարի ընդդեմ Կենտկոմի։

Այսպիսի դրություն եր տիրում։ Հենց այդ պատճառով եր, որ Լենինգրադի պատգամավորության մեջ չմտան այնպիսի փորձված բանվոր-բոլշևիկներ, որպիսիք են ընկ. ընկ. Կոմարովն ու Լոբովը (նրանք չեյին ընդունել Կենտկոմի դեմ պայքարելու պլատֆորմը)։ Պատգամավորության մեջ նրանց փոխարինել եյին ընկ. ընկ. Գորդոնն ու Թարխանովը։ Կշիռքի մի նժարում դրեք Գորդոնին ու Թարխանովին, մյուսում՝ Կոմարովին ու Լոբովին—և ուզածդ անաչառ մարդը կասի, որ առաջինները չեն կարող համեմատվել վերջիններին (**Ծա-**

փեր)։ Իսկ ինչն է ընկ. ընկ. Կոմարովի ու Լոբովի մեղքը։— Կոմարովի ու Լոբովի ամբողջ մեղքն այն է, վոր նրանք չուզեցին գնալ Կենտկոմի դեմ։ Այս է նրանց ամբողջ հանցանքը։ Չէ՞ վոր ընդամենը մի ամիս առաջ էր, վոր լենինգրադցիներն ընկ. Կոմարովին առաջարկում եյին լինել իրենց կազմակերպության առաջին քարտուղարը։ Գործը հենց այդպես է յեղել։ Այսպե՞ս է, թե վոչ (**Ձայներ Լենինգրադի պատգամավորության կողմից՝** «Այդպես է, այդպես»)։

Ուրեմն ինչ կարող էր պատահել Կոմարովին մեկ ամսվա ընթացքում (**Բուխարին.** «Նա մի ամսվա ընթացքում վերասերվել է»)։ Ի՞նչ կարող էր պատահել մեկ ամսվա ընթացքում, վոր Կենտկոմի անդամ Կոմարովին, վորին դուք ինքներդ եյիք ձեր կազմակերպության առաջին քարտուղար առաջարկում, դուրս գցեցիք Լենինգրադի կոմիտեյի քարտուղարությունից և հնարավոր չհամարեցիք համագումարի պատգամավոր ընտրել նրան (**Մի ձայն լենինգրադցիների կողմից.** «Նա կոնֆերենցիային վիրավորել էր»։ **Մի ձայն.** «Այդ սուտ է, ընկ. Նաումով»։ **Աղմուկ**)։

ՈՊՊՈԶԻՑԻԱՅԻ ՊԼԱՏՖՈՐՄԸ.

Իսկ այժմ անցնենք ընկերներ Զինովյևի ու Կամենևի, Սոկոլնիկովի ու Լաշևիչի պլատֆորմին։ Ժամանակն է, վոր ոպպոզիցիայի պլատֆորմի մասին էլ խոսենք։ Նրանց այդ պլատֆորմը բավական օրիգինալ պլատֆորմ է։ Ոպպոզիցիայի շարքերից շատ բազմազան ճառեր ասեցին։ Կամենևը մի բան էր ասում, մի կողմ էր քաշում,— Զինովյևն ուրիշ բան էր ասում, ուրիշ կողմ քաշում,— Լաշևիչը յերրորդ, Սոկոլնիկովը՝ չորրորդ։ Բայց, չնայած այդ բազմազանության, նրանք բոլորն էլ միաբանում եյին մի բանում։ Ինչո՞ւմ, վո՞րն է վերջապես նրանց պլատֆորմը։ Միակ ընդհանուր բանը, վոր լիովին միավորում է նրանց, Կենտկոմի քարտուղարության ռեֆորմի հարցն է։ Այդ տարօրինակ է ու ծիծաղելի, բայց այդ փաստ է։

Այդ հարցն ունի իր պատմությունը։ 1923 թվին, XII համագումարից հետո, «քարայրում» հավաքված (**ծիծաղ**) մարդիկ մշակեցին մի պլատֆորմ Պոլիտբյուրոյի վոչնչացման և քարտուղարության քաղաքականացման, այսինքն քարտուղարությունը քաղաքական ու կազմակերպչական ղեկավար մարմնի վերածելու մասին, վորպիսի մարմնի կազմի մեջ պետք է մտնեյին Զինովյևը, Տրոցկին ու Ստալինը։ Վո՞րն է այս պլատֆորմի իմաստը։ Ի՞նչ է նշանակում այդ։— Այդ նշանակում է ղեկավարել կուսակցությունը առանց Ռիկովի, առանց Կալինինի, առանց Տոմսկու, առանց Մոլոտովի, առանց Բուխարինի։ Այդ պլատֆորմից վոչինչ դուրս չեկավ վոչ միայն նրա համար, վոր նա այն ժամանակ սկզբունքազուրկ էր, այլև նրա համար, վոր առանց

իմ մատնանշած ընկերների ղեկավարել կուսակցությունն անկարելի չէ։ Գրավոր ձևով ինձ տված հարցին Կիսլովոդսկի խորքերից՝ յես բացասական պատասխան տվի, հայտարարելով, վոր յեթե ընկերները պնդում են, յես պատրաստ եմ ազատել իմ տեղն առանց աղմուկի, առանց դիսկուսիայի — հրապարակային կամ գաղտնի, և առանց փոքրամասնության իրավունքների յերաշխիք պահանջելու (**ծիծաղ**)։

Այդ, այսպես ասած, առաջին շրջանն էր։ Իսկ այժմ, ինչպես տեսնում ենք, հասել է յերկրորդ շրջանը, վոր հակադիր է առաջինին։ Այժմ արդեն պահանջում են վոչ թե քաղաքականացնել, այլ տեխնիկականացնել քարտուղարությունը, վոչ թե վոչնչացնել Պոլիտբյուրոն, այլ լիակատար իշխանություն տալ նրան։

Ի՞նչ կա վոր, յեթե քարտուղարությունը հասարակ տեխնիկական ապարատի վերածելը իսկական հարմարություն է ներկայացնում ընկ. Կամենևի համար, թերևս անհրաժեշտ է համաձայնել դրան։ Միայն թե վախենում եմ, վոր կուսակցությունը դրան չհամաձայնի (**ձայն՝** «Ճիշտ է»)։ Կլինի այդ, կկարողանա արդյոք տեխնիկական քարտուղարությունը վաղօրոք պատրաստել այն բոլոր հարցերը, վոր նա պարտավոր է պատրաստել և՛ կազմբյուրոյի համար, և՛ Պոլիտբյուրոյի համար—յես կասկածում եմ։

Բայց յերբ խոսում են լիակատար իշխանություն վայելող Պոլիտբյուրոյի մասին, այդպիսի պլատֆորմը միայն մի բանի յէ արժանի— յեփված հավի ծիծաղը շարժելու։ Մի՞թե Պոլիտբյուրոյի իշխանությունը լիակատար չէ։ Մի՞թե քարտուղարությունն ու կազմբյուրոն յենթարկված չեն Պոլիտբյուրոյին։ Իսկ կենտկոմի պլենո՞ւմը։ Ինչո՞ւ կենտկոմի պլենումի մասին չի խոսում մեր ոպպոզիցիան։ Չլինի՞ թե նա ուզում է Պոլիտբյուրոն դարձնել պլենումից ավելի իշխանություն վայելող։

Վոչ, մեր ոպպոզիցիայի բախտն ամենևին չի բանում քարտուղարության նկատմամբ նրա առաջադրած պլատֆորմի կամ պլատֆորմների խնդրում։

ՆՐԱՆՑ «ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ»

Հիմա ի՞նչ անենք,—կհարցնեք դուք.—ինչ ձեռնարկենք, վորպեսզի ստեղծված կացությունից դուրս գանք։ Այս հարցն զբաղեցրել է մեզ ամբողջ ժամանակ, ինչպես համագումարի ընթացքում, այնպես էլ համագումարից առաջ։ Մեզ պետք է կուսակցական շարքերի միասնականություն։ Ահա թե ինչումն է այժմ հարցը։ Ոպպոզիցիան ուզում է խոսել դժվարությունների մասին։ Բայց կա մի դժվարություն, վորը բոլոր մյուս դժվարություններից վտանգավոր է և վորն ստեղծել է մեզ համար ոպպոզիցիան. այդ կուսակցության միասնականության խախտման ու կազմալուծման վտանգն է (**ծափեր**)։ Ամենից առաջ այդ դժվարությունը պետք է հաղթահարել։ Մենք այդ բանը նկատի ունենք,

յերբ համագումարից յերկու օր առաջ դիմեցինք օպպոզիցիային համաձայնության կոմպրոմիսային պայմաններով, վորոնց կազմելու ժամանակ նկատի եյին առնված հաշտվելու հնարավորությունները։ Ահավասիկ այդ դիմումի տեքստը.

«Կենտկոմի ներքոստորագրյալ անդամները գտնում են, վոր կուսակցական համագումարի նախապատրաստումը Լենինգրադի կազմակերպության մի շարք ընկերներ կատարել են հակառակ կուսակցության Կենտկոմի գծի և ընդդեմ Լենինգրադում գտնվող այդ գծի կողմնակիցների։ Կենտկոմի ներքոստորագրյալ անդամները միանգամայն ճիշտ են համարում Մոսկվայի կոնֆերենցիայի բանաձևն ինչպես ըստ եյության, այնպես էլ ըստ ձևի, և գտնում են, վոր Կենտկոմը պարտավոր է յետ վանել կուսակցության գծի դեմ գնացող և կուսակցությունը կազմալուծող ամեն տեսակի և ամեն մի տենդենց։

Սակայն կուսակցության միասնականության, կուսակցության ներքին խաղաղության և կուսակցության Կենտկոմից ՌԿԿ լավագույն կազմակերպություններից մեկը, Լենինգրադի կազմակերպությունը խորթացնելու հնարավոր վտանգը կանխելու նպատակով՝ ներքոստորագրողները հնարավոր են համարում— յեթե համագումարն ամրացնի Կենտկոմի հաստատ ու պարզ քաղաքական գիծը — անել մի շարք զիջումներ։ Այս բանը նկատի առնելով, մենք մտցնում ենք հետևյալ առաջարկները.

1. Կենտկոմի հաշվետվության առթիվ բանաձև կազմելիս հիմք ընդունել Մոսկվայի կոնֆերենցիայի բանաձևը, մեղմելով նրա առանձին ձևակերպումները։

2. Լենինգրադի կոնֆերենցիայի նամակի, ինչպես և Մոսկվայի կոմիտեյի պատասխան-նամակի տպագրումը ինչպես լրագրերում, այնպես էլ բյուլլետեններում համարել միասնականության շահերի տեսակետից աննպատակահարմար։

3. Պոլիտբյուրոյի անդամներն իրար դեմ չպետք է դուրս գան համագումարում։

4. Համագումարում ճառերում շեշտել մեր տարաձայնությունը Սարգսի (կուսակցության կազմի կարգավորում) և Սաֆարովի (պետկապիտալիզմ) հետ։

5. Կոմարովի, Լոբովի և Մոսկվինի նկատմամբ թույլ տրված սխալն ուղղել կազմակերպչորեն։

6. Կենտկոմի վորոշումը՝ Կենտկոմի կազմի մեջ մի լենինգրադցի մտնելու մասին իրագործել համագումարից անմիջապես հետո։

7. Կենտրոնական օրգանի հետ կապն ուժեղացնելու նպատակով Կենտօրգանի խմբագրության կազմի մեջ մտցնել մի աշխատակից Լենինգրադից։

8. «Լենինգրադսկայա պրավդայի» խմբագրի (ընկ. Գլադնյով) թուլությունը նկատի առնելով, անհրաժեշտ համարել Կենտկոմի համաձայնությամբ նրան ավելի ուժեղ ընկերով փոխարինել։

Կալինին, Ստալին, Բուխարին, Ռիկով, Ռուձուտակ, Տոմսկի, Մոլոտով. Ձերժինսկի:

15/XII – 1925 թ»։

Ահա թե մենք ինչպիսի կոմպրոմիսս ենք առաջարկում, ընկերներ։

Բայց օպպոզիցիան համաձայնության չեկավ։ Նա խաղաղությունից գերադասեց հրապարակային և դաժան պայքարը համագումարում։ Այսպես է օպպոզիցիայի քաղաքականությունը։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՀԱՍՆԻ

Հիմնականում մենք այժմ էլ ենք մնում այդ դոկումենտի տեսակետի վրա։ Բանաձևի մեր նախագծում, ինչպես գիտեք, մենք արդեն մեղմել ենք ձևակերպման վորոշ կետերը՝ հանուն կուսակցության ներքին խաղաղության։ Մենք անդամահատության հակառակ ենք։ Մենք անդամահատության քաղաքականության հակառակ ենք։ Այդ չի նշանակում, թե պարագլուխներին թույլատրվելու յե, վոր անպատիժ կերպով կոտրատվեն ու գլխներիս նստեն։ Վոչ, այդ ներեցեք։ Պարագլուխների առաջ գլխարկ չենք հանի։ (**Բացականչություններ. «Ճիշտ է». ծափեր**)։ Մենք միասնականության կողմնակից ենք, մենք հակառակ ենք անդամահատության։ Անդամահատության քաղաքականությունը անընդունելի յե մեզ համար։ Կուսակցությունը միասնականության է ձգտում և նա կհասնի դրան ընկ. ընկ. Կամենևի ու Զինովևի հետ, յեթե նրանք կկամենան, առանց նրանց, յեթե նրանք այդ չեն կամենա (**բացականչություններ. «Ճիշտ է». ծափեր**)։ Իսկ ինչ է պահանջվում միասնականության համար։—Այն, վոր փոքրամասնությունը յենթարկվի մեծամասնությանը։ Առանց այդ բանի չի լինում և չի կարող լինել վոչ միասնականություն, վոչ կուսակցություն։ Մենք հատուկ դիսկուսսիոն թերթիկի դեմ ենք։ «Բոլշևիկում» դիսկուսսիոն բաժին կա։ Այդ միանգամայն բավական կլինի։ Դիսկուսսիայով չի կարելի տարվել։ Մենք մի կուսակցություն ենք, վոր յերկիր է կառավարում — այս մի մոռանաք։ Մի մոռանաք, վոր վերնախավում տեղի ունեցող յուրաքանչյուր տարաձայնություն արձագանք է գտնում յերկրում վորպես մի մինուս մեզ համար։ Ել չեմ խոսում արտասահմանի մասին։

Կենտկոմի որգանները, հավանաբար, կմնան նույն վիճակում, վորի մեջ ներկայումս գտնվում են։ Դժվար թե կուսակցությունը համաձայնի բեկել այն (**բացականչություններ. «Ճիշտ է»։ Ծափեր**)։ Պոլիտբյուրոն առանց այն էլ լիակատար իշխանություն ունի, նա բարձր է Կենտկոմի բոլոր որգաններից, բացի պլենումը։ Իսկ բարձրագույն որգանը պլենումն է, վորի մասին յերբեմն մոռանում են։ Պլենումը մեզ մոտ լուծում է բոլոր հարցերը և կարգի յե հրավիրում իր լիդերներին, յերբ նրանք սկսում են կորցնել իրենց հավասարակշռությունը։ (**Բացականչություններ. «Ճիշտ է»։ Ծիծաղ. ծափեր**)։

Միասնականության մենք պետք է հասնենք և կհասնենք, յեթե կուսակցությունը, յեթե համագումարը հաստատամտություն հանդես

A II/3972

բերեն ու յերկրում ազդեցության չենթարկվեն (**Ձայներ.** «Չենք յենթարկվի, մենք գնդակներ կերած մարդիկ ենք»). Յեթե մեզանից մեկն ու մեկը չափն անցնի, մեզ կարգի կհրավիրեն—այս անհրաժեշտ ե, այս պետք ե: Ղեկավարել կուսակցությունը կոլլեգիայից դուրս անկարելի յեվ հիմարություն ե այդ մասին յերազել Իլյիչից հետո (**Ծափեր**), այդ մասին խոսելը հիմարություն ե:

Կոլլեգիալ աշխատանք, կոլլեգիալ ղեկավարություն, միասնականություն կուսակցության մեջ, միասնականություն Կենտկոմի որգաններում՝ փոքրամասնությունը մեծամասնությանը յենթարկելու պայմանով—ահա թե այժմ մեզ ինչ ե պետք:

Ինչ վերաբերում ե Լենինգրադի բանվոր-կոմմունիստներին, յես չեմ կասկածում, վոր նրանք միշտ կլինեն մեր կուսակցության առաջին շարքերում: Նրանց հետ մեկտեղ ենք կառուցել մենք կուսակցությունը, նրանց հետ միասին ենք մեծացրել նրան, նրանց հետ միասին ենք բարձրացրել ապստամբության դրոշը 1917 թվի հոկտեմբերին, նրանց հետ միասին ենք հաղթել բուրժուազիային, նրանց հետ միասին ենք պայքարել և նրանց հետ միասին ենք պայքարելու մեր շինարարության ուղիներում դժվարությունների դեմ: Յես չեմ կասկածում, վոր լենինգրադցի բանվոր-կոմմունիստները յետ չեն մնա այլ արդյունաբերական կենտրոնների իրենց բարեկամներից այն կռվում, վոր մղվում ե հանուն կուսակցության յերկաթե, լենինյան միասնականության:

(Փոթորկալի, յերկար ժամանակ չդադարող ծափեր, ովացիաներ: Բոլորը կանգնում են «Ինտերնացիոնալ» յերգելով):

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0026178